

ՀԱՅՐԵՆՆԻՔԻ ԶԱՌԱԿՆԵՐԸ

Հրատարակելու է Հ. Վահան Յովհաննէսեանի կրթական, բարոյական եւ հայրենաշունչ պատմա-առնչական շարքը. հայ տուններուն գարթն է, մա-նուկներու երջանկութիւնը՝ իրենց հետաքրքրական բովանդակութեամբ:

Ամէն արտի յարմար հատորներ.

- 1.- ԱՆԻԷՆ ՔԱՐ ՄԸ ԲԵՐ
- 2.- ԱՐԳԻՆԱՅԻ ԶԱՆՔԱԿՆԵՐԸ
- 3.- ՍՄԲԱՏԻ ԳԱՆՁԵՐԸ
- 4.- ՇԵՄՔՈՐԻ ԱՓԻՆ
- 5.- ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՅԵՂԱՓՈԽՈՒՓԻԻՆՆԸ
- 6.- ԳԱՅԻԱՆՆԷՒ ՎՐԷՓԸ
- 7.- ԼԵՐՆԵՐՈՒ ԵՐԳԸ
- 8.- ԲԱԿԻՆ ՊԶՏԻԿԸ
- 9.- ԼԵԶՈՒՆ ՈՐ ԿԸ ՄԵՆՆԻ
- 9.- ՓՈՔՐԻԿ ՍԱՍՈՒՆՅԻՆ

(Շարունակելի)

ԼԵԶՈՒՆ

ՈՐ ԿԸ ՄԵՆՆԻ



Հայրենիքի

Չարագիտերը

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ

ԹԻՒՆ

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵԱՆՆԵԱՆ

ԼԵԶՈՒՆ ՈՐ ԿԸ ՄԵՌՆԵՐԻ

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

— Կամօպ կամօպ մէկ դեր զգծիմ ըի Լա զգծիտ զանք, գան-
ւանքն, Լաու Մինաս, մաշոճ կամօպ համբոտի բագոցին
կրա՛ր երկարելո՛ւ: Հալաստանն գանթիան Պէլլուէ կե-
կանք, ալս թիթիէն տնակն գտանք, փառք Աստուծոյ,
տանիք մ'ունչինք անճրկէն պատաստարարուելու. պղտիկ
խանութ մ'որ քանի մէկ օրօրօր ըիկ հոտաւ շա՛հ շա՛հ շա՛հ շա՛հ:
Ձեր մ'օր քանի մ'ը սոկինք ըի, ըի, ըի, ըի, ըի, ըի, ըի, ըի, ըի,
մալուցս ծախելինք, խանութ բանք: Հոգ է, թող
մեր վրակն սոխի, սխտիկն սոս կէ. խանութին ծու-
կը, մուր մեր երեւելուն իսկ մ'նալ. կամօպ կամօպ
պիտի Լանանք. խուանք օր մ'ը տն տէջ ըլլանք, կե-
ղրոնին մէջ մեքենաներու լաճատանոց մ'ը բանանք:

— Ամէն օր նոյն բանը կ'ըսես, պատասխանեց կի-
նը, եւ սակայն մատ մ'առաջ չգացինք: Աճօթ կը գլոր
ալս թիթիէն տակ բնակիլ, մեր դրացիներն շատեր
ուրիշ թաղեր գանին, նոր տուն բանին եւ մենք տա-
կան հոս ենք: Յոշոր մանչեր ունինք, հատուն աղլիկ,
ամէն մէկը սննետակի պէտք ունի, պատաստ լաթեր
կախեր ենք մէկը մ'ըսինք բաժնելու: Ասիկա կեանք չէ,
Մինաս, բոշաները մեզից լաւ կ'աղբին:

Մինաս պատասխան չուուաւ, շատ լսեր էր կնոջ

կը բլբլ տղետախան շահեմարմար մը անուխ դնելու համար :
Հինդ անդամ դնաց եկաւ , շախախտ անուխ փոխառեց .
Հինդ անդամ խանութը բացաւ ու գոցեց : Ստեբրուն
մատնեցին խանութը եւ պատուած կօշիկներէն
մուր ինկած էին , կը քաշէր ցեղին մէջ : Վէրջին բեռն
շարժեց խանութի կը դառնար , երբ Աւետար տեսաւ . դռն
տակ մը մէջ անմահադուռը կը խաղար հասարակներու
հետ : Մինասին սրկումը ճարեցաւ . գրեթէ լակ եկաւ . ինք
արին քրտինքի մէջ էլ Աւետար տեսաւ մանչ
հմտառի մը : Երբ Աւետար տեսաւ իր
տակ մը մէջ անմահադուռը կը խաղար հասարակներու
հետ : Մինասին սրկումը ճարեցաւ . գրեթէ լակ եկաւ . ինք
արին քրտինքի մէջ էլ Աւետար տեսաւ մանչ
հմտառի մը : Երբ Աւետար տեսաւ իր
տակ մը մէջ անմահադուռը կը խաղար հասարակներու
հետ :

Երեկոյան , Մինաս հինդ դահեկան վատտած էր
տուն երեսու եւ կնոջը յանձնեց : Բաւական դամ էր ժող
մանակին համար : Նա շատ ունեւ էր . երկրակալու իր
հին բարձրին լով . թեթիկ կարճաւուն փափաք
չունէր : Ընթրիքը շատ ունեւ էր . Աւետար տեսաւ
Արդ երեկոյ պատանին շատ ունեւ դարձաւ : Վրան
վուրը ցեղաւ էր . կօշիկները պատուած էին : Աւետ
արդ մօրը քոյկ եւ ուտելիք ուղեց :

Մինաս խորհեցաւ մեղք խօսքերով տղուն սրտին
դուլել : Աւետար սրտ չէր , լայն տկար կամք ունէր .
ցրտած էր եւ աշխատանքի փափաք չէր դրար : Գիւրաւ
կը հետեւէր փողով ընկերներուն : Երբէք չէր խորհել
թէ պէտք է աշխատել սուրբու համար :

Սուրբ էր , տղաս , հարցուց հայրը տկար շեշտով :
Խանութ չեկար , եւ հայրը անուխ պարկը շախախտ
դնաց ու եկաւ :

— Հայրիկ , անդերէն կը սորվէի . ընկերներս լսին
թէ այդ Լեզուն տառա դրամ կը բերէ :

— Այո , լաւ կ'ընես անդերէն սորվելով . դժբախտ
տարար ուրիշով կը սորվէիր անմահադուռով դաշտին մէջ :
Նախ , վրով դուրս գետա , պատուած , կամեն թէ
փողովն մէջ դրուելու ես : Ես քեզ տեսայ , դաշտին մէջ ,
դուն ալ դիտեսար . տեսար հայրդ , անուխի պարկը
շախախտ : Սիրտդ բան մը չըսա՞ւ , խիղճդ չգարկա՞ւ ,
աչքերդ արցունք չտու՞ին : Քու հայրդ շախախտ անուխ
կը կրէր քեզի պատու մը հաց տալու համար եւ դուն . . .
դո՞ւ պարտ :

Տղան դուրս կախեց եւ նստած տեղը դառնաւ
մնաց : Կամեն թէ սրտին մէջ յեղատարութիւն մը ծա-
ղեցաւ : Աչքին սուճեւ եկան ընկերները , անմահադուռով
դաշտին մէջ ուրախ դուրս , ի կատակներով , շատ
անդամ հասարակ խօսքերով եւ սպա իր հայրը անուխի
պարկը ուտին , բեռան տակ կքած , քանի մը դուրս
տուն տուելի բերելու համար , փոխանակ փոխադրու-
թեան ծախքին :

— Մայրիկ , երէկունն ինդրած դրամս մի՛ տար ,
ե՛ս պէտք է վատակիմ :

— Քու բարեբիւ համար է , պատասխանեց մայրը ,
խաղաղ ինդրով տուն չի շինուիր : Հայրդ ամէն գո-
հարկին կ'ընէ քիչ մը վատակելու , որ կեդրանական
տեղ մը խանութ բանեք , սպասե՛ք այս ցեղաւ թա-
ղէն , այս ժանդատած թէթեղներէն , մարդու կարգ ան-
ցնինք :

— Գուրպանըս կարկանդակ , վարդուհի : հարցուց
Մինաս :

— Հայրիկ , հաղա այս ստուեակը հիւսեմ վերջա-
ցնեմ՝ կը կարկանդակ :

— Այո՛ , աղջիկս ստուեակդ հիւսէ , գլխարկ մը չի-
նէ , շրջագրեալ կարէ , շրթներուդ ծախքը դնէ , աչքե-

բուղ անդալը, յետոյ եթէ ժամանակ ունենաս՝ հօրք
դուրսդանենք կարէ:

— Մինաս, տղաներուն քունը մի՛ խանդարեր. ա-
մէն երեկոյ նոյն բաները կ'ընես. ըսի թէ ես կը կար-
կրտեմ դուրսդանենք, հարկ տամանակ դանձմ:

— Ճիշտ է, պէտք է ստիճիչին երթաս մտղորդ յար-
դարես, Մինասը թող բուրիկ քայլէ, հոգ չէ, այս թա-
ղին մէջ շատեր կան իրեն պէս:

— Տարին անդամ մը մտղորդ շտիկել կու տամ, ան
ալ շո՞տ կը տեսնես: Տես սա մեր դրացուհիները, մէկ
մաղ մը կարծես դուրս չունին, կարծես թէ սեւ մետաք-
սէ թել քաշեր են:

— Ճիշտ է, կրննիր որքան տարիք առնեն, այնքան
աւելի պէտք է գաղափարուն. բան չեմ ըսեր, դուրսդ-
աներս թող ծակ մնան, դեռաներս մըրտ եւ պատուած,
թաղին մէջ շատեր կան այդպէս:

— Հայրիկ, վաղը ե՛ս կ'երթամ խանութը բանա-
լու, դուն տունը կեցիր, յողնած ես, ըսաւ Աւետ:

— Մի՛հրանին մեքենային ալ խելքս չհասաւ, աւել-
ցուց Մինաս, ստիճանը անցան քանի մը թիթեղ, քանի
մը ժանգոտած երկաթի կտորներ կը փակցնէ, կը քա-
կէ, կարծես թէ բախտի խաղ կը խաղայ: Եթէ խանու-
թին համար այսքան աշխատած ըլլաք, հիմա կեդրոնը
լաւ վաճառանոց մը բացած կ'ըլլալինք եւ սո՛քն բան կը
ծախենք:

— Մեր խանութին մէջ եթէ մէկը մտնէ, միւսները
դուրս պէտք է ելլեն, երեք հոգիի տեղ չկայ: Դուն եւ
Աւետը կը բաւէք, շատ ալ էք: Եթէ յաջողիմ սըճա-
ղացը չլինել, քու խանութիդ պէս հաղար հատ կը գնեմ:

— Յոյսեր, պարագայ յոյսեր, պատասխանեց հայրը:

Հոգ չէ, ես դարձեալ ամուսնը շարակս կ'առնեմ ձեզի
պատու մը հաց բերելու համար:

Ընտանեկան կրօնները մէյ մը հարուստներուն տու-
նը կը պատահին՝ նախնայի եւ բարոյականի համար,
մէյ մը աղքատներուն տունը՝ դրամական նեղութեան
համար: Մինաս աշխատասէր եւ բարի մարդ էր. հոգ-
ուով կապուած էր իր ընտանիքին: Իր դանդաղները սի-
րոյ արդիւնք էին, կուզէր որ ընտանիքը դեռ աւելի
հանգիստ ապրէր: Երեք ուժեղ էին, կրնային միացնել
եւ օրապահելէն աւելի բան մը շահիլ՝ վաճառանոց մը
բանալու համար:

Աւետ իր խօսքը պահեց, ուղղակի տունէն խանութ
գնաց: Ինքը բացաւ դուռը, յատակը աւելց, փայտերը
կրկիկ չարեց, ամուսի դէզը կանոնաւորեց եւ դրան
վրայ յաճախորդի սպասեց: Եկաւ պատու կին մը.

— Մինաս աղբարն ո՞ւր է, հարցուց, քիչ մը ա-
ծուխ պիտի գնեմ, բայց բնչպէս տուն փոխադրեմ, ես
պատու եմ, ոյժ չունիմ: Միշտ Մինասը տունս կը փո-
խադրէր: Ո՞ւր է, ե՞րբ կու գայ:

— Քանի՞ քիւրյ կուգես, նանի, ես Մինասին տը-
ղան եմ:

— Ո՞ւր է, բայց քեզ բնաւ չեմ տեսած այս խանու-
թին մէջ:

— Այո՛, ես Եւրոպա գացեր էի, նոր վերադարձայ:
Սուտ խոսեցաւ:

— Ամէն մարդ Եւրոպա կը վազէ, ըսաւ պատուը,
դուն բնչ խելքով ես եկար:

— Ծնողքին կարօտը, նանի, չե՞ս դիտեր թէ ինչ
ըսել է կարօտ, պիշըը քուն չունէի, ցորեկը հանգիստ
չունէի, միշտ հայրս, մայրս միտքս կու դալին:

— Քիչ մը սպասեմ որ աղբար Միճասը դայ եւ ածուխ փոխադրէ:

— Նանի, ես կը բերեմ: Տունդ շատ հեռո՞ւ է:

— Ո՛չ, հեղաւանին մէջն է, երեք փողոց անդին: Ի՞նչ պիտի վճարեմ:

— Յիտուն քերտ, տասը դուրուշ փելոն, կ'ընէ վեց դահեկան:

— Լաւ հաշիւ քէ, տղաս, ես գեւե կարգաւ չեմ դիտեր, բայց մտքով հաշուեցի որ հինգ դահեկան կ'ընէ:

— Ճիշտ ես, նանի, ես չփոթեցայ, մտանքը ուս վրայ սխալ հաշուեցի:

— Դունն կարգաւ, գրեւ չե՞ս գիտեր:

— Ո՛չ, ջուրի պէս կը կարգամ եւ ջուրի պէս կը դրեմ, Փրանսեիէն ալ գիտեմ, անդիւիէն ալ գիտեմ:

— Վա՛խ, վա՛խ, գոռ ըլլամ, եւ քեզի պէս խելարտղայ մը այս մրտա կրպակի՞ն մէջ...

— Ի՞նչ ընենք, նանի, դաղթական եկած ենք, պէտք է աշխատինք, գործը ամօթ չէ, չգործելը ամօթ է:

— Հա՛ աղբպէս է, տղաս, ի՞մ Սարգիստ պէտք է քեզմէ դաս առնէ, ծով ծով փողոցները կը շքլի: Աւետ անունով ընկեր մը ունի, միշտ անոր հետ: Ա՛խ, այդ Աւետը փորձանք է:

Աւետ սարսուռ դգաց, Սարգիսը իր սիրելի ընկերներէն էր, փողոցի ընկերը, որուն հետ մէկ երկու տարի է անըստան շքլած էր քաղաքին ամէն կողմը եւ ըստահակի անուն հանած էին:

— Երթանք, նանի, դուն առաջ անցիր ճամբայ ցոյց տուր: Աստուծոյ աղօթք ըրէ, օր մը Սարգիսդ ալ մարդ կ'ըլլայ, չըլլալիք բան չէ, խափշիկ չէ որ օճառ քսես՝ ճերմակ չդառնայ:

— Բերանդ պագնեմ, երանի թէ: Մէյ մը սա Աւետ

ընունքը ձեռքս լծար, եղունգներովս միտերը պիտի բղբուկի, սա ի՛նչ մօր դաւակ է: Քաղնեք տղաս, ճամբան խօսինք:

Աւետ խանուիքը գոցեց եւ պարկը ունն տաւ:

— Քաղնեք, մայրիկ, պէտք է շուտ վերադառնամ, կրնայ ուրիշ յաճախորդ գալ:

— Կ'ըսէի թէ սա Աւետին ըրածը չմնաց, ի՞մ տղա ալ հետը քաշեց, չարը չարին հոսը շուտ կ'առնէ: Սարկամ քայրիկը կը գանդատի, Սրբուհի քայրիկը կը գանդատի, սանամարը Համասը կը գանդատի, հասած աղջիկներ ունին, ամօթ չէ՞, փողոցներէն չեն կրնար անցնիլ:

— Երիտասարդ են, մայրիկ, դարձանալու չէ: Մինչ Աւետ ամուսնը չաղկած կը տանէր, ճամբան իր ընկերներէն տմանց հանդիպեցաւ: Մէկը եկաւ եւ պարկին անկիւնէն քաշեց:

— Ի հա՛, ի հա՛, իչու ճայն հանեց ու հեռացաւ:

— Չէի գիտեր թէ թաղին մէջ էջեր ալ կան, ըստ պատար: Առնեք ալ անոնցմէ պիտի ըլլան:

— Աւետին ընկերներէն են, մայրիկ, կարեւորութիւն մի՛ տար: Աւելի լաւ է աշխատող էջը, քան դատարի մարդը:

— Սուրբի խօսք, եկուր, դուստթ մը օղի տամ, յոգնեցար, տղաս:

— Ո՛չ, նանի, ես օղի չեմ խմեր, սրճարան չեմ երթար: Գործէն աւելի լաւ բան չկայ:

— Երանի՛ աչն մօրը՝ որ քեզի կաթ տուեր է: Ա՛խ, Սարգիսա, Սարգիսա, երանի՛ թէ քեզ տեսնէր, ճակատիդ քրտինքներն համկէր:

— Ես պէտք է շուտով ետ դառնամ, խանուիքը գոց է, յաճախորդ կրնայ գալ:

Մինչ Աւետ պատուին հետ ածուխ կը տանէր, հայրը խանութ հասաւ եւ դուռը դոց դտաւ:

— Անշնորհք, զիս խաբեց: Ով զիտէ ո՛ւր կը սլւքտայ: Արգէն սուտը քթէն կը վազէ:

Ուժուով աքացի մը զարկաւ եւ խանութին դուռը ետ շրջեց: Այդ վայրկեանին Աւետ հասաւ:

— Հի՛մա կու գաս, պրտաց փողոցին մէջ:

— Այո, հայրիկ, պտաւ մը յետն քելլոյ ածուխ գնեց, տարի յանձնեցի եւ եկայ: Ահա հինգ դահեկան, ածուխին զինը:

Հայրը պող քրտնք մը ունեցաւ, վայրկեան մը կեցաւ եւ ապա դրկելով տղան ըսաւ.

— Ներէ ինձ, գաւախ, ես յանդուզն դատաստան ւրի, յանցաւոր եմ, դուն մէկ օրէն միւսը հրեշտակ դարձար:

— Ո՛չ, հայրիկ, ես եմ յանցաւորը, այսքան տաւրիններու դատարկ կեանք մը քեզի իրաւունք տուաւ այդպէս խորհելու:

Դրան ծինինները տեղերնէն ելած էին. Աւետ մուրճ տաւ եւ լաւ մը գամեց իրենց տեղերը: Մինստ խանութը մաքրուած եւ կարգաւորուած տեսաւ. աչքերն ուրախութեամբ լեցուեցան, կարծես թէ նոր մանչ դաւակ մը ունեցաւ: Քիչ վերջ պտաւը ետ դարձաւ.

— Տղաս, ըսաւ, ես վեց դահեկան ունէի, հի՛նքը քեզի տուի թէ վեց հատ. քովս դրամ չկայ:

— Հոս, նանի, հինգ դահեկանները հայրիկիս քովն են:

— Այո՛, տղաս հինգ դահեկան յանձնեց:

— Հասկցայ, նանի, հասկցայ. վա՛յ անպիտաններ: Երբ աչիս տղաներէն մին պարսիս քաշեց, միւսը քեզի ուժով մը քսուեցաւ եւ այդ վայրկեանին, դուն չզգացիր,

դողի արհեստ է, միւսը զրպանէդ զրամն տաւ ու հեռացաւ: Կը յիշե՞ս ինչպէս ուժով քեզի զարնուեցաւ:

— Այո՛, քիչ մնաց գետին էյնայի: Գեղին ջրերը թափին, կիբածը թոյն ըլլայ, հողը փորեմ գերեզման շինեմ, սաստանան հետը խաղայ: Հի՛մա ի՞նչ ըսեմ ա՛մուսինիս, խեղճը բեռնակրութիւն կ'ընէ, մէջքը գետին հասած է, հաղիւ օրը մէկ երկու դահեկան կը վատըկի: Քիչ մը բակլայ եւ ձէթ պիտի դնէի, բան մը սուղեւը դնելու համար:

— Ա՛ւ, Ծուշան քոյրիկ, դահեկան մը, օր մը երբ ունեցա՞ւ ետ կու տաս. եթէ աղքատն աղքատին չօղնէ, հարուտը մեղ անօթի կը ձգէ: Գաղթական հայեր ենք, մեր ցաւերը մենք դիտենք:

— Ծնորհակալ եմ, Մինստ աղբար, թող Աստուած քեզ երջանիկ ընէ այս հրեշտակի պէս տղուդ հետ: Ա՛մուսինս բեռնակրութիւն կ'ընէ, իսկ իմ Սարգիսս ո՛վ զիտէ այդ Աւետ կոչուած սրիկային հետ ո՛ւր կը թափառի:

Աւետ կտաւ-կարծիր դարձաւ: Մինստ յանկարծակի կիւտ եւ տղուն նայեցաւ. իր մէջ զգացումներու յորձանք մը սկսաւ, զպեց ինքզինքը, գտաւ իր դէմքը եւ պտաւին դանձաւով ըսաւ սիրալիւ շեշտով.

— Ծուշան քոյրիկ, մի՛ յուսահատիր, օր մը Աստուած տղուդ աշնպիտի քար մը կը քաշէ՛ որ խելըդ դուրս կու գայ: Գուն, հայրը չէ՞ ք խրատեր, բան չէ՞ ք ըսեր:

— Կ'ըսենք, Մինստ աղբար, կ'ըսենք, սեւին տապօնն ի՛նչ, խելին խրատն ինչ: Օր մը հայրը զինքը տունէն դուրս դրաւ: Գիշերն ամբողջ դրան առջեւ հեծկըլտաց: Մեղքացանք, ներս առինք. գաւակ է, ի՞նչ է՛նենք. սկրտ է, ի՞նչպէս գիմանանք: Ի՛նչ ըսեմ այդ Ա՛-

ւետ կոչուած տարւն, իր չար օրինակով մեր տունը քանդեց: Տղատ յաճախ բարի առաջադրութիւններ կ'ընէր, այդ Աւետը զինք հողիւ փողոցին մէջ տեսնէր, չար ուղին կ'ըլլար, կը քաշէր ու կը տանէր: Հոյեմ այդ տղան զլուսիւր, խամաճ կաթը թոյն ըլլալ:

— Մի' անիծեր, Շուշան քոյրիկ, մի' անիծեր: Լաւ քրիտոնեան աղօթքով չարերը ճամբու կը բեռնէ, ո՛չ անկէ՛քով: Դուն կը ճանչնա՞ս այդ Աւետ կոչուածը:

— Չեմ ճանչնար, Մինաս աղբար, չեմ ճանչնար, հողիս վառած է:

— Տղադ վաղը ինձի զրկէ, ըսէ թէ Աւետը քեզ կ'ուղէ Մինասին խանութին առջեւ, թերեւս հրաշք մ'ընեմ:

— Ատուում տայ, Ատուում տայ, պատասխանեց պառաւը եւ գնաց:

— Տեսա՞ր, աղբար, ըսաւ Մինաս, չար կեանքը ի՛նչ աւերներ կը դարձէ, ի՛նչ մայրեր կը լացնէ: Սեռիճ մարդ մը մէջըը գետին դրած, բեռնակրութիւն ընէ եւ դատարկ աղու մը բերանը կըտացնէ: Դուն լաւ տկար, նայէ որ չարունակես: Մշակին պէս եղբր, մի' նայիր ետեւդ թէ ի՛նչ տկու ձգեր ես աբոջով, այլ առջեւդ նայ, կորելիք ճամբան է կարեւորը:

Այդ վայրիկեանին, աղջնակ մը եկաւ եւ վառելիք փայտ ուղեց:

— Յիսուն քերոյ, մայրիկս ըսաւ թէ չոր ըլլան: քանի՞ կ'արժէ քելոն:

— Երկու դուրուշ կ'արժէ, աղջիկս, պատասխանեց Մինաս. չոր, լուցիկի պէս կը բռնկկն:

— Փոխադրութիւնը ձեր վրան է, այնպէս չէ՞, ըսաւ աղջիկը:

— Ես կը բերեմ, աղջիկս, ըսաւ Մինաս:

— Փայտերը կշռեց եւ խոշոր խուրճ մը կապեց:

— Հայրիկ, դուն կեցիք, ես կը տանիմ, խնդրեց Աւետ: Չեր տունը զխտեմ ես, Հարթ Սիւս կոչուած թաղն է:

Ճամբայ ինկաւ աղջկան ետեւէն, հաղիւ երկու փողոց անցած էր՝ լախտ մը զինքը տեսաւ:

— Ի՛յ, Աւետ, փայտը չալկած տնիկեսայ կ'երթես, պոտաց ետեւէն:

Աւետ թուրը կլլեց, պատասխան չտուաւ. վար դընէր բեռը եւ երթար վզին չոփէր: Հաճեցրեց տղան եւ ինքնիրեն խորհրդածեց:

— Ատուակը պէտք է շարունակ վազէ, իր մէջ թափած պոտատութիւնները մաքրելու համար. իմս ալ այդպէս է: Աճէն քայլափոխիս անխելք յիշատակ մը ունիմ:

Հախառակ իր թոյլ նկարագրին, Աւետ աճէն ջանք թափեց յամառորէն շարունակել իր նոր ճամբան: Մինաս աճէն օր նոր մղում կու տար իր քայլերուն. միշտ աչքի տակ առած էր չար բնիկներէն հեռու պահելու: Գիտէր թէ Աւետ զիւրաւ կը սահէր: Այդ օրը լաւ տեսնուող ըրին. Մինաս դո՛՛հ էր, Աւետ ուրախ աչքեր ունէր, նման այն մտորուկին՝ որ առաջին քայլերը խանդով կ'առնէ եւ երբ երթալիք տեղն հասնի՝ հսկայ սուտումներ կ'ընէ:

Երբ տուն դարձան, Միհրան եւ վարդուհի՛՛ Մինասի բազմոցին վրայ նստած, Փրանսական պատկերազարդ թերթի մը վրայ ինկած՝ էջերը կը դարձնէին, այնքան զբաւուած էին որ չանդրազարձան թէ երկու հոգի ներս կը մտնէին: Մինաս վարագոյրին ետեւ հագուեցաւ իր զիւրեանոցը, լուաց ձեռքերը եւ մտեցաւ աղջկան ու մանչուն:

մէջ հայերէն կը խօսէին, աշխարհիս լեզուներուն թա-
դուհին է:

— Մինաս, հին առասպելներ մի՛ պատմեր, պատաս-
խանց կիրնը. վրադ կը խնդան: Մարդիկ լրենց երէկ-
ուան կերածը չեն դիտեր, զրա՞խալ պիտի գիտնան:
Ով գիտէ քանի հազար տարիներ առաջ, բերնէ բերան
խօսք մ'անցեր է եւ դուն ալ կը հաւատաս:

— Կնիկ, սուրբ Գրքին մէջ գրուած է, սուրբ Գիրքը
սո՞ւտ կը խօսի. Տէր հայրն ալ չէ՞ր պատմեր թէ՛ զը-
րախախէն չորս գետեր զուրս կ'ելլէին, Տիգրիս, Եփրատ,
Արաքս, ձորոխ. այս գետերը Փրանսա՞ կը գանձուին:
— Տէր հայրը գաւառին մէջ գիտուն էր, հոս մէկ
զուրուշ չ'արժեր:

— Ատով սո՞ւտ պիտի հանես թէ նոյ Արարատին
վրայ չ'ըջաւ, ալլ քու Փրանսայի մէջ տապանը կեցաւ:

— Ատ ո՞ւրտեղէն հանցիր, պատասխանց Սի-
րարիի:

— «Բագմալէպ»ին մէջ գրուած է. ասոր դրոշները
գլուխ ունին. լիրը պատկերներ չեն հրատարակեր, ալլ
խմատուն բաներ. գիտութիւն, խելքի հանող միտքեր:
Երեք տղաները մտիկ կ'ընէին. վարդուհի մօրն ի-
րաւունք կու տար, Աւետ հօրը կողմն էր. Միհրան մէջը-
տեղ մնացած էր. հայրենի լեզու, օճա՞խ, թէ՛ օտար աչ-
խարհ:

— Լաւ բան է հայրենիքը, Հայաստան, լեզուն, սա-
կայն գիտութիւնը Եւրոպայէն կու դա՛յ, մտածեց ինքն-
իրեն:

— Չմտնանք Աւետս, ըսաւ հայրը, վաղը այդ Սար-
գիս կ'ըջուած փողոցայինը լաւ մը զգենք որ մարդ Ըլլա՛յ:

— Ո՞վ է Սարգիսը, հարցուց կինը:

— Այդ թերթի պատկերներուն պէս տկար մէկը,

որուն հայրը բեռնակրութիւն կ'ընէ, իսկ ինքը փողո-
ցային դարձած՝ մայրը կը լացնէ:

— Հայրիկ, ըսաւ Աւետ, լաւ է որ երեսը չտանձեմ:
— Ինչո՞ւ, կը վախնա՞ս:

— Չեմ վախնար, բայց փողոցէ փողոց պիտի պո-
ռայ թէ՛ Աւետը, հերոս Աւետը հօրմէն ծեծ կերած, սըմ-
գած եւ ամխալաճառի աչկերտ եղած է:

— Հոդ մի՛ ըներ, ես կը հասկննեմ:

Յաջորդ օրը Սարգիս եկաւ Մինասին խանութը:

— Աւետը հո՞ս է, հարցուց:

— Այո՛, հոս է, ներս մտիք, աղաս, պատասխանց
Մինաս շատ քաղցրութեամբ: Դուն Աւետը կը ճանչ-
նա՞ս:

— Տարիներու ընկերներ ենք:

— Լա՞ւ. ընկերներ՝ թէ՛ դէշ ընկերներ, հարցուց
Մինաս:

— Չեմ գիտեր, պատասխանեց Սարգիս, գլուխը
կախելով:

— Ես շատ լաւ գիտեմ, քանի մ'օր առաջ ես կու
լա՛յի, երէկ քու խեղճ մայրդ եկաւ եւ հոս լացաւ: Կը
սիրե՞ս քու ծնողքդ:

— Կը սիրեմ, ի հարկ է:

— Մէլը դորձ է, խօսք չէ: Դուն չես սիրեր քու
խեղճ հայրդ որ մէջքը ծռած բեռ կը կրէ. դուն չես սի-
րեր քու մայրդ՝ որ չի գիտեր թէ՛ ինչ հարցով օրն ան-
ցընէ: Հիմա ես առաջարկ մ'ունիմ. քեզի հինգ դահե-
կան կու տամ եթէ այս պարկ մը ամուսնը շարկես եւ
մ'օրդ տունը տանիս:

Սարգիս նախցաւ սեւ պարկին, գլուխը քերեց, մը-
տածեց, մտածեց եւ քսաւ.

— Ես հինգ տարուան մէջ հինգ դահեկան չեմ վառ-

արկած: Ծառ լաւ, կը տանձեմ, բայց նայէ, հինգ դա-
հեկանէն մէկ դուրուչ պահա չեմ առներ:

— Գլխուս վրայ, պատասխանեց Մինաս: Հինգ դա-
հեկան բոխ, հինգ դահեկան կու տամ:

Սարգիս շալկեց ածուխի պարկը, Մինաս ետեւէն՝
ճամբայ ինկան: Քաղեցիները բոլորն ալ Սարգիսը կը
ճանչնային. դարձացած կը նայէին. իր ընկերներէն ու-
մանք ալ տեսան, եւ քծիծաղով նայեցան, ծաղրական
ձեւեր ըրին եւ իրարու բռն:

— Աս ալ ածուխով սկսաւ, վաղը ձեռքէն կը շոր-
թնեք:

Սարգիս որոշ չընց, բայց հասկցաւ թէ իր վրան
կը խնդային: Անտոնը, Նուպարն ու Ռաֆֆին էին, ու-
րոնք աւելի ստամոնդիկներ էին. փոքրիկ գողութիւն-
ներ ալ կ'ընէին, թող կամքով բնկերները կը շահա-
դորձէին խաբելով, ամօջնելով, խաղալով:

Հասան Ծուշան մայրիկին տունը: Կինը դրան տու-
ջեւ կանգնած հին կապիւտ մը կը թօթուէր: Փռչիլ մէջն
էր: Սարգիս պարկը գետին դրաւ եւ քրտինքը սրբեց,
մայրը դարձացած նայեցաւ, աչքերուն Հաւատաց թէ
Սարգիս բեռ կրնայ կրել: Դարձաւ Մինասին եւ քսաւ.

— Մինաս պրար, աս թո՛նչ ածուխ է, ես բան չեմ
ապագրած, դեռ երէկ դնեցի: Ո՞ւրտեղէն դուստր այդ
վայրէ կըր:

— Ես ածուխ չեմ բերեր, տղադ կը բերեմ: Մար-
դիկ ալ շատ անդամ անասունի պէս են, փորէն բռնե-
լու է:

— Առաջին անգամ կը տեսնեմ Սարգիսս բեռան
տակ, հաւատամ:

— Այո՛, հաւատամ, ծող կը քաղեցնելու համար,
տուջեւէն խուրճ մը խոտ կը տանին: Քեզի համար չէ,

տղաս, ստակ է, խմատուն ստակ, դարձաւ Սարգիսին:
Սխալեր եմ, մայրդ ածուխի պէտք չունի եղեր. հիմա
շալկէ խանութ դառնանք եւ դրամդ առ:

— Մամա՛, դաւաթ մը ջուր տուր, սիրտս կը վա-
ռի, շատ ծարաւ եմ, քսաւ Սարգիս:

— Հաւատալու չի դար, մեր Սարգիսն ածուխ չար-
կէ, քսաւ մայրը ջուրն երկարելով: Ընոր՜է, տղաս, հայ-
րդդ ամէն օր քրտինք քրտինքի վրայ կը թափէ բեռնե-
լուն տակ կքած: Երջանկութեան ճամբան քարտու է,
քսաւ մեր Տէրը, երանի՛ր անոր որ կատարը կը հանի:

— Ծալիկ, տղաս, խանութ վերադառնանք, քսաւ
Մինաս:

Ածխալածաւր Սարգիսի արին համրեց հինգ դա-
հեկանները: Ամէն մէկ արծաթ դահեկան, պատանիին
աչքերուն մէջ նոր փայլ մը կու տար:

— Հինգ դահեկան, հինգ դահեկան, գոչեց ուրա-
խութեամբ, գոց արին մէջ սաչեցնելով դրամները. յե-
տոյ աներեւութացաւ:

— Հայրիկ, քսաւ Աւետ, լաւ չըրիր դրամը ձեռքը
տալով, պիտի տանի խաղալու եւ խմելու:

— Եթէ միջուկը փտած է, քսածիդ պէս պիտի ընէ,
եթէ միայն կեղուր փտած է՝ մօրը կը տանի:

Մինաս ինքն ալ մտածեց թէ ըրածը անխելք փորձ
մ'էր, հինգ դահեկան իրենց համար մէկ օրուան կեանք
էր, ինչո՞ւ ծողը նեւեռել ձուկ մը բռնելու համար: Բայց
եթէ պատանին շահէր, հայ տուն մը փրկած կ'ըլլար.
Թշուառ մայր մը, յոգնած հայր մը, ալ պիտի չլային
ստահակի մը համար:

Յաջորդ երեկոյեան, շարաթ էր, Մինասին խա-
նութն եկան Ծուշան քոյրիկն ու բեռնակիր ամուսինը:
Թեղուկ մարդ մ'էր, Սահակ կը կոչուէր, այտուկները

դուռս պրտած, մէջքը ծուռ, մոխրագոյն թաւ պեխեր
եւ աւելի թաւ մազեր իր դէմքը կը շրջանակէին: Շատ
լարի մարդ կը տեսնուէր, թշուառ կեանքին նազանդ,
մըջիւնին վրայ կոխէ՛ր՝ խղճ կ'ընէր: Թաղեցիները
զինքը կը սիրէին, ոչինչ բեռ մ'ալ կը յանձնէին որ տուն
տանէր, ձեռքը բան մը տալու համար:

— Ի՞նչ ըլլել, Մինաս աղբար, բաւ Շուշան, չը-
րա՞ չք ըլլել, օրհնեցի՞ր տղաս, կախարդեցի՞ր, որ չի՞նդ
դահեկան բերաւ տունը: Լացաւ, մեր ութֆըն ինկաւ,
թողութիւն խնդրեց, խօսք տուաւ, երգում ըլաւ չար
ճամբաներէն հեռու մնալ եւ հօրը բեռը թէթեւցնել:

— Ուրեմն մ'ըջուկը լաւ էր:

— Չեմ դիտեր թէ ի՞նչպէս չի՞նդ դահեկան շահած
էր: Ըսի թէ արեւօք գտցեա՞ծ չըլլա՞յ տեղէ մը: Չէ, ը-
սի ինքնիրենս, գող տղան տունը բան չի տանկի: Խեղճ
չի հասնիր, ո՞ր սուժմը սիրտը ձախ կողմէն աջ կողմը
տարաւ:

— Հի՞նդ դահեկան սուրբը:

— Վախեմ թէ նորէն հանդիպի այդ Աւետ կոչուա-
ծին եւ սիրտը ծռի դէպի դէշը:

— Եթէ հանդիպի շատ լաւ կ'ըլլայ, պատասխանեց
Մինաս:

— Աստուած չընէ, Մինաս աղբար, բաւ Մարդի-
սին հայրը. տղաս կամքով թո՛ղ է, չեմ գիտեր թէ ի՞ր
դըջումը քանի՞ օր պիտի տեւէ:

— Տղաս, հոս եկուր, դարձաւ Աւետին: Ահաւասիկ
ձեր փնտռած Աւետը:

— Աս պիտի չըլլայ, Մինաս աղբար, ասիկա չընչ-
տակ է, երէկ ամուսին բեռս շալկեց ու տունն տարաւ:

— Ծիշո՛ւ ասիկա է, ես ալ իրեն համար լացեր եմ:
Ծնողքին լացը աղօթքէն աւելի զօրւար է, Աստուած

ինձի դարձուց, փողոցէն քաշեց տուն բերաւ: Թող ի-
րարու ընկերներ ըլլան, զիրար քաջալերեն եւ պաշտ-
պանեն. թերեւս օր մը իրարու դորձակցին եւ լաւ բանի
մը ձեռք գործեն: Չեր Մարդիսը չի՞նդ դահեկան վաս-
տը կեցաւ կէս ժամուան մէջ, ձեռքն ստառ դրամները,
չոյցը, համբուրեց. զգաց թէ հաճելի էր իր վաստա-
կով ապրիլը: Ի՞մ տղաս հօրը աշխատանքը տեսաւ, ա-
ծուիտ բեռան տակ կքած քրտինքը համբեց, եւ իր սիր-
տըն բաւ իրեն — գնա՛, հօրդ արժանի գաւակ եղիր եւ
աշխատէ: Ամէն մարդ իր ճամբան ունի, քոյրիկ. ասոնց
ճամբան փողոցներէն սկսաւ, յուսանք ծաղկազարդ տե-
ղերէ քալին:

— Ինչպէս ըսիր, թող այդպէս ըլլայ, պատասխա-
նեց բեռնակիր Մահակը, դու կեանքին աւելի փորձ ես:

— Բան մը խորհի՛մ, Մինաս աղբար, բաւ Շուշան,
լաւ է՞ր լլար Մարդիս ամէն օր քեզի դրկեմ, դուն աշ-
խատուր, բան մը վճարէ, գիտեմ պէտք չունիս մար-
դու, ես քեզի կը հատուցանեմ: Այդպէս չէ՞նք ըներ նաեւ
մտրուկները, մ'այր ձրուն քով կը կապեն որ պարսպ
երթայ գալ եւ բեռան վարժի: Մէկ տաս, հազար առ-
նես: Մէկ հատիկ է, ամանը յայտն է. հայրը յոյժած եւ
հիւանդ է. վաղը պատառ մը հացն իր ձեռքէն պիտի
տանենք:

— Շատ լաւ, քոյրիկ, կարթը ծով նետեցինք՝ դին-
քը բռնեցինք, շարունակե՞ք հողին եւ սիրան ալ բռնել:
Գուք տուէ՛ք, ես ալ ես կը դարձնեմ Մարդիսին ձեռքով:

— Ծնորհակալ ենք, Մինաս աղբար, երկինքը տանդ
վրայ պայծառ ըլլայ. հող բռնես, ոսկի գառնայ, բրն
այր ու կին եւ մեկնեցան:

— Տեսա՞ր, բաւ Շուշան իր ամուսնին, մարդն ալ

ազատ ենք: Հայրս խնթթ կ'ըլլել Իտլիո՛ւ երբ նոր հաղահաղ առնուի:

— Մինաս, բաւ կ'ընը, ցոյց տուի՛ր թէ՛ գաւառաբնի ինտամնաց մարդիկ կ'ենք: Ի՞նչ պիտի ըսէ մեր մտախն: — Ի՛նչ կ'ուզէ թո՛ղ լսէ. խելքը՛ն, սիւնար Շամել գարհաբուսու տեղ՝ մարմինն հոգ կը տանի. սիրամարմն տալ ալ յղուիս է:

— Ի՞նչ դժուար բան է, ըսաւ Սիրամիտի, հին դը՛ւրխուն նոր գլխարկ անցնել:

— Այո՛, շատ դժուար բան է, պատասխանեց ա՛մ մուսինը, ծխոտ, մխոտ կրակի տաք մուտքը՝ հոգիս ինձ տարհանել:

Այդ պահուն Միհրան ներս մտաւ, թեւին տակ խուրճ մը հինգամ հոխանցներ, երկար փայտեր, երկաթէ թելեր:

— Ի՞նչ կը բերես տունը, տղաս, հարցուց հայրը. քի՛չ ժանգոտած թիթեկ, երկաթ, դամ ունինք, շա՛ւ կա՛յ պիտի շինես:

— Հայրիկ, վաղ անցաւ սրճաղաղացն, պէտք եղած ստարիանները շէն գտնուիր: Խորհեցա՛յ թռչունի վանդակ շինել եւ ծախել:

— Այո՛, հատ մը շինէ, մէջը սոխակ մը դիր եւ տար այդ աղջկան տունը կտիտէ որ թռչունն երգէ, ինքն տալ պիտի:

— Ո՞ր աղջկան:

— Քի՛չ առաջ հոս հատ մը կար. գեղեցիկ խը՛ւտուելակ մը որ ինքն իր վրայ Փը՛ւրլը Տը՛ւրլը կը դառնալ, իր չունեցած խելքը ցո՛ց տալով եւ քայլը ու մայրը բերանախաղ կը դիտէին:

— Սոֆի՞ն էր, վարդուհի, հարցուց Միհրան:

— Այո՛, բայց ես ամօթով մնացի, հայրիկս դը՛ւրթէ՛ պիտի վաճակեց:

— Ես ալ այդ աղջկան շատ չեմ հաւնիր, պատասխանեց Միհրան, հայրը խեղճ հնակարկատ մը, ինքը՛ թագուհի կ'ուզէ դառնալ. ամէն մարդ իր քայլերը չա՛փով պիտի է առնէ:

— Հա՛, բան մը համայնք բաւ. Մինաս: Հայրը մուրճը մասնորոն կը գարնէ, աղջիկը կը պարէ: Չէ՛, չէ՛, համեստ աղջիկը, տան գաւաղը, ծնուիքի թեւին ոսկի սպարաճաճան է:

— Համեստութիւնն աղջկայ մը համար հոգեկան գեղեցիկ գարդ է, ըսաւ Սիրամիտի, բայց մարմինն ալ իր մասը կ'ուզէ. չենք կրնար մարէ գուլպալ հագուել եւ ոչ ալ հաստ դրճուած բուրդէ գեղատներ. Սխ չենք գտնուիր, հոս Պէյլուսթ է, նարոյ կայ, դիտող կայ, ուրիշ մարդիկ, ուրիշ ճաշակ, եւրոպայեան լեզուն է քաղաքը. երբ մեզ կը տեսնեն՝ քթերնին կը բռնեն: Գիտե՞ս ինչ մահ է աղջկան մը համար, կնոջ մը համար երբ փողոցին մէջ վրան խնդան:

— Է՛, շատ բարակ մի՛ մաներ: Ատուած աղջկանց աչքան գեղեցիկ դէմք տուած է որ ցնցոտի ալ հազուութի, այդ պատահն աւելի գեղեցիկ կը դառնայ: Գեղեցիկութիւնն հոգիէն կու գայ, ո՛չ մարմինէն: Այդ ձեր Սոֆին փողոցէն հարս պիտի երթայ, իմ վարդուհիս հօրը տունէն, հասկցա՞ր:

Կի՛նը չպատասխանեց: Ինքն ու աղջիկը եւրոպական գեղատներ կ'ուզէին, բայց Մինասին գուլպաները դեռ ծակ էին. մարդը կը համբերէր տան խաղաղ սիրոյն համար: Միհրան գրեթէ տարի մը պարտադ անցուցեր էր մեքենայ մը շինելու, հիմա թռչունի վանդակ պիտի շինէ: Թռչունն ուսկից պիտի գտնէ. երկիր մը որ ճընճ-

դուռի ալ չունի: Միշտան աղբալէս էր, տարի մը պէտք էր դիմեր համարելու համար թէ բրածն օդուտ չունի: Իր յոյսն ու աչքերը Աւետին վրայ դարձան:

— Աւետիս շատ դժեմ է, բնաւ տունը: Ատուռած տուֆերն հաստատուն պահէ եւ ցիւխի չհանդիպեցնէ: Այսօր իր երբեմնի շար ընկերներէն մէկն ալ ճամբու բերինք: Հինգ դասեկան դժեցիմք. հող չէ, հինգ դասեկան էր, տուն մը չկենցիմք, հիմերն հաւատք, պատերն յոյս, տանիքը սէր, մէջը դրինք երկու թշուառ ամուրներ: Ատուռած չին պահէ:

— Ի՞նչ, հինգ դասեկան գոհեցիր ուրիշին տունը չկենելու համար, բնաւ կինը:

— Հինգ դասեկան, կրկնեց վարդուհի:

— Այո՛, աչքերնի՞դ ծակեց, պատասխանեց Մինաս:

— Զուրկ մը նորաձեւ կօշիկ կը դնէի:

— Ես ալ ծակ դուրպաներս կը կարէի, պատասխանեց Մինաս:

Կինը Մինասին դուրպաները ձեռքն առաւ, ասպին անդին դարձուց եւ բնաւ.

— Ասոր ո՞ր կողմը կարեմ:

— Քեզի՛ հարցուր, պատասխանեց Մինաս: Երկու ամիս է աղբալէս կը հարուխմ: Փոքրիկ ծակ մ'էր, յետոյ մեծցաւ, մեծցաւ եւ ոտքս դուրս ելաւ:

— Մայրիկ, բնաւ վարդուհի, իմ հինցած դուրպայիս բերանը կայ, առ կարէ եւ տակերը կարէ:

Սիրարդիի անեղ ֆաշեց, ասեղ տուաւ: Մինաս ինչու կաւ իր «Ֆազմալէպ»ին վրայ: Թեթիւ նոր եկած էր:

— Ասոր ալ բաժանորդագրութիւնը տարկներով չենք վճարած, բնաւ ինքնիքեն. մարդիկը համբերող, բարի են եւ միշտ կը դրկեն: Ի՛հ, հայր հայուն չօգնէ՛, մեր միտքը ո՞վ պիտի շինէ:

Աւետ երբեք այս քրտակցութիւններուն չխառնուեցաւ: Կը խորհէր Սարգիսի մասին: Սրտին մէջ թէ՛ յոյս կար, թէ՛ կասկած: Աւետին քանի մը ամիս մեծ էր, հուժկու տղայ մը, բայց կարելի էր եղան պէս ականջն բռնել եւ ուզած անել տանել:

Աւետին կասկածը պարտալի ելաւ: Սարգիս դրեթէ ամէն օր Մինասին խանութն էր:

— Մինաս աղբալ, դուք մը չունի՞ս, կը հարցնէր դուրիը դռնէն ներս:

Սքիտակաճառը վտիտագրութիւնները սոնպ Սարգիսին կու տար: Աւետ միտսին կ'երթար տուները ցուցնելու եւ ճամբան օգնելու համար:

— Սարգիս, նախ, բնաւ Մինաս, ինչ որ վճարեմ քեզի՛, այս տետրակին մէջ պիտի նշանակեմ: Եթէ տունը տանիս, մայրիկիդ յանձնեն՝ լաւ, ապա թէ ոչ՝ երեսու մի՛ նայիր:

— Խաչ, կը տանի՞մ Մինաս աղբար: Հայրս երթալով կը ծերանայ, ես պէտք է վատակիմ. բայց բեռնակրութիւն չեմ սիրեր: Խանութ մը, տեղ մը չե՞ս ճանչնար որ երթամ աշխատիմ:

Մինաս իրաւունք տուաւ, յետոյ արդար չէր որ տղան կերպով մը ձրի աշխատցնէր եւ բեռնակիր Սասիկին տունը դուրուշ մը աւելի չմտնէր. եթէ խաղն հասկնար՝ աւելի դէ՛ռ պիտի բլար:

— Տեղ մը կ'ուզեմ գտնել որ Աւետն ալ հեռը բլարայ: Այդ տարիներուն Պէյրութի մէջ արհեստանոց քիչ կար: Հայերը դեռ նոր կը շարժէին իրենց դաղթականի կեանքէն՝ ճարտարարուեստը ձեռք առնելու համար: Առաջին տարիներուն ամէն դուրծ յանձն առին, փորցր մաքրել, բեռնակրութիւն բնել, լեռներէն շինութեան

բար փոխադրել, ճամբաներու վրայ աշխատել: Հացի ճամբար խոնարհ գործ չկար, ամէն աշխատանք ազնուական էր, բացի մուրացկանութենէն:

Մինաու բարեկամներուն բարեկամները գտաւ եւ յաջողեցաւ Տամատեան երկաթալաճառակն քով աշխերտ դնել Աւետն ու Սարգիսը, չարաթը տարը դահեկան անձ դրուր:

— Ես տառջուան պէս բան մը կ'ընեմ, մեր խանութը կը դարձնեմ, տղաս, ըսաւ Մինաս Աւետին: Գէթ տունը հացի դրամ կը մտնէ, այն խեղճ Ծուչանն ալ բան մը կը տեսնէ: Չեզմէ կախում ունի, լաւ աշխատիք՝ կ'ուսեցնեն, գէշ աշխատիք՝ դռնէն դուրս կը դնեն. հիմա գործը դրամով չէ, կարգով է. գործ չկայ, փնտտող շատ կայ:

Երբիւ պատանիները ետանդով գործի լծուեցան: Իրենց երեք հին ընկերները տակաւին փողոցները կը թափուուէին:

— Աւետս տեղաւորեցի, ըսաւ Մինաս. Միհրանին բրածին խելքս չի հասնիր: Ի՞նչ մտածեց թռչունի վանդակ չինել, թող երթար միջերու թակարդներ շինէր, այս թաղին մէջ աւելի առնէտներ կան՝ քան թէ մարդիկ:

Միհրան քանի մը չարաթ յետոյ իրենց խանութին դռնէն երեք հատ վանդակներ կախեց: Չանազան ճարտարակետութեամբ շինուած էին, գմբէթաւոր, տափակ, քառակոթի, վեցանկիւն: Չանազան գոյներով ներկած էր, ճաշակ եւ արուեստ կար:

Մինաս կարծիր ներկուածին վրայ պիտակ մը անցուց, վրան դրուած.

— Սոֆիին համար:
Անցնող թաղեցի կարգաց ու խնդաց, դիտէին թէ ո՞վ էր Սոֆին: Բախտով այդչինքն ալ անցաւ ու տեսաւ.

կայնեցաւ, նայեցաւ եւ վանդակը վար առնելով՝ հարցուց Մինասին.

— Յատուկէն ինձի՞ համար շինած է Միհրանը:

— Այո՛, հինգ դահեկան տուր եւ առ տար. ետեւէն սոխախն ալ կը զրկենք որ երբէ եւ դուն մետաքսէ ըզգետններով պարես:

— Այո՛, բնութեան երզն աւելի քայցր է քան մարդերու շինածները:

Յանձնեց հինգ դահեկանը եւ միամիտ աղչիկը վանդակը ձեռքն առնելով՝ աւելցուց.

— Չմոռնաս սոխախն ալ զրկելու:

— Չեմ մոռնար, հող մի՛ ընեք, մեր հիւղաւանի մէջ սոխախներ շատ կան:

Երեկոյեան երբ տուն դարձաւ, պատմեց վանդակին վաճառումը:

— Միհրան, վանդակ մը ծախեցի, կրնա՞ս ըսել թէ ո՞վ գնեց:

— Անպատճառ կեղբոնէն հարուստ մը:

— Ո՛չ, կեղբոնականցիներն այս թաղն ոտք չեն կուսեր, ուրիշ մէկը:

— Տիկին համասը,

— Ո՛չ:

— Տիկին Մարգրիտը:

— Ո՛չ. անբամ մը մեր տունը տեսած ես... մտածէ, սանկ կը դառնար:

— Սոֆին:

— Հո՛ւ, այդ Սոֆին. հիմա սոխախն կը սպասէ որ զրկեմ:

— Հայրիկ, ի՞նչ ըրեր ես, խեղճ աղչիկը խարեր ես, ըսաւ վարդուհի:

— Ինչո՞ւ խարուեր է, չինեք ենք ծախելու համար,

դներ է, ըսել է սէպեռ ունէր, աւելցուց Միհրան:

Ամիսները անցան եւ միւս վանդակները դնող մը չե-
լաւ. արեւէն անձրեւէն գոյնները նետեցին: Միհրան նո-
րեր շինեց: Սանուլթին դրան չորս կողմը շարեց, տղ
չճնաց: Եկող գոսցողը միկներու թափարդ կ'ուզէր:

— Տղաս, քեզի ըսի թէ թափարդներ շինէ, եկող
կը հարցնէ:

— Գեղարուեստի գործ չէ, հարկի: Յետոյ գի
մկնաստան տխրի կ'ուզեն, այդ անունը նախատնօք է:

— Ծառ լաւ, ուղածդ ըրէ: Վաղը ուրիշ գործ մը
կը բանաս:

Տարի մ'անցաւ եւ Միհրան մէկ վանդակ ծախած էր
այդ շրջորիկ աղջկան. յուսահատեցաւ եւ մտածեց ու-
րիշ արհեստ մ'ընել: Երեք չարաթ մտածեց, տեսած
բոլոր արհեստները աչքին տուցեւ բերաւ: Եւրոպայէն
եկած փայլուն գործիքներ կ'երազէր, բայց ո'չ միջոց
ունէր, ոչ ալ արհեստէն կը հասինար:

— Ինձի համար ամէնէն շահաւորն ու դիւրինն է
փայտէ սօլեր շինել, խորհեցաւ ինքնիրեն. կօշիկը ստղ
է, ճամբաները ցեխոտ, ամէնէն յարմար հարուելիքն է:
Հօրը խանութէն ոտքի չափով փայտեր ընտրեց. գնեց
սղոց մը, կիւ դանտակ մը եւ հարթիչ մը: Կտրեց, ձե-
ւեց, մօրը ոտքերուն չափն առաւ. քրոջ ոտքերուն չափն
առաւ. դուրսէն անձնող աղջիկ, կին տունը կանչեց եւ
ոտքի չափ առաւ: Գունդդուն ներկեց գոյնով. վրան
կաշի մը դասեց եւ տարաւ խանութի դռնէն կարեց:
Եւրոպայէն եկած պատկերներու մէջը տեսած էր սօլեր.
Կարծեց թէ Պէլլուսթ պիտի խիչէր, մանաւանդ իր ար-
քատ թաղեցիները:

Հայրը զոյգ մը ծախեց. անտղ կինը քանի մը քալ
անդին գետին բնկաւ, ճամբաները խորտ ու փորտ էին,

ցեխ, վեր ու վար, շիտակ քաղնի խի դիպուածուէր, ո՛ր
մնաց սօլերով: Տարի մը շինեց, տարի մը սպասեց ծա-
խելու համար: Սեղծ Մինասին խանութը կատարեալ
չուկաթի կը նմանէր, ամէն դոյն կարելի էր դռնել:
Գուռը նեղեր էր, խարխուլ պատերը սաստիկ ուռեր
էին: Սիրտը նեղուեցաւ, հոգին քաղեցաւ: Կէս օր մը
թաղին դպրոցի աշակերտները դուրս կ'ելլէին. կանչեց
պրտիկները, ամէն մէկուն ձեռքը վանդակ մը տուաւ:
— Առէք տղաքս, լսաւ, տարէք ձեզի աղուող խա-
ղովի:

Պրտիկներն օդին մէջ դարձնելով փողոցէ փողոց
վաղեցին, ճամբաները դունաւորուեցան.

— Բարեկենդան, բարեկենդան, կը լսուէր ամէն
կողմ:

— Այս փորձանքն ազատեցանք, խորհեցաւ Մի-
նաս: Այս սօլերն ալ աղքատ Ծուշանին կու տամ, թող
երթա՛յ վառէ եւ տղուս խելք խնդէ Ատուածմէ:

Սօլերն հաւաքեց, պղնկի մը մէջ դրաւ, շարխն
տաւ եւ ուղլակի Ծուշանին տունը տարաւ:

— Ա՛ն, քովի կի, քեզի նուէր, վառէ օճախդ, չըլլա՛յ
թէ ի՞մ հոգիս վառեն այս անպէտ սօլերը:

— Քա՛հ, Մինաս, մեղքը չե՞ն, ինչո՞ւ չէք ծախեր,
Միհրանին քրտինքը կալ վրանին: Հիւղտաւորներն
պիկ կը քաղեն, դէթ ոտքերնուն տակ քան մը ունենան:

— Չէ՛, քովի, չէ՛. ա՛ն եւ հանդիստ ստով օ-
ճախը դիմը ու վառէ: Սեղծ կինը հասցը առաւ եւ հա-
ղիւ քաղի մը քալ ըրաւ, լիշի պէս կռնակին վրա
ուեցաւ. ես ուրիշչին ոտքերը, կտրեցի կտրեցի չեմ ու-
ղեր: Այս հիւղտաւորին մէջ շիտակ քալողը կը տա՛ի,
ո՛ւր մնաց սօլեր դնէր ոտքին տակ: Բայց նայէ, մէկ
պրտիկան ունի՞մ որ ժամ երթաւ եւ տղուս համար քա-

րակ մտմ մը վառես, որ Աստուած խելք տայ. ես հաստ
դիտուն մէջ խելք չկրնամ հանել:

— Ենծո՛ւհանկախաբար եմ, թող հրամանագրէ ըլլայ: Երկին
տակ քիչ մը օդի մնացած է, չէ՞ս ուղիեր դառաթ մը
խմել:

— Չէ՛, Եուշանդիկ, խաղա ուրեք է, կ'ըսեն թէ
չատ վնաս կ'ընէ:

— Սիրեմ լեարուի, ըսաւ Եուշան, չա՞տ կը ցաւի,
դաճման չունի՞. խաղած բանջար կեր, կ'ըսեն թէ չատ
լաւ կ'ընէ:

— Ո՞ւրտեղեցին գտնեմ, ախ երկրին մէջ ուղտի մի-
տն գատ բան չկոյ:

— Ուղտի մի՞ն, հողիդ սիրես մի՛ ըսեր, սիրտս կը
խառնուի: Անցեալ օր տալիսեմի մասխաճառի մը քով
տեսայ. առ ի՛նչ երկարութիւն էր, խոկ վրան, ես հա-
զար ըսեմ, դուն հարկուր հանար ըսէ, ճանճերը կը վըր-
տային:

— Ատոր համար է, պատասխանեց Մինաս, որ տա-
րափորիկ հիւանդութիւնները չեն պահպիր:

— Արդեօք միշտ կ'ընեն ինչ է՞ն նախիր, չէ՞ն տեսներ:

— Կը տեսնեն, ի՞նչն է՞ն, բայց իրենց շահն է որ
հիւանդ չատ ըլլայ եւ դրամ վատակին:

— Մեղքը չէ՞ն, կը մեռնին: Ի՞նչն է՞ն կարելի է աղ-
քատ մարդուն կաշին ծախու առնել:

— Ելր մեռնին՝ տէ՛հօր կը լը յանձնեն, գերեզման կը
տանի, բան մ'ալ ինձ թմա՛կ կ'առնէ:

— Չրո՞ս թէ մեռնելն ալ դրամով է:

— Ամէն բան, սոքն բան դրամով կ'ըլլայ. դրամ
ունի՞ն՝ չես մեռնիր, պատիւ ունի՞ն՝ մարմնդ ես. դրամ
չունի՞ն՝ փիխտափալ ալ ըլլաս, յիմար է կ'ըսեն:

— Իրաւ որ աշխարհս ծուռ բուսեր է, ըսաւ Եու-
շան:

— Եւ ի՛նչ ծուռ, օր պիտի գախ որ ստեղծնիս վեր,
ձեռքերնիս վար այնպէս պիտի քաշել տան:

— Մի՛ ըսեր, Մինաս, դուն ալ սոքն բան գէշ կը
տեսնես:

— Ի՞նչպէս ծուռ չտեսնեմ, քոյրիկ, մեզ մեր հո-
ղէն տունէն դուր քշեցին, այգիիս մէջն էի, պտուղ-
ները փախուցնումս հասած էին. ծառերուն տակ
պտուկէիք եւ ձեռքդ տանէիր ուտելու համար. եկան ը-
սին թէ՛ — Եսալան կեաւար, կորսուէ ասիկց, այս ախ-
պին մեռն է: Թօսք ըսէիք, աղաչէիք, ի՞նչ օրուտ. սուր
ունէին, թուր ունէին: Չորս ստօղ քաղցի, գլխիկալ
քաղցի. գէթ ընտանիքիս կեանքին չգպան: Աչքիս առ-
ջեհն էի հեռանար մեր գեղեցիկ Սիւրբ. չեմ կրնար մոռ-
նալ, հայր ու մայր կորսնցնելու պէս բան մ'է: Իմ տունս
կաթողիկոսարանին մօտն էր. ամէն օր վեհափառին
օրհնութիւնը կ'առնէի: Որո՞ւն մեղքը մտած էի, որո՞ւն
չարիք ըրած էի. սոքս մըջերնի վրայ դրած չեմ: Ըսէ,
այժմահս ծուռ չէ՞ բուսած. եւ դեռ ինչե՛ր պիտի գան
մեր գլխուն, Աստուած գիտէ:

— Սիրտս մղկտեցաւ, Մինաս, ինչո՞ւ յիշեցուցիր.
ցաւը ցաւով չի բուժուիր, աւելի կը խորանայ: Ի՞նչ
ըսեմ, որո՞ւ անձք տամ, մեղն ալ ճիշտ քեզի պէս ե-
ղաւ. հազար վիզ գրեն՝ չեն բաւեր մեր կրածը պատ-
մելու: Հազար վիզ գրեն՝ չեն կրնար մեր տեսածն ե-
րեւակայել: Չեմ գիտեր, ինչո՞ւ հողը չպատուեցաւ մեզ
նիրս առնելու. ինչո՞ւ մեզ չալանի տաւ եւ հոս բերաւ.
Հայի կարօտ, սան կարօտ, օճախի կարօտ, ուրախու-
թեան կարօտ ձգեց:

Ամբիս մ'առաջ գիտե՞ս ինչ պատահեցաւ: Այլապէս մը մեր Տարածն ճամբայ ելած՝ հոս կը հասնի, Մեքէ երթալու համար: Պէտրութի մէջ ասոյին անպին հար- ցընելով՝ իմ Սահակս կը փնտռէ: Սահակ Մանուկեան, Սահակ Մանուկեան բռնով եկաւ գտաւ մեզ: Մեր դը- րացի Ահմէտն էր, վրան գլուխն բռն, ասեղ ձգելու տեղ չկար: Մեր հացը կերած էր, մեր ջուրը խմած էր. մտաւ ցաւէր՝ մեղի կու գար: Տունն տեղս յափշտակող- ներէն մէկն էր: Սահակին ցփսկէ փառաւոր պետե- ներն ինք ատաւ. իմ մետաքոս գեւատներս իր կնիկին տուաւ. զրացին զրացիէն կը զողնայ այդ երկրին մէջ: Ազդուտ տողրակ մը բացաւ, մէջէն մէկ հաստ նարինջ հանեց եւ Սահակին տուաւ լրելով.

— Սահակ աղբար, հալալ քրէ այգիդ, որ սրտով վայելեմ. ա՛ն այս նարինջը իր փոխարէն:

— Թող քթին բերնին նետակէք, պոռաց Մինաս: Ամուսինս շուտորեցաւ. ատաւ նարինջը հոտուը- տաց, ասոյին անպին դարձուց. աչքերը լեցուեցան: Ի՞նչ ընես, սիրտը ձեռքին կը նայի. տարինքով խնամած էր, սրբած մաքրած էր այգին, ծառերուն ճիւղերն ալ կը ճանչնար: Նարինջը մէկպէս գրաւ.

— Ծուշան, բաւա, մարդուն օղի մը բեր, սուրճ մը չինէ:

— Ո՛հ, սա քու Սահակդ ալ մա՞րդ է եղեր, վրայ բերաւ Մինաս. ե՛ս ըլլայի, նարինջը քթին բերնին կու տայի, կից մ'ալ ետեւէն. դնա՛, Մեքէ, կ'լսէի եւ դըռ- նէն դուրս կը դնէի:

— Չէ, Սահակս այդպէս չէ, պատասխանեց Ծու- շան, սիրտը բուխ է, շայտիկը վրայէն հանեո՞ գտածուկի պէս ձափն չի հաներ:

— Չրո՞տ թէ այդ միւս երեւը դարձնողներէն է,

բաւ Մինաս. Աւետարանի խօսքը սուրբ է, բայց հոս չ'երթար:

— Սահակն ալ ուրիշ բան բաւ, թէ ասոնք հին բը- նաղդ մ'ունին, իրենց ձեռքը չէ, եօթը պորտէն կու դայ. եօթը խաւ գոմէչի կաշի դնես վրանին, երբ առիթը դայ, պէտք է խածնեն, յափշտակեն, սպաննեն. մարդիկ են որ իրենց հացն իրենց ձեռքով բերան չեն տանիր, միշտ ուրիշին ձեռքէն կերեր են: Մենք այս Ահմէտը բարի մարդ տեսեր էինք եւ այդ սեւ օրը հին բնազդը դինքը մ'դից մեր տունը կողոպտելու:

— Եւ դուք սուրճ տուէք, օղի տուէք, պատասխա- նեց Մինաս. տեղ կայ որ օրհնեալ բերանը պէտք է աւ- բի:

— Հապա դեռ լսէ Մինաս, աւելցուց Ծուշան: Հար- ցուցիք Տարածի մասին, ինչ որ ըլլայ՝ հայրենիք է, պտերնիս միշտ հոն է: Տարածի տուներէն շատերը փը- լեր են, պատասխանեց, շինող չկայ. հայու ձեռք չկայ: Նեմբութ գայհարն դեռ կը տեսնուի՞, հարցուցի եւ (Լամբրոնի զղեակը). հա՛, կը տեսնուի, բայց մենք այդ կողմերը չենք երթար, աւաղակներու բոյն է: Իսկ մեր եկեղեցի՞ն, ո՞ղջ է, տե՞ղն է, խաչը գմբէթին վը- բան է: Չեր եկեղեցին ճշմարիտ հաւատաբն դարձաւ, պատասխանեց Ահմէտ: Պաչին տեղ հիմա ոսկեցո՞ծ մա- չիկը կը փայլի:

— Դուրս կորիք, պոռաց Մինաս:

— Ինձի՞ կ'ըսես, Մինաս աղբար, բաւ Ծուշան ցնցուելով:

— Չէ, այդ շուն շան որդիին:

— Յետոյ մարզն ոտքի ելաւ, շարունակեց Ծուշան, Սահակ աղբար բռնով, դուք Հայերդ առաջ կ'երթաք, մենք ետ կ'երթանք: Պէտրութի մէջ եսն, եսն, եսն

տեսայ ամէն կողմ, աչքերուս Հաւատացի, մենք կար-
ծեցինք թէ մէկ հաս չէ մնացած, բայց դուք եօթը դը-
րուիով դեւեր էք: Վարը դուն արդուտ տուն պիտի չի-
նես. իսկ ես քու արդուտ տունդ դրաւեցի. տանիքն ան-
ձրեւներէն վար թափեցաւ եւ կի՛նս ու արագս թափեց:
Հիմա Մեքէ կ'երթամ: Սահակ արդար, տունդ հարամ
եղաւ, զէթ ալդիդ հալաւ ըրէ:

— Ճամբադ քարուտ ըլլալ, երթաս ու չզառնաս,
ըստ Մինաս:

Մինաս գաւաթ մը ջուր ուզեց: Սահակին տեղն ին-
քը կատարած էր: Սահցի է, արիւնը տաք է, քանի մը
խենթուկ ջրիկեր ունին. սիրոյ հետ սիրով են, բայց
չարին ներել չեն գիտեր:

— Սանութ գանձամ, ըստ կնոջ: Աս ալ պիտի ը-
սէի. ազգեր կան որ երեսի ջուր չունին: Մի՞թէ կարելի
է սատանան միկրտել եւ բարի քրիստոնեայ դարձնել:
Սանութի ճամբան մ'ըմուտով ու հայհոյելով ըրաւ:
Կի՛ն մը եւ աղջնակ մը կրեն կը սպասէին:

— Վաղն եկէք, ըստ, այսօր սիրտ չունի՛մ, արիւնս
պղտորած է:

— Մինաս արդար, ըստ կի՛նը, զէթ քանի մը վախտ
տուր որ արուար տաքնեմ:

— Ա՛ս, այդ գէպին վրայէն: Եթէ հոս եկած ըլլալ,
այս կոճղերը դիտուն վրայ կը ջարդէի: Ծուն չան որդի,
մէկ նարինջով այդի մը դնել:

— Մինաս արդար, որո՞ւն կ'ըսես:

— Փայտդ առ եւ դեա՛, պրտաց կնոջ երեսին:

— Ի՞նչ, քացա՞խ խմեր ես:

— Ո՛չ, թոյն խմեր եմ, խժի թոյն: Մէկ նարինջով
խօշոր ալդի մը կ'ուզէ գնել, արդատ շունը: Հարաւ ը-
րէ. թող հաղար անգամ հարամ ըլլալ, ծառերը փուշ

րերեն, նարինջները թոյն տան եւ փորդ պատառ պա-
տառ ընեն:

Կի՛նը քանի մը փայտեր գրկելով խանութէն դուրս
թուտ, աղջնակն արդէն աներեւութացեր էր:

— Վա՛խ, վա՛խ, Մինաս արդարը խենթեցեր է,
բախն տունէ տուն:

Մինաս խանութը շուտ արցեց: Կէսօրը քիչ անցեր
էր. սովորաբար մինչեւ ուշ երեկոյ կը մնար: Երբ իր
տանը մտնեցաւ, երկի ձայն լսեց: Ծան մէջ արմուկ
կար, բարձրաձայն կը խնդայլին. ոտքերու ուժով արո՛ւ-
ներ լսեց: Ուժով մը գուռը բացաւ եւ ասղած իր տեղը
մնաց: Երկայն փողով ձայնազիւր մը կը նուազէր. իր
աղջիկը, ուրիշ աղջիկներ, մանչեր կրարու փաթթուած
կը պարէին: Երկինքը վրան պիտի փէր, աչքերուն Հա-
ւատաց: Սիրարբին ու Վարդուհին հոլանի կը դառնա-
մին: Այնպէս պրտաց որ տան թիթեղէ տանիքն անդամ
մը վեր ելաւ ու վար լջաւ: Ճափշտակեց ձայնազիւրին
երկար փողը. մէյ մը ասղին, մէյ մը անդին, կին, աղ-
ջիկ ու մանչ ճանճերու պէս դուրս քշեց: Մինակը մնաց
տան մէջ: Իր բազմոցն ալ տեղը չէր, անկողինն ալ տե-
ղը չէր: Վերմակ մ'առաւ, մէջը պլլուեցաւ եւ մէկ ան-
կիւն մը պտուկեցաւ, քիթ բերան ծածկած:

Գէշ վերջ փայտ ուզող կնիկին ամուսինը Մինասին
տունը վազեց. աղջնակին մայրը վազեց, դուռ դրացի
Մինասին տունը վազեցին:

Մինաս վերմակին տակէն դեռ կը մրմար.

— Աշխարհս փի՛, դեռ քիչ է. Սողոմ Գոմոր է.
մարդկութիւն չկայ, սրբութիւն չկայ, արդար իրա-
ւունք չկայ: Մէկ նարինջով այդի մը դնել. լսե՛ր էք,
Հայեր: Փայլերը բոլոր ոչխարներն յօշոտեն, եւ դան

տիրոջն բանն. հալալ ըրէ մեզի: Իսկ հոս... չամ չցած-
նեղ, անամօթեանը...

— Մինաս աղբար, անցած ըլլալ, ի՞նչ եղաւ, ի՞նչ
ունիս, հարցուցին դուռ դրացի, պարտադ սենեակը լեց-
ունելով:

— Չըլլա՞ թէ արեւը գլխուն զարկեր է. բօբիչ
կանչելու է, բաւա կիսիկ մը:

— Ասոր կիսն ու տղաքն ո՞ւր են, հարցուց աղջնա-
կին հայրը:

— Քիչ տառջ Մինասի տան առջեւէն անցալ, բաւ
պատաւ մը, ասնը մէջ երգ ու պար կար, անպատճառ
ինքն ալ պարեր խմեր է եւ գինոյցներ:

— Մինասն ատ մարդը չէ, բաւա դրացին. արեւա-
հար եղած է, պէտք է խիոյն տղրուկ փակցնել:

— Ո՞վ տունը տղրուկ ունի, հարցուցին իրարու:
Տղրուկ, տղրուկ, աստը, քանս հաստ, ո՞վ ունի:

Մինաս տղրուկին ձայնը լսեց, գլուխը վերմակի
տակն գուրս գրաւ:

— Տէ՛ր Աստուած, աս ի՞նչ բազմութիւն է, ասո՞նք
ալ պարելու եկեր են:

— Չէ՛, Մինաս աղբար, լսեցինք որ հիւանդ ես,
մեզի ըսին թէ խանութին մէջ ինքզինքդ կորսնցուցեր ես:

— Վրադ մարելիք եկելը է:

— Աչքերդ մթնցեր են:

— Քեզի մէկը խօսքերով թունաւորեր է:

— Ես շատ լաւ եմ, բարեկամներ, շնորհակալ եմ,
կրնաք երթալ: Գացէք դուք ալ մէկ նարինջի տեղ ձեր
հօրեանական տունն ու այլին հալալ ըրէք: Յետոյ կիս,
տղայ շալկեցէք, օտար երկիր եկէք, քրանեցէք, դատե-
ցէք, տունը պատառ մը հաց բերէք եւ զան լիբրեր լի-
բար փաթթուին եւ վրադ խնդան ու պարեն:

— Հասկցանք, մարդուն սիրտը քաղեր են, ըսին
դրացիները: Ատ Սերաբիին ալ պէտք է հասկնալ. պա-
րի, ուրախութեան տարիներ չեն. մեր վէթըր դեռ լաց
է, խոր է. հոս ամէն տուն պողուց մը իւրով կը տապ-
կուի. փարթիլի ժամանակ չէ:

— Ուրեմն հիւանդ չեա, Մինաս աղբար:

— Չէ՛, շատ լաւ եմ:

— Վրադ մարելիք չէ՞ եկած:

— Չէ՛, վրաս մարելիք չէ եկած:
— Մինասը մեր թաղէն պակտի՞ մեր արեւը կէս
կ'ըլլալ, ըսին ու մէկիկ մէկիկ սկսան տունէն դուրս
ելել: Ճամբան հանդիպեցան Ծուշանին, խեղճը հեւ է
հեւ կը վազէր Մինասէն լուր աններու:

— Լաւ է, Ծուշան քոյրիկ, ըսին, միայն գլխուն
մէջ սեւեռում մը կալ. շարունակ՝ Այդի, նարինջ, հա-
լալ ըրէ, կը կրկնէ:

— Քու ըլլամ, Ահմէտի մասին պատմածս սրտին
դպեր է:

Ծուշան պատմեց իր տան խօսակցութիւնը: Ամէնքն
ալ Մինասին իրաւունք տուին: Բայց ի՞նչ բնես, իրա-
ւունք ունի, անմելիք չունի. ո՞վ կրնայ անդէն՝ դայիին
բերնէն սրտը խել:

Քիչ վերջ Աւետ դորճէն տուն վերադարձաւ: Ան
Մինասէն աւելի ուշ տուն կու գար:

— Հայրիկ, կանչեց ուրախութեամբ տան առջեւ-
էն, գործատէրս այս ամիս տասը դահեկան աւելցուց
վարձքիս վրայ, բաւա թէ հաւանական է որ իր դործը
Փրանսոս փոխադրէ եւ դիս ալ հետը տանի:

Հայրը միշտ՝ եկուր Աւետս, կ'ըսէր, քոյս նստէ.
այդ երեկոյ բերանը չբացաւ: Ներս մտաւ եւ տունը

տանն ու վրայ տեսաւ: Հայրը վերմակին վրայ նստած
էր եւ դեռ Հայալ Ըրէն, լերբեր, կը մըմտար:

— Ի՞նչ եղած է, ո՞ւր են մայրիկս, Վարդուհին,
Միհրանը:

— Գուրս ելած են, հիմա կու գան, պատասխանեց
հայրը, անշուշտ անօթի են, ես բան մը կ'եփեմ քեզի:

Ելաւ տեղէն, գոչնոցը կապեց, վառարանի կարը
վառեց եւ տապակին մէջ իւր գրաւ, երկու հաւկիթ կու-
տրեց, վրան ճերմակ պանիր դրաւ, կճր կճր եփեց:

Յանկարճ դուռը կամացուկ մը բացուեցաւ եւ գը-
լուխ մը կիսով ներս մտաւ ու դուրս ելաւ:

Աւետ տեսաւ թէ իր քոյրն էր. քառորդ մ'անցաւ եւ
վարդուհի ներս չեկաւ: Գուրս ելաւ, դրան առջեւ մայրն
ալ կար. տաք տաք կը վիճէին դրացի Համաս տիկնոջ
հետ:

— Ինձի թոյլ, կ'ըսէր Համաս, ես Մինասն աղբոր
պէս կը ճանճամ, իր թոյլ կողմը գիտեմ:

Մէկը մ'ըսը քաջելով երեքն ալ ներս մտան:

— Մինաս աղբար, շատ բարեւ. լսեցի որ սիրտդ
քիչ մը նեղուեր է: Ես ալ ըլլալի՛ ալդ Ահմէտին ը-
տաներէն կը կատգէի. ամէնքս ալ սրտի ցաւ ունինք.
Հոյ ու տանիք կործնուցած ենք եւ դալ վէրքին վրայ
քացոսի թափել, իսկապէս ախմախ Ահմէտի գործ է:

Գունն տանդ մէջ հանդիստ կեցիր, աղուոր մասնէր
ունիս, վարդը պէս աղջիկ, շնորհքով տիկին մը. հինը
գնաց, նորը կը շինես:

— Այո՛, աղուոր աղջիկ, շնորհքով տիկին, որոնք
այս թիթեղէ տնակն ալ կրնան գեղեցիկ պարարտահի
փոխել:

— Ան ալ պէտք է, ան ալ պէտք է, աղբար Մինաս,
կ'աշխատինք վայելելու համար. եզան պէս մ'ըշտ լու-

ծին պակ մնարու չենք: Աղջիկդ հասունցեր է, ճեռքը
դնդրոյճեր կան. պարերու ժամանակ կը հասկցուի թէ
ո՞ր երիտասարդն արժանաւոր սիրտ ունի, աչքիւ նկա-
րազիր ունի տուն տեղ կազմելու:

— Աղբէն դուք կիներդ, պատասխանեց Մինաս,
կարգելու չկարգելու վրայ միայն կը խօսիք:

— Անշուշտ մայրերուն գործն է: Մերարիին մտա-
հոյ է, գուն գործով դարձած, ինքը հոյ չտանի, խեղճ
վարդուհին որբի պէ՞ս մնայ: Մինաս աղբար, աս բա-
ները մեզի ձգէ: Գոչնոցը մէջքէդ քակէ, քեզի չի վա-
յելեր. եկուք բազմոցիդ վրան նստէ եւ տանդ վերին
հայրն եղիր: Վարդուհի, դարձաւ աղջկան, դեմ՛ հայ-
րիկիդ համարդ մը տուր, գուն ալ Մերարիի, ի մի
համբոյք ցրուիմ ի բաց:

— Է՛յ, զիս համբուրող չկա՞յ, ես աղբար չե՞մ՝,
բաւ Աւետ:

— Գունն սո՛ւս կեցիր, սաստեց Համաս, տաք ա-
ղուրին մէջ պող ջուր մի՛ լեցնէր:

— Միհրանն ո՞ւր է, հարցուց Մինաս:

— Լեռ դնաց, ընկերներուն հետ, քանի մը օր հոն
պիտի անցընէ, պատասխանեց Աւետ:

Այդ վայրկեանին մէկը իրենց գունն ուժով գար-
կաւ. կը տեսնուէր որ աճապարանք ունէր: Սարգիսն էր.

— Մինաս աղբար, խնդրեմ, չուտ մեր տունը վա-
ղէ, մայրիկի տան առջեւ վար ինկաւ եւ կողը կտորեց:

— Չըլլա՞յ թէ գոյդ մը սոլ հարուեցաւ:

— Չեմ գիտեր, ես գործէն նոր դարձած էի:

— Այդ անիծեալ սօլերն ալ մեզի փորձանք եղան,
բաւ Մինաս եւ Աւետին հետ տղուն հետեւեցաւ:

Ան Սահակի տան հանդէպ բարի տկարութիւն ու-
նէր. խեղճ էին, իր սիրտը անոնց մօտն էր: Կարծես տան

կնքահայրն էր. այժ, բարութեան կնքահայր էր. Սաղ-
գիւն ինքը միտոնց առաքինութեան աւագանին մէջ:
Սարգիս հիմա լուրջ է, աշխատասէր երկտասարդ է, ծը-
նողքին յօյան ու լոյսն է. ի՞նչ քաղցր բան է տան մը
ճրագը մաքուր խղով վառել:

Երբ Մինաս տունէն դուրս ելաւ, Սիրարփի եւ Վար-
դուհի խոչոր շունչ մը քաշեցին:

— Եղաւ Սիրարփի, ըսաւ տիկին Համաս, աչքի-
բուն ամպերը դացին, դէմքը պայծառացաւ: Բայց դի-
տե՞ս, լեզու պէտք էր այդ Սեցին կակղցնելու համար:
Սա աթոռները տեղերնին շարեցէք, իր բարձուը տեղը
դրէք, դիտէք որ իր ոսկորներուն պէս կպած է անոր:

— Չարժանաթի կերպով հին աւանդութիւններուն
կապուած է, ըսաւ Սիրարփի. տան մէջ նոր բան չու-
ղեր տեսնել, կարծես թէ աշխարհս իր քաղերուն կը
սպասէ առաջ երթալու համար:

— Կամայ կամայ, Սիրարփի, ուզէ չուզէ կը փոխ-
ուի. կաթնայի մէջ զրուած լուրիան վեր կ'ելլէ, վար
կ'իջնէ, յետոյ կը խաշի եւ կը հանդարտի. աս մեր դա-
ւառի մարդիկն ալ այսպէս են: Գուք ալ քիչ մը աչքա-
բաց եղէք. հանգէս ունիք, մարդ հրաւիրած էք, այն
առնն ըրէք որ ինքը խանութն է. դարուն, երթալուն
մամը ժամանակը չափեցէք:

— Այդպէս խորհած էինք. ո՞վ կը մտածէր թէ այս-
օր շուտ տուն կը դառնայ, պատասխանեց Սիրարփի.
այդ սաստիկէք Ահմէտին երեսն եղաւ:

— Մայրիկ, ըսաւ Վարդուհի, ամօթէս գետին ան-
ցայ, բարեկամ բարեկամուհի, ասոնք դեռ դաւառացի
վայրենի են, ըսին եւ հեռացան: Հիմա ի՞նչպէս երես-
նին նայիմ, ի՞նչպէս տուններնին ոտք կոխեմ, լաւ է եր-
թամ թաղուիմ, քան թէ հոս բնակիմ:

— Համբերութիւն այլիկս, պատասխանեց Համաս,
մէկ օրէն միւսը Սիւր ֓արիղ չ'ըլլար, ժամանակ
պէտք է:

— Չեմ համբերեր, չեմ համբերեր, ես այս տունէն
կը փախչիմ, պատասխանեց Վարդուհի:

Այլիկը շատ դրացուած էր. ջղաւրդիւ դարձած,
ուտքերը գետին դարկաւ, վրան դող եկաւ, ձեռքերը
պրկուեցան. ա՛հ, ա՛հ, ըսաւ ու գետին ինկաւ:

— Ձիւնը դիտուս, դո՛ճեց Սիրարփի եւ վրան նեո-
ուեցաւ. այլիկս, այլիկս մեռաւ, հասէք Աստուած, եր-
կինք, դուռ դրացի հասէ՛ք, այլիկս կը մեռնի:

Բռնեցին այճնակը եւ բազմոցին վրայ տարածեցին:
— Աւքոլ, օղի, բան մը չունի՞ք, հարցուց Համաս,
կուրծքին քաննք: Գուն Սիրարփի ոտքերը շարժէ, ես
թեւեւը. մի՛ վախէք, ինքզինքը շուտով կը դառնէ:

Տանը մէջ կրիկ մարդ չկար, Աւետն ալ դուրս ե-
լած էր հօրը հետ. բայց ա՛հա Մինաս ներս մտաւ, ինքն-
իրեն խօսելով.

— Հարար անգամ պատուիրեցի թէ այդ սոխըը
չհարուի. կնիկ է, խօսք կը հասկնա՞յ:

— Ի՞նչ կայ նորէն, հարցուց տագնապած:

— Ի՞նչ պիտի ըլլայ, իրստ կերպով պատասխանեց
Սիրարփի, քիչ առաջ ըրածիդ արդիւնքը: Վայրենի կեր-
պով դուրս քշեցիր իր սիրելի բարեկամները: Բնաւ քա-
ղաքակրթութիւն չունիս: Այլիկս ձեռքէս կ'երթայ.
Աստուած իմ դուն հասիլը:

Մինաս բերանը չկրցաւ բանալ, ինքզինքը յանցա-
ւոր դրաց, պղտկեցաւ, աչքերը խոնաւացան. չոյեց այլ-
կան դիտելը, դրիկն մէջ դտաւ, մանուկի պէս օրօրեց,
յետոյ դէպի դուրս պրտալով կանչեց.

— Աւետ, տղաս, շուտ դնա՛ր բծիչկ մը կանչէ։
Բծիչկն եկաւ. Ասանայի համարտարանն աւարտեց
չէր։ Բռնեց արջկան երակը.
— Եստ ուժով կը դարձնէ։
— Պարոն բծիչկ, բաւ Համաս, սիրտը նայէ, սիր-
տը տե՛ղն է։
— Արդեօք սիրահարուած՞ է։
— Ո՛չ, պատասխանեց Մինաս։
— Անմարտ բան մը կերա՞ւ։
— Ո՛չ։
— Ծածր տհաճութիւն մ'ունեցա՞ւ։
— Այո՛... ս'չ։
— Անպատճառ լուծնոտութիւն եկած է վրան. հի-
մա լիարուսին է, տանկ դէպքեր կը պատահին։
— Բայց պարն բծիչկ, բաւ Մինաս, մեր ցեղին
մէջ տանկ հիւանդութիւն երբեք չէ պատահած, լաւ
նայեցէք, սխալած չըլլա՞ք։
— Ո՛չ, չեմ սխալած. Մխիթար Հերացին, Ամիր-
տովլաթ, հայ մեծ բծիչկներն ալ այսպէս կ'ընեն։
— Մէյ մը կանչե՛ք այդ Ամիրտովլաթը, թող ինքն
ալ նայի, բաւ Սիրարփի։
— Անկարելի բան է, չի կրնար գալ։
— Ինչո՞ւ, ինքնաշարժ կը զրկենք, թող դայ։
— Չի կրնար գալ կ'ըսեմ, որովհետեւ 500 տարի է
մեռած է։
— Աստուած իմ, դռնեց Սիրարփի, հիմա ի՞նչ ը-
նենք։
— Մահուան վախ չկայ, քիչ վերջ կը հանդարտի,
թեթեւ արուր մը տուէք, ոտքերը տաք ջուրով մէջ դը-
րէք. յետոյ չոզիկ վրայ բռնեցէք, թող լաւ մը ծծէ տաք
չոզիկ։ Այցեկզկնա հինգ դահեկան է։

Մինաս վճարեց։ Երբ բծիչկը դուրս ելաւ, ան փըր-
փրած ներս եկաւ.
— Ուսկի՞ց դառք այդ անասունը, կոյս հիւանդա-
նար չէի կանչէր։ Իչու գլուխ, արջիկս լուծնոտ է եղբր.
լուսինէն կու գայ եղեր. խելքդ լուծնէն զարնուած է։
500 տարուան մեռած գլխքերուն մէջ կարողացեր է եղեր.
հոյեմ գլուխդ, ողջերէն բան չտրվէ՞ր։
— Մինաս, բաւ Համաս, վարդուհին չոզիկ վը-
րայ բռնե՛ք, թերեւս լաւ կ'ընէ։
Հայր եւ որդի, Համաս եւ մայր երկու ձեռքերէն,
երկու ոտքերէն բռնեցին եւ սանկն վրայ տարին, ուս-
կից տաք չոզիկն այլեք ալեք կը բարձրանար։
Հազիւ գլուխը վրան դրին՝ արջիկը սարսափած
պոտաց.
— Կը մեռնիմ, կ'այլիմ, մայրիկ։
— Քիչ մ'ալ համբերէ արջիկս, բաւ Սիրարփի,
քեզի լաւ կ'ընէ։
վարդուհի ուժով մը ցնցեց գլխուն վրայի վերմա-
կը եւ ետ նետուեցաւ, լոլիկի պէս կարճերը էր։
— Առողջացայ, առողջացայ, բաւ։
— Մինաս, տեսա՞ր, մարդը բան մը գրեակ եղեր,
բաւ Համաս։ Մէկ վայրկեանէն արջիկդ ինքզինքը գը-
տաւ։
— Տաք չոզիկն հարցուր, պատասխանեց Մինաս,
մահամեքն ալ վրան դնէիք, չորս ոտքերով կը փախ-
չէր վրայէն։ Ինչ որ եղեւ, հինգ դահեկանիս եղաւ։
— Մե՛ղք հինգ դահեկանին, գոյդ մը մեռտաքէ
դուրպայ կը դնէի, բաւ վարդուհի։
— Ան ալ կ'ըլլայ, արջիկս, սիրտդ հանդիստ բռնէ։
Հայրդ քեզի համար հոզին ալ կու տայ։ Խնդրեմ Հա-
մաս, դարձաւ կնոջը, դուրսը չլսեն թէ բծիչկն բաւ որ

աղջիկս լուսնոտ է . գէշ անուն կը հանէ : Սուտ է , մի-
մարի խօսք է :

— Համասին բերանը եօթը բանալիով կը պուռած է :

— Ի՞նչ , ըսաւ թէ ես լուսնո՞տ եմ , ճուսաց վար-
դուհի . ես ասոր աչքերը կը փորեմ : Աւետ , դարձաւ
կեբորը , որ շուտաբաժ կեցեր էր , ո՛ր արտուէն որ բերի՛ր ,
տար հոն կապէ : Մարգարօվարի բօխկ մը չգտա՞ր :

— Քաջ բօխկները կեզրոն կը բնակին , հիւղաւան
չեն դար , պատասխանեց պատանին :

— Եղածն եղած է , ըսաւ Սիրարփիէ , ես վաղը այդ
բօխկը լաւ մը կը շինեմ :

Տանը մէջ զիչ մը հանդարտութիւն տիրեց : Մինաս ,
աղջկան մօտ , բազմոյնի վրայ նստեցաւ :

— Տէր Աստուած , ըսաւ , աս ի՞նչ փորձանքաւոր
օր եղաւ : Այդ շուն Ահմէտը մէկ նարինջով այդի մը
գնեց , Շուշան իր կողը կտորեց , վարդուհին ինքզինքը
կորսնցուց :

— Ամպերն ալ այդպէս չե՞ն , աղբար Մինաս , կը
հաւաքուին , կը դեղուին , կ'ուռին , կը սենան եւ մէկ
անդամէն վար կը թափեն , պատասխանեց Համաս :

— Այդպէս է , տիկին Համաս , մէկ օր դարուն , մէկ
օր ձմեռ չ'ըլլար . իրենց եղանակներն ունին . մեր կեան-
քըն ալ տխուր եւ ուրախ օրերու շղթայուած է :

Տիկին Համաս , ուշ է , ըսաւ ու տուն գնաց . դո՛հ
թէ տան մը մէջ խաղաղութիւն բերաւ , աղջիկ մը մա-
հէն ապասեց :

Յաջորդ օրը բոլոր թաղը լսած էր վարդուհին
դէպքը : Տիկին Համաս եօթը բանալիով կը պուռած բե-
րանը մէկ բանալիով բացած էր :

Քանի մը օր վերջ Միհրան լեռնէն վար իջաւ . քաղ-

ցըր օդէն կարմրած էր , վրան աշխատանքի նոր եռանդ
եկած էր :

— Հայրիկ , տեսնես հիմա ի՞նչ գեղեցիկ սօրեր պի-
տի շինեմ , եւրոպական նոր ձեւեր տեսայ : Կրունկը
բարձր , նրբանը նազիկ , օրիորդներն երբ հագուին՝ նա-
ղելով երթան :

— Չէ՛ , ի սէր Աստուծոյ , պուսաց հայրը , երկու
կողեր կտորեցինք այդ քու սօրերովդ :

— Մխայն երկո՞ւ դոյզ ծախեցիր :

— Ո՛չ , բոլորը ճամբեցի . Շուշանին տուի որ վա-
ռարան նետէ եւ սպուր տաքցնէ : Քեզի հազար անգամ
ըսի թէ միներու թակարդ չինէ : Արդէն եկած դրամով
կեզրոն տեղ մը մեքենաներու վաճառանոց մը բացած
կ'ըլլայինք : Թաղը միներով կեցուն է , կատուի չափ խո-
շոր են . ամէն մարդ թակարդ կը փնտռէ , բացի Միհ-
րանէն :

— Վանդակներէս ալ չծախեցի՞ր , հարցուց Միհ-
րան :

— Դպրոցականներուն տուի որ բարեկենդան խա-
ղան : Փառք Աստուծոյ , ապասեցայ . խանութն իսկ կա-
րելի չէր մտնել , պաւաւ խամաճիկ դարձած էր :

— Հօրդ մտիկ ըրէ , մէջն ինկաւ Սիրարփի , ան
փորձառու մարդ է , չուկայէն կը հասկնայ , խելացի է ,
հոտաուրիւն ունի : Գործին մէջ ամօթ չկայ . նայէ
Սոֆիին հայրը , հին , աղտոտ կօշիկներ կը կարէ եւ լաւ
ալ տուն կը պահէ . աղջկան մետաքսէ գուլպայ , մե-
տաքսէ շքեղադեաս կը դնէ . մենք քու վանդակներովդ ,
քու սօրերովդ դեռ դահեկան մը չստացանք : Քոյրդ ըզ-
դեստի պէտք ունի , ես գուլպայ չունիմ , հայրդ գուլ-
պայ չունի , ալ եղանք բոպիկ բոշաներ :

— Աստուած իմ, եթէ վրաս դան, ես կը մեռնիմ, բաւ կինը սարսափի ձեռով:

— Բայց չիմա կարգը մերն է, պատասխանեց Մինաս, այս թակարդներով թաղը կը մաքրենք: Առ հաստ մը, երկու տեսակ են, մեծ ու պղտիկ. մէջը պանկրի կտորներ դիր եւ բռնէ:

Մինաս հաստ մը ձեռքն առաւ եւ ցոյց տուաւ թէ ինչպէս գոնակը դուրսէն կը բացուի, եւ հազիւ մուկը մէջը մտնէ ներսէն չի կրնար բանալ: Բացատրեց զպղտուիքը:

— Քանի՞ կ'արժէ, հարցուց կինը:

— Ոչինչ գին է, մեծը երկու դահեկան, փոքրը մէկ ու կէս դահեկան:

Միբան վճարեց մէկուկէս դահեկան եւ փոքր սկստա մը տուաւ ու գնաց: Մինաս ազդ բնելու ձեւը սորվեցաւ, եկողին մկերու մասին խօսեցաւ, ամէնուն հոգին վառած էր այդ զաղաններուն պատճառով: Քանի մ'օր չանցած՝ արդէն սկսաւ վաճառքը ակնասոնները մեկնեցան, եւ գրամը ներս մտաւ:

— Տեսա՞ր, տղաս, ըսաւ Մինաս, եթէ քանի մը տարի առաջ սկսած ըլլա՞յիր, հիմա կեղդունը խանութ բացած կ'ըլլա՞յնք, քոյդդ ու մայրդ մետաքոսէ գուլարի կ'ունենային: Գործն ամօթ չէ, գողութիւնն ամօթ է:

Քանի մը օր վերջ՝ տիկին Միբան խանութ եկաւ. — Մինաս աղբար, քեզի զարմանալի բան մը ըսեմ. թակարդը հիանալի է, բայց գիտե՞ս ինչ պատահեցաւ, երեք հաստ մէջը բռնուած էին, զրկ դրանա դիմաց որ ամուսինս դալ եւ սատկեցնէ: Ներս մտայ, դուրս ելայ, ինչ տեսնեմ, ակնատը հեռացեր էր, եւ դեռ գլորելով ատաջ կ'երթար: Երկու շուններ սա որ տեսան՝ վառ

յարձակեցան, քաշքշեցին եւ ակնատը կտորեցին ու մկներն սպաննեցին:

— Ես քեզի ըսի թէ մեծ առ, այս թաղին մկները ուրիշ աշխարհի մէջ չկան: Ինչո՞ւ նոյն նահապետը մուկը, օձը, կարիճը տաղանին մէջ առաւ՝ խեղբս չի հաստնիր:

Կինը խօսող թակարդ մը գնեց եւ գնաց: Երկու շաբաթ չէր անցած, տան մէջ մտած էին երեսուն դահեկան: Մինաս շատ դո՛ւս էր, տունն իր ուղածին պէս եղաւ: Կինն ու աղջիկը զրկեց որ մէկ մէկ գոյգ մետաքոսէ գուլարները գնեն:

— Ետի վրանիս գլուխնիս մէյ մը շտկենք, ըսաւ, ապա կեղդունին մէջ մեքենաներու խանութի մասին խորհինք:

Վարդուհին հազիւ մետաքոսէ գուլարները գնեց, հագուած՝ Սոֆիին գնաց, շատերն իրմէ հեռացեր էին, Լուսնուտը կը կոչէին եւ ճամբաներու վրայ ցաւով կը լսէր:

— Խեղճ աղջիկ, խնայական վարդ է, մեղք որ լուսնուտ է:

Որո՞ւ հասկցնէր թէ այդ բօխկը բան չէր հասկընար, թէ թուչունի պէս առողջ էր. որո՞ւ հասկցնէր, չար մարդիկ որ կարծես հաճոյք կը զգան ուրիշին սունը կտորելով: Միբան այն խենթուկ Սոֆին է որ սրտով կապուած էր Վարդուհին եւ միայն երկու տուներու մէջ երկու սրտեր դիրար կը հասկնային: Միբարփի կատաղած էր թէ՛ բօխկին դէմ եւ թէ՛ Համասին դէմ. եթէ ձեռքն գար, անքերին պիտի փորէր:

Երբ աղջիկը ճամբաներէն անցնէր, հին ընկերուհիներ, հին ընկերներ կը սպասէին որ զարնուած թրուչունի պէս գետին խնար, պարտապ տեղ կը սպասէին.

չէր կրնար ըլլալ պիտի մնար ինչ որ էր, սակայն ալ-
ջիկն ու մանչն ընկալի մար ազուէին իրենց շրջապատան.
ամէն օր նոր բան պիտի տեսնէին, պիտի փոփոխուին
կեանքով կեանքին հետ փոխանակիլով: Կամօ՞ր՞ջք մը ան-
դին Պէշկուտովի կեղեցիկը կար, փոքրիկ Փարիզ մը, որուն
չունին ու լո՛սը կը թափանցէին նաեւ հարկակարան ալ-
քառ թաղանջերուն մէջը եւ երկուստարդ աչքերն այն կողմը
դարձած էին:

Սոֆի հիմա ազատ մուտք ունէր Մինասի տան մէջ,
կարծես թէ խանութիւնը կը սպասէր իրեն: Հազիւ
նկու մտնէր, իր քոյր կ'ունէր, միւս կողմը վարդու-
հին կը դնէր եւ երևու գեղեցիկներու մէջ ուրախ էր:

Չեմ գիտեր, ո՞ր վարդն համբուրեմ, կ'ըսէր ու կը
խնդար:

— Մինաս աղբար, չէ՛ պիտի չըսես, նայէ լաւ բան
մը մտածեր եմ, ոչ թէ վարդուհին բժշկելու, անհիտ
բան չունի, ինծմէ, քեզմէ աւելի տաղ՞ է, ալ մեզ
թաղը բժշկելու համար:

— Ըսէ, աղջիկս, ի՞նչն է՛ ուզես, պատասխանեց ան-
համբար Մինաս:

— Կ'ուզեմ որ թո՛լ տաս, որ վարդուհին իմ տան
մէջ պարզանշանմար փոխուի պիտի չեան, հարկա-
կան պարզ պիտի պարն՞ք եւ դուարձանք:

— Եթէ այն դուրս ինկածները պիտի չգան՝ հա-
ճօ՞ր՞ջք հրաման կու տամ:

— Բայց քիչ մը ծախք պիտի ընես. վարդուհին
սիրուն դիպես եւ նոր կօշիկներ գնելով:

— Հոգիս ալ կու տամ, թող միայն ուրախ եւ եր-
ջանիկ ըլլա՛յ:

Աւետ:

— Քա՛, ապէ կ'ըսէր, կը պատասխանէին կինը-
նը, սակայն ետեւն կը ընկնէին. Մասը է, ալսիւ է,
պէտք է ըսէ: Ես ալ նոյն բանը կ'ընէի:

Ամէնչէն օգտակար պիտի գտայի, իր տան մէջ կու-
տայի Սիլիան Սիլիանի, ըստ, վարդուհին ալ ու-
կիմ որ մեր տունը պիտի գտայի:

— Ես կը խօսիմ, պատասխանեց Սոֆի:

Մինաս Սոֆին չատ կը սիրէր. տեսաւ թէ այդ թե-
քեւ աղջկան մէջ մեծ հոգի է, կ'ըսէր:

— Ինչ գէշ բան է, կ'ըսէր ինքնիշխան, մարդս երե-
սն եւ արտաքին ձեւերէն դատել. խոսակցան մարդը չի
տեսնուիր եթէ ոչ իր գործերուն մէջ:

Տղու մը պէս համակրուած էր նոր կեանքին. Սիւն
հիմա երազ էր, դաւա՞ր քաղաք մը: Ինքը նոր մարդ

բուրեցին, ինչպէս մալուրները գիտեն նորածին մը ըն հար-
բուրել:

Պարէն յետոյ խոստով Մինասին տունը դացին. երբ
գուռը բացին, բրնց ծիծաղն ու աղմուկն աճափան սուր-
էին որ Մինաս տեղէն վեր թռաւ: Անոնք ներս թափե-
ցան եւ միասին բռն:

— Մինաս աղբար, դու մեզի տոգոյն վարդ մը ըր դըր-
կեցիր, մենք քեզի գարնան վարդ բերինք:

— Իմ աղիկս միշտ գարնան վարդ է, պատասխա-
նեց Մինաս. բայց աչքերը լեցումս էին: Ենորհակալ
եմ, Սոֆի, վտաս եմ թէ վարդուհին լաւ գուարճացաւ:

— Այո՛, եղբիկի պարը պարեց, ու բոլորս հիա-
ցանք:

— Մեր հայկական պարերը գեղեցիկ են, նազելի եւ
չնորհալի. տունը քանդուի անոնց՝ որ մեր տուները
քանդեցին եւ մեզ օտարութեան մասնեցին: Արժան մը
սարերը ծաղիկ ունէին, որքան մեր արժեքները ջնջ
չուրեր, այնքան մաքուր էր ու գեղեցիկ մեր պարեցնո-
ւան կեանքը. մենք ինկած ենք օտար երկիր, պանդուխտ
ենք առանց գառնալու յոյսի: Բայց դուք պահեցէք ձեր
հայրենական շնորհքը, լեղուն եւ ազգութիւնը. ինչպէս
մարդիկ աղիւ բոլորը կը խնամեն եւ գէշերը կը փըր-
ցնեն, ալպիս եւ ժամանակը մեզ պիտի աճեցնէ եւ չար
քեղիքը պիտի փճացնէ:

— Այո՛, այո՛, Մինաս աղբար, մենք պիտի ըլլանք
մեր հայրենի օճախները վառ պահողները:

Վարդուհի վերստին ստացաւ իր գուարթութիւնը.
սակալ Սոֆիին կ'երթար, փողոցներու մէջ էր վրան ցա-
ւակցող չկար: Աղջիկներն սոճն կողմ տարածած էին
բո՛րեղին սիմարութիւնը եւ Համասի սուտեղը:

Ամիս մը չանցած՝ փարիզէն նամակ մ'եկաւ որ ա-
մէն բան կերտարանափոխ բրաւ:

— Մինաս աղբար, նամակ մ'ունիս, նամակ մը,
լաւա կին մը խանութ մ'անելով:

— Ես նամակ ունիմ. աշխարհի մէջ մարդ չունիմ,
տիկին, ուրիշին չըլլա՞յ:

— Չէ՛, նամակ վրան գրուած է. Ստեցի Մինաս սու-
րարին, հիւղուած Պէլլուի:

— Ի՞նչ աշխարհ է, հինգ բառերով Մինասը գտան:

— Փողոցներուն մէջ քու անունդ տալով կը փըր-
տուէին. բա՛ թէ ես փնջը կը ճանչնամ: Ո՞վ էի ճանչ-
նար մեր Մինաս աղբարը. բայց նուէրս կ'ունեմ:

— Ծտտ աղէկ, քեզի ալ թախարդ մը կու տամ:

— Ի՞նչ պիտի ընեմ թախարդը:

— Գուք մուկ չունի՞ք:

— Մի՛ բտր, անցեալ օր ամուսինիս ականջը կըր-
ծեր էին:

— Վա՛խ, վա՛խ, տեսա՞ր: Առ այս թախարդը եւ
մէջը պանիքի կեղեւ դիր եւ բռնէ: Մեր հիւղուածին
փորձանքն են այդ գարշելիները:

Կինը թախարդն առաւ ու գնաց: Մինաս խոյս խա-
նութը գոցեց ու տուն մեկնեցաւ: Նամակը ծոցին մէջ
ուժով պահած էր: Ծամբան կը հանէր եւ իր անունը
կը կարար: Թղթադրոջէն բան չհասկցաւ: Կարծեց
թէ վրան դրամ փակցուցեր էին:

— Սլրարիկ, Սլրարիկ, պոտաց դուրսէն, նամակ
մը, նամակ մը:

— Ի՞նչ նամակ է, Մինաս մեզի նամակ գրողն ո՞վ
է, մարդ չունինք տունէն գուրս:

Բացին նամակը, Վարդուհին վրան ինկաւ, Սլրար-

փի վրան ինչպաւ: Մէջը տպուած թուղթ մ'ալ կար. բան
չհասկցան:

— Հայրիկ, Փրանսերէն գրուած է, ըսաւ արջիկը:
Ի՞նչ արուտը լեզու է, ի՞նչ գեղեցիկ զիւրեր ունին:

— Է՛հ, կարգա՛ տեսնեմ քու արուտը լեզուդ, ըսաւ
հայրը:

— Չեմ հասկնար:

— Մերարիք, դուն կարգա՛:

— Ես ալ չեմ հասկնար:

— Տեսաւեր, ըսաւ դանձաբաժ Մինաս, չնորհաբո-
խախտէն չզրկէ՞ր: Փտար լեզուով նամակն ինձի պէտք
չէ, մէկը խող ըրած պիտի ըլլայ:

Նամակը մէկզի գրաւ եւ բաղձոցին վրայ երկարե-
լով սկսաւ իր «Բարգախէպ»ը կարդալ:

— Ինչո՞ւ ալս խառնակ լեզուներն ստեղծեր են, ը-
սաւ աչքերը թերթէն բաժնելով: Աստուած հայրէն
խօսեր է Ազգամ Եւայի հետ, թող հայերէնը մնար: Աս-
տուծմէ աւելի լա՞ւ լեզուն կընան ստեղծել:

— Ո՛հ, դուն ալ Մինաս, ստո հին բաներէդ վաղ ան-
ցիր, ըսաւ կինը. սա նամակը կարդալ տանք մէկու մը,
կընալ մեզի բարտ բերել:

— Հայրիկ, Ֆրանսայէն կու գայ. գիտե՞ս ինչ մեծ
բան է, ի՞նչ պատիւ է, ըսաւ արջիկը:

— Մե՛ղք թակարդին, ըսաւ Մինաս, պարտալ տեղ
նուիրեցի:

— Որո՞ւ նուիրեցիր, հարցուց կինը:

— Նամակ բերող կնոջը, երես ալ չունէր, շուտ մը
նուէր ուզեց:

— Ես ըլլայի՛ տաս հատ ալ կու տայի. Փրանսերէն
նամակն ուրիշ բան է, պատասխանեց Վարդուհի:

— Այո՛, վրան ալ ոսկի ապարանջան մը տայի. ո-

րովհետեւ նամակը Փրանսերէն գրուած է: Այդի որ կի-
նը չէր գիտեր մէջը լեզուն, յանկարծ վզիս ալ կը փաթ-
թուէր: Տէր Աստուած, տէր Աստուած, կարծես թէ
Փրանսացին մեղմէ լաւ է, իր լեզուն ալ երկինքէն ին-
կած է: Ինչո՞ւ անունս, քաղաքս հայերէն գրուած է եւ
Պէլլուիթ՝ Փրանսերէն:

— Այս հիւղանունն անգին հայերէն ո՞վ կը հառ-
կընայ, ըսաւ կինը. դպրոցականի լեզու է:

— Բերանդ սրբէ, կին, պուռայ Մինաս. աշխարհիս
մէջ քար որչափ կ'ուզես կայ, բայց արգամանդ քիչ կայ
եւ շատ յարգի է: Մեր լեզուն ալ արգամանդ է:

Գուրբը ոտնաձայն լուռեցաւ, մէկ կօշիկները կը
մաքերը դրան առջեւ: Աւետ ներս մտաւ, իր ստորոս-
կան մրտ երեսներով:

— Հայրի՛կ, ահաւասիկ ամսականս, վաթսուն
թուղթ:

— Ազգրի՛ս տղաս, ճակատդ համբուրեմ. ա՛ս է մեր
փնտուած նամակը:

— Աւետ, գիտե՞ս մեզի Ֆրանսայէն նամակ եկած է,
եւ Փրանսերէն գրուած, դուն բաներ մը կը հասկնաս,
կընա՞ս կարգալ, ըսաւ քոյրը:

— Ես՝ ո՛չ, իմ դարձատէրս լաւ Փրանսերէն գիտէ,
ձիզուրիթներու աշակերտ եղած է. Փրանսերէն ալ կ'ա-
րթէ:

— Լաւ արթթ միայն հայերէն լեզուով կ'ըլլայ,
պատասխանեց Մինաս:

— Վարդապետ պիտի ըլլայ եղբր, բայց Հոգին
սուրբ վրան չէ իջած, ըսաւ Աւետ:

— Եթէ հայերէն արթէր, գէթ տէր-տէր կ'ըլլալ:
Առ սա նամակը եւ տիրոջը տար թող հայերէնի թարգ-
մանէ. եթէ նուէր ուզէ, իրեն ալ թակարդ մը կու տանք:

րեկամներու, դրացիներու, աշխարհս տեսածներու: Եշն
ալ ջուրն անցնելէն առաջ ոտքերուն տեղը կը քննէ:
— Միշտ տատամտտ մտրդ եղած ես, պատասխա-
նեց կիներ: Հինգ հազար լիբանանեանով կարելի է Պէյ-
րուսն ալ դնել: Վրանիս պուլիսիս կը շտկենք. փարիզ
է, կատակ չէ, աշխարհիս ամէնէն մեծ ֆառաքն է, քը-
մեզ սարէն փրթածներ չկարծեն: Դուն ալ պիտեղդ քիչ
մը պղտկցուր, առ ֆէտդ նետէ եւ սիլիմտը դիր:

— Ի՞նչ բան է սիլիմտը:

— Եւրոպական պատուաւոր գլխարկ է, յոյն քա-
հանաներու զոմպին կը նմանի, բայց փայլուն եւ աւելի
բարձր է:

— Զըսես թէ գլխուս կճուճ մ'անցընեմ. խելքին
նայէ: Ես ֆէտով եմ, Ֆէտով կը մնամ:

— Հոգիդ սիրես, չէ, հայրիկ, ըսաւ Վարդուհի.
դէթ Պէյրուսի պարոններուն գլխարկը դիր: Վրանիս կը
խնդան, մեզի թուրք կ'ըսեն:

— Նայինք, նայինք, հիմա գլխարկին վրայ ժամեր
չանցընենք: Ես վաղը խանութ կ'երթամ, գուր ալ ձեր
պորներուն նայեցէք: Մով չտեսած չբոսկիմանք:

— Հապա դրամն ի՞նչպէս ընենք, հարցուց կիներ:
— Այս թուրքի կտորը ճակտիս կը փակցնեմ եւ ա-
մէնուն ցոյց տալով Զըննա կ'երթանք, պատասխա-
նեց Մինաս:

— Բան ըսէ որ մէջը խելք ըլլայ: Աւետ, տղաս,
վաղը վարպետիդ հարցուց առ դրամի խնդրը, ըսաւ
Սիրարփի:

Աւետ լուր բերաւ թէ հայրիկը պէտք է դրամատուն
երթայ ստորագրէ որ դրամը տան:

— Դրո՞մն ալ տուն ունի, հարցուց Մինաս:

— Հայրիկ, ճիշտ գաւառացի ես, ըսաւ Վարդուհի,

բան գլխուս մեր ֆառաքն, կը պատմես եւ մտքով հոն
կ'երթանք: Քեզի կը դրկեմ հինգ հազար լիբանանեան.
ճամբու ծախք ըլլէ եւ եկուր ընտանիքով: Հեռագիր քա-
չէ, ես կախարան կու դամ ձեզ աննելու: Կարոտալից
համբոյրներով

Սահակ

Մինաս աղբար թէ՛ կարգաց, թէ՛ լացաւ, սիրուն
երկուքի բաժնուեցաւ: Միտքը չէր ուզեր օտար երկիր
երթալ, սիրտը կը ստիպէր երթալ Սահակը դրկել:

— Երթանք, երթանք, բոսին կիներ, տղաքն ու աղ-
ջիկը: Նայէ՛, հինգ հազար լիբանանեան դրկած է. մենք
տարիներով կ'աշխատինք եւ հազար դահեկան չշահե-
ցանք:

— Ը՛իշտ է, պատասխանեց Մինաս, բայց այս հել-
ուանն այլեւ մեզի համար քաղցր է, մեզի հաց ու ջուր
տուաւ, մեզի տանիք եղաւ, բարեկամներ ունինք: Քիչ
թէ շատ լաւ կ'ապրինք:

Դարձեալ նամակին վրայ նայեցաւ, Փրանսերէն նա-
մակը համբուրեց. սրտին վրայ գրաւ, կարծես թէ Սա-
հակին դէմքն ըլլաւ, շունչն զգար, սրտի բարախումը
խէր:

— Խե՛ղճ Սահակ, հայերէնն ալ մտցեր է, ըսաւ.
հ'հ, կրակէն, բոցէն անցնողն ամէն բան կը մոռնայ.
անշուշտ եղբորս մահն աչքերուն առջեւ եղաւ: Ինքն ա-
ղատեցաւ մահէն. բայց որբութիւնն ալ կէս մը մահ է:

Մէկէն չկրցաւ որոշել իր ընելիքը: Դիւրին բան չէր
տուն տեղ ֆախել եւ երթալ օտարին երկիր նոր տուն
չինելու համար: Իրենք լեզու չէին գիտեր, ծովը նետ-
ուած անդիկ նաւակի մը պիտի նմանէին:

— Քիչ մը մտածենք տղաքս, ըսաւ, հարցնենք քա-

ուրիշին բան չըսես, վրադ կը խնդան: Հոս դրամ ունեն-
ցողները մասնաւոր պայտաններ կան՝ հոն կը դնեն եւ
ուզած ատենին կ'առնեն. եւրոպերէն ասոր պահագա
կ'ըսեն: Դրամ կը դնես՝ թուղթ կու տան, թուղթ կը
տանիր՝ դրամ կու տան:

— Ի՞նչ աղէկ բան: Աւետ սա տան մէջ եղած թուղ-
թերն հաւաքէ, տար դիր որ դրամ տան: Ես սա բանե-
րէն չեմ հասկնար. մեր տեղը դրամը կամ մեր դուռը-
ներուն մէջ կը պահէինք կամ բարձի տակ, եւ կամ ալ
ախտը աճպօսի ծակ մը կը դնէինք՝ որ ստտանան
չգանէր:

Յաջորդ օրը Մինաս խանութ գնաց, կ'ուզէր լաւ մը
հասինալ իր ընելիքը: Հարցուց Սահակ բեռնակիրին,
դրացի Յակոբին, Ատանացի Յովհաննէսին, ոչ մէկը
կրին լոյս տուաւ:

— Սա Միհրանն ալ ինչո՞ւ կ'ուշանայ, ըսաւ ինքն-
իւրեն. քանի մ'օրուան համար Դամասկոս գնաց թափարդ
ծախելու, կ'ըսեն թէ լաւ առեւտուրի հրապարակ է:
Հիւղուանը լսեց Մինասի նամակին պարունակու-
թիւնը. կնիքները գաղտնիք չէին կրնար պահել: Ծարան
չարան աչքի լոյսի եկան: Մինաս ներուած՝ եկողին շը-
նորհակալ եմ պատասխանեց եւ դրամէն աւելի իր Սա-
հակ թունիկի վրայ խօսեցաւ:

— Ոսկի ցանե՞ս՝ անոր պէս չի բուռնիր, հրեշտակ
չը, խելացի եւ եղբիքի պէս գեղեցիկ հասակ ունէր:
Ատուուած զինքն ազատեց Մխիթարեանն եւ հիմա փա-
րիզ կը բնակի պարոն Լաֆայէթին քով: Քանի մը օր
յետոյ Միհրանն ալ հասաւ: Վարդուհի ընդառաջ վա-
ղեց եւ ճշող ձայնով ըսաւ.

— Միհրան, սքանչելի լուր մը, Փարիզ կ'երթնանք:
Հօրեղբորս տղան Սահակը գտնուեւր է. նամակ գրելը է

եւ Ծրանասայն գրած է. գիտնաս թէ ի՞նչ դրամ դրեցը
է: Հոն հող կը բռնեն՝ ոսկի կը դառնայ: Հինգ հազար
լիբանեան, դուն քանի՞ տարի պէտք ես աշխատիլ
չիսդ հազար դահեկան վատակելու համար:

— Ինչո՞ւ կեցեր ենք, երթանք, պատասխանեց Միհ-
րան, ալ ձանձրացայ այս երկիրներէն. տան օր Դա-
մասկոս կեցայ, տասը թափարդ չկրցայ ծախել, այդ
մարդիկը միներուն հետ կը պառկին, միներուն հետ
կ'ելեն:

— Հայրիկս շատ համաձայն չէ, հետու եւ օտար
երկիր է կ'ըսէ. դրախտը մեր կողմերն եղած է, Աս-
տուած հոն Նոյ նահապետին հետ խօսած է, օրհնեալ
երկիր է, կրնայ ըլլալ որ Սիս ալ կը վերադառնանք:
Գիտես, հին դուրս է. նոր զլխարկ կարելի չէ դնել:
— Ես կը համոզեմ, պատասխանեց եղբայրը:

Մինաս արտուած աչքերով խանութին նայեցաւ,
սիրտը չէր ուզեր բաժնուիլ, իրենց հաց տուած էր, շո-
չափեց թիթեղէ պատերը, զգաւ ամէն մէկ տասրկա-
թին, այս մը քաջեց եւ անիծեց Հայուն բախտը որ կեան-
քին մէջ տուն չիներով, տուն քանդելով կ'սպրի: Երե-
կոներն հանգիստ չունեցաւ, կինն ու դուստրները միշտ
երթանքի վրայ էին. իր սիրտն ալ կը մորմոքէր, Սա-
հակ տեսնել, Սահակը համբուրել: Ուր էր ան, ինքը
պիտի ըլլար հայր, իր Յակոբ եղբայրը, այդ երեսու-
սուրիքն վրայ օրհնեալ ձեռքը տարածելու համար:

— Աւետ, տղաս, հարցուր սա դործատէրիկ թէ ինչ
պէտք է ընենք դրամն առնելու համար: Կը տեսնեմ որ
կամաց կամաց սիրտս կը բաժնուի այս հիւղուանէն եւ
կուռնիկի պէս դէպի Փարիզ կ'երթայ Սահակը գրեկու-
համար, ըսաւ Մինաս սխուր շեշտով: Տունէ մը բաժ-
նուիլ կը նմանի մէկուր մը՝ որուն կաշին կամաց կամաց

կը հանեն: Խեղճ Հայութիւն, խեղճ Հայութիւն, ով գիտէ քանիններ մեզի պէս ախ ու վախով բաժնուած են իրենց տուներէն, նոր մը չինելու համար:

Եարթ մը վերջ Մինաս խանութ չգնաց. այդ օրը պէտք էր զբամառուն երթալ Աւետի վարպետին հետ, զբամը քաշելու համար: Ինքը սովորականին պէս հասաւ իր գլխածնէն եւ եղաւ նոյն Մինասը. բայց կրնն ու աղջիկը վրան թափեցան:

— Գնա՛, սա պիտեղ մտցրող չտկել տուր, երեւոյ ամիլէ, ըսաւ կրնը: Վարդուհի, բաճկոնին կոճակները փայլեցուր, սա ժամացոյցն ալ կուրծքէդ կախէ, շըրթան լաւ տեսնուի. հիմա հարուստ մարդ ես. տեսնողն ըսէ թէ բախտաւորը Մինասն է, եղբորդդ մ'ունի որ փարից կը բնակի:

Մինաս շատ տկանը չկախեց, բայց պիտեղն ոլորեց, Քէսը քիչ մը ծուռ դրաւ, ծուրը ետեւէն ձգեց որ ճօճանակի պէս երթնայ ու գայ: Չեռօքը դաւազան մ'առաւ.

— Երթանք, Աւետ, տղաս:

— Ինքնաշարժ մ'առ, ըսաւ աղջիկը, ասանկ ո՛ւր կ'երթաս, Սիւի ալիքն պիտի չերթաս: Քիչ մը աղայի ձեւ առ. թաղը դիտէ թէ հին Մինասը չես:

— Ինքնաշարժը պէտք չէ ինձի, հայրս մայրս այսպէս գացեր եկեր են, ես ալ իրենց պէս կ'երթամ. մեզք որ մեր ձին տարին այդ աւազակ սեցի թուրքերը: Ինքնաշարժն հազար անգամ լաւ էր. պուլսը բարձր կը բռնէր, ոտքերը նազիկ կը դնէր, երբ կը խրխնջէր՝ ձորերը ձայն կու տային: Քալենք, տղաս:

Քիչ մը ծուռ, քիչ մը կոր քալուածքով անցաւ հիւրաւանի խորտուիորտ ճամբաներէն, տեսնողը բարեւ կու տար. թաղին ծանօթ փայտավաճառն էր, բարբ մարդ

էր, աղքատին կ'օգնէր: Կամուրջ մը կը դատէր հիւրաւանը քաղաքի մասէն. անդին քարաշէն տուն տան վրայ, գործատուներ ամէն կողմ, ոսկերիչներ իբրար մօտ շարուած: Ետ խանութներ հայերէն վերատառութեամբ էին եւ Մինաս մէկիկ մէկիկ կարգալով առաջ կ'երթար: Աւետին վարպետը թէպէտ արար կրն ունէր, ձիգուիթն երուն քով սորված էր ու Քրաններէն կ'աղօթէր, բայց լաւ մարդ էր եւ աշխարհէն կը հասկնար:

— Բարբ եկար, Մինաս աղբար, ըսաւ պարն Տասմատեան, Աւետին վարպետը. նստէ նայինք: Ես Աւետէն շատ դո՛ւ եմ: Սարգիսին հետ աղբոր պէս են եւ լաւ կ'աշխատին: Ատողջութիւնդ լա՛ւ է, հանգիստ կ'ապրիս: Աստուած չընէ որ հիւանդ ունենաք:

— Չէ՛, փառք Տիրոջ հիւանդ չունինք, ատողջութիւնս լաւ, բայց փորձա՞նք բսեմ, թէ բախտ բսեմ, նամակ առինք փարիցէն. եղբորս զաւակը Սահակը զբռնուեց է եւ մեզ կը կանչէ:

— Բախտ ըսէ, բախտ. ամէն մարդու սուղեւ երկինքն ոսկի չի թափիր: Փարից Լոյսերու քաղաք է. գիշերն այնքան Լոյս կայ՝ որ կրնաս փողոցին մէջ նարտ խաղալ: Երթանք զբամառուն:

Դրամատուներ մօտ էր, Մինաս իր գաւազանին աւելի ամուր կռօնեցաւ. կտրանիւթ փողոցի վրայ քալելու վարժ չէր, կրնար սահել իջնալ: Կեանքին մէջ առաջին անգամ այդ կողմերը կու գար:

— Աս թուղթին վրայ ստորագրէ, ըսաւ պաշտօնեան: Փրանսերէն պէտք է գրես:

— Ես հայ եմ, հայերէն կը գրեմ, պատասխանեց Մինաս:

— Չէ՛, Փրանսայի մէջ հայերէն չեն հասկնար, ըսաւ պաշտօնեան:

— թող սորվին, Աստուծոյ լեզուն է, պատասխանեց Մինաս:

— Հող չէ, թող հայերէն ստորագրէ, դուն ալ տա՛ւր Քրաններէն գլբը, բաւ Տամատեան:

Մինաս երեսը խաչակնքեց, մերանը թաթխեց, նախ Աստուած բաւ, եւ անունը դրաւ թուղթին վրայ: Պաշտօնեան հարիւրնոց զահեկանները համբոց եւ Մինասին յանձնեց: Սեղճ մարդը զարմացաւ թէ մէկ թուղթի կըտորին փոխարէն որքան դրամ տուին:

— Աւետ, տղաս, գնա՛ մեծ թաշկինակ մը գնէ, մէջը դննք ու տանինք:

— Մինաս աղբար, բաւ Տամատեան, փամփուռ է այսքան դրամ հետը տանիլ, զողեր շատ կան, տունդ աղահով չէ. հինգ հարիւր զահեկան տու, մնացածը դրամատուն ձգէ, ուզած ժամանակդ կրնաս գալ եւ գլբոցնել:

Մինաս համոզուեցաւ, թուղթեր ստորագրեց:

— Եթէ քանի մը թուղթ ալ ստորագրեմ աւելի գլբում չե՞ն տար, հարցուց Մինաս:

— Չէ՛, ինչ որ ձգեցիր՝ անիկա կու տան, պատասխանեց Տամատեան:

— Պարոն Տամատեան, հողիդ մատաղ, լաւա Մինաս. ու Սահակին հասցն ալ գրէ պահարանի մը վրայ, նամակ մը գրենք: Քաղաքին անունը թող Քրանսերէն ըլլայ, բայց Սահակին անունը կրնանք հայերէն ալ գրել:

Տամատեան ժպտեցաւ եւ իր պաշտօնատան մէջ գլբոց Սահակին հասցն:

— Ո՛հ, լաւ, Լաֆալթ փողոցը կը բնակի. հալուստ սովորեցնելու թաղն է:

— Իմ Յակօբ եղբայրս սովորել էր, կաթողիկոսա-

բանի սկիհ, խաչ եւ արծաթեղէն ինքը կը շինէր. Սահակ ալ բան մը սորված էր, ճարտիկ էր:

— Եթէ այս պահարանին վրայ մէկ զահեկան փակցնեմ՝ կը տանի՞ն, հարցուց Մինաս:

— Չէ՛, թղթադրոջմ պէտք է, պատասխանեց Տամատեան, եւ դարակէն թղթադրոջմ հանելով վրան փակցուց: Գրեցէք, գրեցէք եւ թղթատարին յանձնեցէք, կ'երթայ Սահակին կը հասնի:

— Չեւբդ համբուրեմ, լաւա Մինաս. ոսկի սրտով հայ ես. մեղք որ կինդ արար է եւ դուն Քրաններէն կ'աղօթես:

Տամատեան խնդաց եւ մտքն իրաւունք տուաւ, եր տունը երջանիկ չէր. զոաց թէ այսպիսի պարզամիտ հայերը աղբը կը շինեն. հայ հողին կապուած են եւ ազգին տունը կը պահպանեն:

— Հիմա կրնանք մեկնել, հարցուց Մինաս:

— Չէ՛, պէտք է Քրանսական հիւպատոսէն լրենց երկիրը մտնելու թուղթ հանել, չոգնաւի տոմսակ գրենել մեկնելու համար: Երբ մեկնիրդ որոշես, ինձի եկուր, կը կարգադրեմ պէտք եղածը:

— Աստուած հորդ ու մորդ հողին լուսաւորէ:

— Իմ ծնողքս դեռ ողջ են, պատասխանեց Տամատեան:

— Աւելի լաւ, թող երկար արեւ շնորհէ, ցաւ ու փորձանք չտեսնեն:

Երբ տուն վերադարձան, աղջիկը վրան վաղեց:

— Հայրիկ, եղա՞ւ, ե՞րբ կ'երթանք:

— Չէ՛, չեղաւ:

— Արդեօք ե՞տ կեցար:

— Չէ՛, առաջ դացի:

— Մինաս, հարցուց Սիրարփի, ամէն բան եղա՞ւ, մեկնելու պատրաստուի՞նք:

— Չէ՛, չեղաւ դեռ:

— Անպա՛սման քու չին դիտողդ ետ կեցող երթալէն: — Ետ չկեցայ, առաջ դացի ետ եկայ. նորէն առաջ պիտի երթամ. աշխարհ մեր դիտացածին պէս չէ:

— Իրամներն ո՞ւր են, հարցուց դարձեալ կինը:

— Իրամատուն գրի, թուղթ մը տուին, թուղթը կու տամ՝ դրամս կ'առնեմ: Մեր տունն ամէն կողմ ծակ ունի, մեր ախոռներուն պէս չէ, գողերը կրնան մտնել տանիլ:

Աւետ ամէն բան բացատրեց եւ մայր ու աղջիկ հանդարտեցան:

— Իրամահրսի մէջ բան չկրցայ ծախել, հայրիկ, բաւ. Միհրան: Քսան հատ տարի՝ երեսուն թակարդ ետ բերի: Անոնք միկերուն հետ հաչտութիւն ըրեր են:

— Հող չէ, տղաս, քէչ մը դրամ մենք ունինք, եղբորս տղան ալ աշխարհքին բանը դրկեր է: Նայինք է՞նչ պիտի ընենք, երթանք թէ չերթանք:

— Չերթանք կ'ըլլա՞՞յ, հայրիկ, ծովերը ճամբայ բացին, դուն նապաստակի պէս լեռները կ'ուզես փախել, պատասխանեց Միհրան: Այսպիսի բախտ Պէլուսի մէջ մտրդ չունի:

— Այո՛, այո՛, մատող ըլլամ Սահակիս արևուն: Ատող ատողի չի հանդիպիր, բայց սիրելին սիրելին անպա՛սման կը հասնի: Գրիչ, թանաք բերէք սա Սահակիս նամակը գրեմ, խեղճին աչքը ճամբան կը մնայ:

Շիւղաւանին մէջ հազիւ ճարեցին գրիչ ու մեկան, Մինաս հանդիսաւոր կերպով բազմեցաւ իր սովորական տեղը: Երեսը խաչ հանեց, ամփոփուեցաւ, աչքերն երկինք դարձուց ըսելով.

— Նախ Ատուած, յետոյ մենք:

Սահակ, որդիս, աչքիս լոյսը, սրտիս կէսը. երեզ պաղնեմ, աչքս աչքիդ դնեմ, կարօտս կարօտիդ խառնեմ: Ես, Սիրարփին, Միհրանը, Վարդուհին եւ Աւետը, Ատուածոյ ձեռքին մէջ ողջ ենք: Սիրսի կրակին մենք այդին էինք եւ աղափեցանք, եկանք Պէլուսի եւ հիւղաւանի մէջ կ'ապրինք: Միհրան միկերու թակարդ կը չինէ, Աւետ գործատան մը մէջ կ'աշխատի, ես ալ փայտ, ամուսիս կը ծախեմ. էհ, քէչ թէ շատ կ'ապրինք: Բոլորս մտրդ ապառի. Ատուած քեզի արեւ տուաւ, որ մեզի ալ լոյս տաս: Արեւդ սիրեմ, թող միշտ կանաչ ըլլայ եւ ծաղիկի վրայ նայի: Նամակդ միշտ ծոցս կը պահեմ եւ առտու երեկոյ կը համբուրեմ. կարծես թէ Սահակիս տաք երեսներն ըլլան: Մէջի թուղթն ալ առի տարի դըրամատուն, ահագին փող տուին: Ատուած չէն պահէ Տամատեանը, Աւետին վարպետը, ամէն բան բրաւ մեզի համար: Կ'ուզես որ ընտանիքով քովդ դամ, սիրտս ալ այդպէս կ'ըլէ, բայց հոս Միսին մտն ենք, կրնայ ըլլալ որ փաղը միւս օր վերադառնանք հայրենիք. ինչ գիտնամ. Ատուածոյ բանն է: Ծիծեռնակն ալ կ'երազէ այն բոյնը ուր ձագեր հանեց. թէպէտ բարեկամներ կ'ըսեն թէ ալ յոյս չկայ. Թուրքը ճանկերուն մէջ առած է, Ճրանասցին ամէն բան ձգեց ու փախաւ եւ մեր կիլիկիան ալ որը մնաց: Հայու ճակատագիրը սեւ է, տրդաս, ամէն օր արեւ կը փոխենք, նոր տուն կը շինենք: Կոտորին այն ձեռքերը որ մեր պապեակաւն տուները քանդեցին:

— Հայրիկ, գրէ որ երկու շաբաթէն ճամբայ կ'երևնք, ըսին տղաքը:

— Եթէ չելլենք, խեղճին վիզը ծուռ կը մնայ. չէ՛, սոսիս քան տեղն ըլլայ, նորէն կը գրեմ :

— Սահակո, հողիս, եթէ գալու ըլլանք, չարուանակեց Մինաս, քեզի լուր կու տանք, սիրով Ժամի ամուսնունէ, Ժամանակը շուտ կ'անցնի եւ զիկար կը համարուանք :

— Ինչ կ'ըլլայ, հարիկ, ըսաւ Վարդուհի, գրէ թող ինձի փարիզին գիեստ մը զրկիչ. այս տարուան նորոթին ըլլայ. քղանցեմքը կարճ մինչեւ սրունքներս. զժամը ուր թիւնն ալ փարիզեան նկարներով :

— Եւ կ'ըլլա թանկեղանի խամսճիկ : Ես խենթ բաներ չեմ գրեր, ծուռիկըդ ալ քեզի պահէ, ցոյց տալու աղբանք չեն : Տէր ողորմեա՛, հիմա սիրանք փարիզի դամալ : Գրելիքս մտոցայ :

— Պիտի գրէիք թէ ինձի ալ գուցէ մը մետաքոս գուրկալ եւ գուցէ մը փարիզեան կօշիկ զրկիչ, աւելցուց Սիրարիի :

Մինաս ծուռ ծուռ նայեցաւ կնոջը եւ սխառ գրել : Սիրելի Սահակո, նամակս կը փակեմ Աստուծոյ անուամբ, եթէ չարունակեմ Պէլլուսի ճամբաներն ալ չեն բաւեր ասոնց ուղանքըդ գրելով : Հազար համբուր ճակատիդ, հողար համբուր աչքերուդ. դուն ողջ ըլլաս, մենք ողջ ենք. Ամէն :

Նամակը պահարանին մէջ դրաւ, լաւ մը թփփոնց ու փակեց :

— Աստուած տանի, Աստուած բերէ : Տէրը մեզ կարու չպահէ :

Քանի մը անգամ համբուրեց նամակը, աչքերը լեցունեցան : Կարծես Սահակին երեսը տեսաւ, երեք զաւակ ունէր հիմա, չորրորդ մ'ալ պիտի ունենայ : Գրեթէ Ա-

ւետին տարեկեց : Սիրելի Սահակը որ կորուսած էր եւ գտնուեցաւ :

— Աւետ, ա՛ն այս նամակը. վաղը վարպետիդ տար որ փարիզ ճամբէ, ըսաւ տղուն, ինքը մարդ ունի, ճամբաները գիտէ :

Որքան օրերը կ'անցնէին, Մինասին սէրը խանուրթին հանդէպ այնքան կ'աւելնար, թիթեղէ տունը պալատի կերպարանք կ'անէր իր աչքերուն. մտերմութիւն կը դրար այդ երկու խարխուլ շէնքերուն հանդէպ, ուր ցաւ եւ ուրախութիւնն իրար խանուած ապրեր էր : Մինչ տղայը աչքով ու սրտով կը հեռանային եւ կարծես թէ փարիզի մէջ էին :

— Հարիկ, ալ թակարդ չեմ շիներ, պէտք է մեկնուածի պատրաստութիւնք. դու խանութը պարպելու նայի, ըսաւ Միհրան : Կրնանք բաւարար գինով ծախել. տունն ալ ծախել ուրիշին, գնողներ շատ կան :

— Կեցիք, տղաս, պատասխանեց հայրը : Նոր կօշիկ չգնած, հինը չեն նետեր :

— Մինաս աղբար, եկաւ մէկը, լսեցի որ խանութդ տարու է : Ես կ'ուզեմ գնել :

— Չէ՛, չեմ ծախեր, պատասխանեց չոր կերպով :
— Տո՛ւնդ ալ չես ծախեր, հարցուց դնողը : Լսեցի որ փարիզ կը փոխադրուիս, հարստացեր ես :

— Մինասը, Մինաս կը մնայ, եթէ զրգանը հարկեր հազար դահեկան ալ ունենայ : Բարեկամ, ես ծախու աղբանք չունիմ, եթէ մկներու թակարդ մը կ'ուզես գրնել, վաղը խանութս եկուր :

Յաջորդ օրը Մինաս իր խանութը կանչեց բեռնաուկիւր Սահակը, անոր Շուշան կինը եւ Սարգիս տղան :

— Սահակ աղբար, բարի մարդն Աստուծոյ արին մէջ կը նայի, չարը՝ սատանային, ըսաւ լուրջ կերպով :

— Տղաս, ոչ մէկ բանի դպիր. ես խանութի եւ տան խնդիրն արդէն կարգադրեցի. եթէ կարելի է շարաթէ մը կը մեկնիք:

Կինը վիղը փաթթուեցաւ, աղջիկը վիղը փաթթուեցաւ:

— Վերջապէս, ըսաւ Սիրարիի, սիրտս դողի մէջն էր թէ չմեկնէիր:

Յաջորդ օրը Սահակ բեռնակիրը, լաթի մէջ բան մը պլլած Մինասին տունն եկաւ:

— Մինաս աղբար, ըսաւ մեղմ ձայնով: Դուն ինձի խանութի եւ տունդ նուիրեցիր, առանց փոխարէն բանի մը սպասելու: Հայրենիքէն եկած ատենն ոսկի տասին չէի բերեր, բայց թաշկիճակի մը մէջ մեր երկրին կարմիր հողէն դրի, ըսելով, ով գիտէ ո՞ր նահատակին արինէն շարուած է, թող օտար երկրի մէջ գերեզմանի կարծիք պատանձք ըլլայ: Ան այս կէտը, արեւդ երկար ըլլայ, բայց մահը միշտ կայ, երբ մեռնիս թող վրայ գրանեն, կարծիք պատանձք, եւ բանն թէ երկու եղբայր մէկ պատանձքի մէջ դրին:

Սահակ բեռնակիրը խաչակիքեց հողը, կէս ըրաւ եւ տուաւ Մինասին: Երկու ծերունիներ իրար նայեցան եւ իւրաքանչիւրը պողոտց մը հող ատնելով իրենց աչքերուն քնեցին:

— Սահակ աղբար, դուն ինձ հայրենիք մը տուիր, ո՞ր ազնի աշխարհի հողի մը ունի. մէկն իրեն հետ հող ատած է, միւսն իր տան բանալին, ուրիշը խաչքարի կտոր մը: Ուր որ երթայ իր հայրենիքն հետը կը տանի: Ան՛ի՛ճք այն ձեռագրունն որ մեր տունները քանդեցին:

— Մի՛ անխճեր, Մինաս աղբար, մի՛ անխճեր. Աստուած գիտէ իր բնեւթը, արդարին դատն ինքը կը տեսնէ:

դուն բարի ես, թշուառ գաղթականներով այս հիւրանանին մէջ, ծանր բեռ մը ուսերուդ վրայ դրեր են եւ ամէն օր ծուելով գերեզմանին կը նայիս: Ես փարկդ պիտի փոխադրուիմ, ալ չեմ գիմանար ընտանիքիս ճնշումներուն եւ եղբորս տղուն Սահակի կարօտին: Սանութիս եւ տունս գնողներ շատ եկան, չեմ ծախեր ըսի, մխտօս դուք էիք: Գեղի կը նուիրեմ, Սահակ աղբար, որ գէթ կեանքիդ վերջին ժամանակները պատառ մ'աւելի տես: Մէջն ինչ որ կայ քուդ է, ահա բանալին, բարոյ վայելիս: Մեկնումիս օրը տունս ալ քեզի կը նուիրեմ, բնակարանդ հաւնոց է, ծախէ, բան մ'ըրէ եւ իմ տունն անցիր: Սարգիսդ ամուսնացուր, կինդ ալ մաշած հիւսած է, երիտասարդ ձեռքի պէտք ունի: Երանի թէ մեկնելէս առաջ հարսնիքն ըլլար:

Բեռնակիր Սահակն իր ականջներուն հաւատաց աչքերը լեցուեցան յողմած արցունքներով:

— Մինաս աղբար, հաւատամ՝ սուտ կ'ըլլամ, հաւատամ՝ ուրախութենէս կը մեռնիմ. դուն ինձի երկու կեանք տուիր, նախ տղաս չար ճամբաներէն դուրս քանչելով, եւ հիմա խանութի մը եւ տուն մը ոտքերս երկարելու տեղ ունենալու համար: Աղքատ մարդուն կեանքը աշխարհի համար բան չ'արժէր, բայց ընդունէ բեռնակիր Սահակին հինգստ սիրտը որ տարիներ ցուելու ատեն եղաւ:

Սահակ համբուրեց Մինասը, տղան ձեռքը պողաւ, կիներ ոտքերը դրկեց:

— Բայց հիմա խանութին դուրսը, ըսաւ Մինաս, եւ մտիւր իբր տէր տիրակալն: Աստուած յաջողութիւն շնորհէ:

Մինաս տուն վերադարձաւ, Աւետ դործի էր. Միսրան տան անկարելու բաները կը հաւաքէր:

— Ես տղաքս կը տանիմ, բայց Փրանսացի չեմ ընեմք. հայ են, հայ կը մնան, օր մ'ալ Սխո կը դառնանք: — Երկերկու լուսանկարներ բերէք, ըսաւ հիւպատարանի պաշտօնեան:

Հարկ եղաւ որ Մինաս եւ իր ընտանիքը քանի մը անգամ երթան դան անցազիր տանելու համար:

— Աս ի՞նչ է. մեզ արքայութի՞ւն պիտի տանին որ կը քաշեն ու կը քաշէն, նեղուած ըսաւ Մինաս:

Մինասին լուսանկարն ալ արուար չէր ելած, պէտքերուն մէկը վեր, միւսը վար էր, կուրծքին ժամացոյցի շլթան քէչ կը տեսնուէր. Ֆէան ալ վիթէն հանած էին, բայց պիտով պէտք է եղեր: Ծառ ստիպեցին որ նորէն քաշուի, բայց նա մերժեց:

— Լուսանկարիս չ'անողը թող ինձի նայի, ըսաւ: Իջան շողենաւ ընկերութեան գրասենեակը. այս անգամ Միհրանն ալ հետեւին էր:

— Ի՞նչ կարգի տոմսակ կ'ուզէք, հարցուց պաշտօնեան:

— Ծոզենաւով պիտի երթանք, կառքի տոմսակ չենք ուզեր, ըսաւ Մինաս:

— Գուն բնաւ ճամբորդո՞ր ես, հարցուց պաշտօնեան:

— Այո՛, հիանալի ձի մ'ունէի, անով մինչեւ Զէյթուն, Ալպիտան դացեր եմ, խերն անիծածները ձիս ալ տաին:

— Զէ՛, չողենաւով կը հարցնեմ:

— Այն ատեն, ո՛չ:

— Երբորդ կարգի տոմսակ տուր, ըսաւ Տամատեան, որ ուտելու եւ պառկելու տեղ ալ ունենան:

Պաշտօնեան տոմսակները յանձնեց, հազար դահեկան վճարեցին մինչեւ Մարտիկա:

Մինաս հողը մետաքէ կարմիր թաշկինակի մը մէջ պլլեց եւ զարակին վրայ դրաւ: Երբ Սահակ մեկնեցաւ, կին ու աղջիկ վրան վազեցին:

— Մարդ, ի՞նչ րեր ես, խանութն ու տունը նըւէր տուեր ես այս մարդուն:

— Հա՛, նուէր տուեր եմ. անկուշտ մարդուն աչքն ոսկիով ալ լեցնես, նորէն բայ կը մնայ: Թաղին մէջ ամէնէն բարի եւ ազնիւ մարդն է Սահակ, իր խնորհ եւ աղքատ կերպարանքին տակ Պէյրութի հարուստներէն աւելի մեծ սիրտ մը կայ, հախազան սիրտ. տես՞ սա՞ք հետն ինչ բերած էր. Հախաստանի կարմիր հոյ. ինձի համար հազար տուն կ'արժէ, հազար խանութ կ'արժէ եւ ես սիրով նուիրեցի տունս ու խանութս:

Մինաս այլեւս խանութ չզնայ, երբեմն առջեւէն կ'անցնէր Սահակին քով նստելու եւ սուրճ մ'տանելու: Միհրան, կինն ու աղջիկը աւելի եռանդով լծուեցան տան արարանքներն հաւաքելու համար:

— Աւետ, ըսաւ հայրն երեկոյ մը, ալ գործատուն երթալու պէտք չկայ. վայր միտան գարձեալ Տամատեանին երթանք, Փրանսա մտնելու թուղթ չիենք. շոգենաւ խնդիրը կարգադրենք, անշուշտ քաղելով չենք կրնար երթալ, մէջտեղ ծովը կայ:

Փրանսական հիւպատարանը բազմութեամբ լեցուած էր, գրեթէ բոլորն ալ հասեր էին, կիներ, աղջիկներ, պատանիներ եւ տարեց մարդիկ Փրանսա կը մեկնէին:

— Պարոն Տամատեան, ասո՞նք ալ փող ստացեր են, մարդ ունի՞ն որ կ'երթան:

— Ծատերը գործ փնտռելու կ'երթան. հարուստ երկիր է եւ մարդու պէտք ունի, բայց աւելի երկրտարդներ կ'ուզեն քան թէ ծերեր:

— Ծարաթ երեկոյ, ժամը Տին կը մեկնի շողենաւը, երեք ժամ առաջ մէջն եղէք, ըսաւ պաշտօնեան :

Մինստ համբոց օրերը մամներուն վրայ եւ ըսաւ .

— Ուրեմն հինգ օր կայ :

Տան մէջ ետուգուն ամէն օր կը շամնար, ճանչցող, դրացի միշտ հօն էին եւ խորհուրդներ կու տային : Խեւուրայ Սոֆին իրենցմէ չբաժնուեցաւ : Ամէն առաքիլայի ձեռք զարկելուն,

— Երանի՛ ձեզի, կ'ըսէր :

Մինստ միայն իր «Բագմալէպ»ները հողաց, խրնամքով կապեց եւ բարոցին վրայ դրաւ :

— Մարդ Աստուծոյ, ձգէ ատունք, հօն Փրանսական հաղար ու մէկ թերթ կայ :

— Քեզի պահէ, ըսաւ Մինստ չոր կերպով : Ուր որ ես եմ, այս թերթն ալ հօն է . շապիկս կը ձգեմ եւ «Բագմալէպ»ը չեմ ձգեր :

Մինստ թոյլ չտուաւ որ անկողինները, խոհանոցի առաքիլները կապեն :

— Միայն ձեր անձնական իրեղէյներն առէք, ըսաւ անեցիներուն :

Ծարաթ առաւօտ, Յուլիսի տաք ու խոնաւ արեւուն տակ ճամբայ ելան : Մինստ ուզեց ստաբով երթալ, բայց երկու ինքնաշարժներ դրան դիմացն էին, բռնի զինքը մէջը խոթեցին : Ոչ մէկուն բարեւ կրցաւ տալ, սիրտը կեցուած էր, կրիայի կը նմանէր որ իր կեղեւէն կը բաժնուէր :

Ելան շողենաւին վրայ . քիչ թէ շատ տեղաւորուեցան :

Երբ շողենաւը խոպոտ ձայնով սուլեց եւ մեքենաներն սկսան շարժիլ, Մինստին վրայ դող եկաւ, կարծեց թէ երկրաշարժ կայ . ուժով բազրիկէն բռնեց : Պէյ-

րուին սկսաւ կամաց կամաց հեռանալ . ան մէկ ձեռքը դրպանը մոցուց, հանեց կարմիր թաշկինակն ու աչքերուն տարաւ : Մեկնումի ժամանակ լացը սովորական բան է, սակայն Մինստին լացը ուրիշ բան էր . ամբողջ Ախը, հիւղաւանն իր մաքին առջեւ եկան, անձրեւէր պէս քրտինք թափած էր իրեն եւ զաւակներուն համար երջանիկ կեանք մը ստեղծելու . հիմա բախար պինքն օտար ամբեր կը նետէր, երեք անգամ պանդուխտ կ'ըլլար :

— Հայու սեւ ճակատագիր, ըսաւ ինքնիրեն, բայց լացը չզարգեցաւ :

— Հայրիկ, տղա՞՞ս ես, ինչո՞ւ կու լսաւ, ըսաւ վարդուհի, մարդիկ լ'ոնչ պիտի ըսեն :

— Թող ի՛նչ կ'ուզեն ըսեն, իմ սիրտս ես գիտեմ, պատասխանեց հայրը :

Պէյրուսի արդէն մշուշի մէջն էր : Բաց ծովի վրայ էին, հազիւ հեռաւոր ամբեր կը տեսնուէին : Ծովենաւը Նոյ նահապետի տապանին կը նմանէր, չըսեմ ամէն տեսակ կենդանիներ կային, բայց հազար ցեղէ մարդիկ իրարու վրայ լեցուած էին : Մինստի տղաներն արդէն քովը չկային, կիներ միմեկ իր մօտն էր, բայց անոր աչքերն ուրիշ տեղ էին, ծովն ու մարդիկը կը դիտէր :

— Նայէ՛, Մինստ, ըսաւ կինը, աշխարհն ալ սա է . մարդ մարդու քով երջանիկ կ'ըլլայ . տես սա բազում-թիւնը, քեզի պէս լացող չկայ, թերեւս քեզի պէս բախտաւոր ալ չեն հարուստ երբօրորդի մը դմենքու :

— Կնիկի, քովէս դնա՛, պատասխանեց Մինստ, դըրուխտ կը բռնէ :

— Ծո՞ղը կը բռնէ, շուտ անկողին դնա՛, պատասխանեց կինը :

— Չէ՛, այս խառնճաղանճը, մարդ բեռ՝ մարդու չնորհք չունին, աշխարհիս ո՞ր տեղէն եկած են այս

չի, վրան կը խնդան, կամ մախրապետ է, կ'ըսեն, կամ գեղջուռչի. հայրիկ, ես ամօթով չեմ ուզեր մնալ:

— Մայրդ ու եղբայրներդ ալ չե՞ն դար:
— Եթէ կ'ուզեն՝ կրճան դալ, դուն ալ կրճաա դալ, մարդ տես, աշխարհ տես, փարիզ պիտի երթանք, դիւ-դացիի պէս քաղաք չմտնեք:

— Ես մարդ շատ տեսեր եմ, դուք դացեք:
Նուազի ծայները կը լսուէին, երեք կարգերու մէջ ալ պարահանդէս կար: Մինաւ հետաքրքրուեցաւ, կամացուի մը սրահը դնաց, բայց ինչ տեսնէ...

Երեք օր Սիրարփիին հետ չխօսեցաւ, իր աչքն եւ լամ չէր, մինչեւ որ դաւակները մէջ մտան եւ հաշտեցուցին:

— Ես Ստեցի եմ, Ստեցի կը մնամ, իմ Փէտովս եւ շալտարովս, բաւ յուզուած. մեր ազգին տնական սրբութիւնը, մեր սովորութիւնները չեմ փոխեր, չեմ փոխեր այդ լիբր պղքեւուն հետ: Փարիզ պիտի երթանք եղբր եւ պէտք է պարել: Յետո՞յ, մեղալ, մեղալ...:

— Իրաւունք ունի, բոն անդիկն երկու հայ պառանդ:
Ազգի որ Սիրարփին չլսեց, կնիկի կուէ կը փրթէր: Երբ նաւը Նափոյի հասաւ, վետուրը կը ծխար. Աստուծոյ տուածին չափ. պալատներ, եկեղեցիներ Մինասին եւ դաւակներուն զարմանք պատճառեցին: Ծոզեաւը քարափին մտեցաւ, վարը շրջուն վաճառորդներ, խաբրաներ կը վիտային: Ազգի որ հրաման չտուին վարելուն, խեղճ Մինասին դատիկն ալ դրամները դուրս կը քաշէին:

— Ատոնց լեզուն ազուր չեչտ մ'ունի, ի՞նչ ազդ են, ի՞նչ լեզուով կը խօսին, հարցուց Միհրանին:

— Խտալիա է, հայրիկ, կ'ըսեն թէ լաւ ժողովուրդ է, բայց այս քաղաքին մէջ գողեր շատ կան:

— Սա լեւան վրայ ո՞րքան մեծ կրակ վառեր են, դարձեալ լաւա Մինաս:

— Կրակ չեն վառած, ասոր հրարուել կ'ըսեն, կըրան հողին փորէն դուրս կ'ելլէ:

— Չընե՞ս թէ դժոխքին բերանն է: Նայէ, Աստուծոյ բանը, դրախտը մեր երկրին մէջ դրաւ, դժոխքն ալ հոս դրաւ որ այդ լիբր պարողները շխտակ մէջը նետէ:

— Չէ՛, հայրիկ, Աստուծոյ անունով մարդիկ դըրժոխք մի՛ դրկեր:

— Այսպէս է, այսպէս է, ես գիտեմ: Աւետարանն ալ դրած է հուրի եւ ձմուճի մէջ պիտի լինան:

Խտալոյ արեւմտեան ափերն հեռացան, բայց կըրդիներ երեւան: Ծոզեաւեր կու դային եւ կ'անցնէին եւ սուխով իրարու բարեւ կու տային: Մինաս վարժած էր ծովի ճամբորդութեան, բայց ճանճրացած կ'երեւըր. տասն օր է ծովէ ծով կ'անցնէին եւ Չրանասն դեռ չէր երեւար. մինչ դաւակները կուշտ կուշտ կը դուարձանային: Երբ էր խելքին հակառակ բան մը տեսնէր՝ դժուարութեամբ թուրը կը կլկէր.

— Ի՛նչ, երբտասարդ են, արդիական են, կ'ըսէր ինքնիրեն, մենք հինգած Փէտով մարդ ենք:

Աստուծո մը շողեմաւին բարձրախօսը մանաւոր յայտարարութիւն բրաւ, Մինաս ա՛լ չէր վախնար, վարժեք էր:

— Ամէն մարդ պատրաստ ըլլալ, կէսօրին Մարտիկա կը հասնիք:

Անսովոր ժխոր մը ծայր տուաւ, իրարու վրայ իր-նսով վեր ու վար կ'իջնէին: Սրահներ, կամրջակներ

բեռներով ծածկուեցան: Չէին պակասիր հրժուութեք եւ կռիւ: Մինասի ընտանիքն ալ աճապարանքի մէջ էր:

— Տղաք, ըսաւ գաւազնիւրուն, աչքերնիդ չորս բապտիսմընէն:

Իսկ ինքը թեւին տակ «Բապտիսմըն»-ները, մէկ ձեռքը կուրծքին վրայ՝ ուր դրամը կար, շարունակ անցնող դարձողին կը նայէր:

Հեռուէն բարձր ժայռ մը տեսնուեցաւ, ապա վըրան հսկայ արձան մը, ապա պալատներ, չղփենաւեր եւ աճա Մարտիրոսն: Իրար ծով պիտի թափէին՝ եթէ ոտտիկանութիւնը կարդ կանոն չընէր: Մինաս մտքով եւ աչքով փարսփին վրան էր. Մահակը կը փնտուէր:

— Ո՞ւր է Մահակը, կըսէր մտահոյ:

Արդականներ, ծանօթներ ու բարեկամներ եկան եւ տարին բազմութիւնը: Մինաս իր բնօրինակին հետ միանակ մնաց: Մահակը չկար: Նստեցան իրենց բեռներուն վրայ Մահակին սպասելու համար, բայց ան չերեւցաւ: Ոտտիկան մը հարցուց Քրանսերէն.

— Ինչո՞ւ կեցեր էք:

— Մահակ, Մահակ, պատասխանեցին:

Քիչ վերջ երիտասարդ մ'եկաւ:

— Մահակը, Մահակը, պուռաց Մինաս:

— Ո՞չ, ես կարապետ կը կրչուիմ. հոս ինչո՞ւ կեցեր էք, հարցուց տղան:

— Եղբորդդի՛ր, Մահակին կը սպասենք, պատասխանեց Մինաս, Փարիկ կը գտնուի, դուն կը ճանչնաս պինքը:

— Չեմ ճանչնար, բայց Փարիկ շատ հեռու է, լուր տունը ք էք որ դալ ձեզ տանէ:

— Չենք տուած, պատասխանեց Մինաս, տեսա՞ր

Միլարտի, պարի ետեւէն էեր, փոխանակ լուր տալու: — Ես չափահաս որբերէն եմ, ըսաւ երիտասարդը, եթէ դրամ չունիք, ես կը վճարեմ. ձեզ պանդուկ կը տանիմ եւ հետագիր քաշենք որ Մահակը գայ:

— Աստուած հօրդ ու մորդ հոգին լուսուորէ, պատասխանեց Մինաս. դրամ ունինք, միայն առաջնորդի պէտք ունէինք եւ Աստուած քեզ զրկեց: Կը տեսնեմ որ լաւ ծնողքի դուստկ ես, ո՞ւրտեղացի ես:

— Չէ՛սթ ունեցի եմ, հայրիկ, թէ՛ կուուեցանք եւ թէ՛ որբացանք:

— Հայրենակից, ըսաւ գէյթունցի կարապետը, այս փաղպաղին մէջ աչքերնիդ չորս բապտիսմընէն կը պոզնայ, Աստուած վերէն չի դարձնար. ասոր Մարտիրոս կ'ըսեն:

— Հայր ալ կա՞ն, հարցուց Մինաս:

— Կան, չա՞տ:

— Անո՞նք ալ այդ չար արհեստին կը հետեւին:

— Դեռ մէկը բանտ չ'տուա:

— Հապա մեզի ըսին թէ ասիկա սուրբ երկիր է, մարդիկ սուրբ եւ պարկեշտ են: Տէր Աստուած, ուր ինչանք:

— Ես հարիւր ցեղ բնեմ, դուն հազար բնէ, Մինաս պարբ: Սեւին սիսեալ մինչեւ չինացի կան:

Բեռնատար կառք մը զիրենք տարաւ ծուռ փողոցներէն. խումբ մը սեւամորթներու հանդիպեցան. Մինաս եւ տղաքն ապշած նայեցան:

— Աստուած իմ, ի՞նչ ստեղծեր ես, ըսաւ հայրերնին: Մօ՛, երեսնիդ չըլու՞ք, դարձաւ անցորդներուն:

Կանգ առին խեղճուկ տան մը առջեւ:

— Հասանք, ըսաւ գէյթունցին, ասիկա վանքի Աստուածն է. լաւ մարդ է, կըմաք ապահով լլուալ:

Գուրու ելաւ, կարճահասակ ու մեծ փորով մէկը, քառասունը մօտ մարդ էր :

- Գուգ խա՞յ էք, հարցուց եկուորներուն :
- Ո՛չ, մենք հայ ենք, պատասխանեց Մինաս :
- Ատ կ'ըսեմ, այո՛, խա՞յ էք. ձեզի լաւ հիւրասիրեմ, դիմերը ստան են, ձեր տան պէս հանգիստ կ'ընէք. խկ ճաշերը, վանեցիի եփած են, մասներդ հետ կ'ուտես :
- Աւոյ աղբեր, լաւ կարապետ, դուք լաւ նայեցէք, ես կը վճարեմ, իմ վրաս հաշուեցէք :
- Չէ՛, տղաս, մէջն ինկաւ Մինաս, խորդին հետ այդին ալ չեն տար : Սահակս ողջ ըլլայ : Ոսկի մասններ ունի, տեսնես, ի՞նչ հրաշալի տակի, արծաթ թել կը քաշէ. կարծես հրեշտակի մազեր ըլլան : Սահակս ոսկերիչ է, իր հայրն ալ տակերիչ էր : Սխի կաթողիկոսարանի սկիհները, քըոցները, խաչ, խաչվառ ինքը կը շինէր : Ես լաւ կը ճանչնամ Սահակ կաթողիկոսը. Աստուած երկար արեւ տայ :
- Մի՛ խօսիր, հայրիկ, մեր Չէյթունին գլուխը կե-րաւ : Մեզի նամակ գրեց գէնքերը վար դնել եւ պետու-թեան հպատակիլ. վար դրինք գէնքերը, ձեռքերնիս կա-պեցին, աքսոր քշեցին :
- Վախեմ թէ իր տնունով ձեզ խարած ըլլան այդ անհուտանները : Սատանան հրեշտակ ալ կ'ըլլայ, երբ մարդ պիտի սպաննէ :
- Հայրիկ, լաւա Չէյթունցին, կ'ուզե՞ս հեռագիր քաշենք Փարիզ, թէ հեռախօս ընենք :
- Ի՞նչ ըսել է հեռախօս :
- Այստեղէն Փարիզ պիտի գրեմ կը բանանք եւ Սահակին հետ կը խօսիս :
- Հոգիդ սիրես, շտաա՞կ կ'ըսես :

- Այո՛, հայրիկ, սուտ ինչը՞ւ խօսիմ :
- Տէ՛, բաց պիտի :
- Չէյթունցին Փարիզի հեռախօսներու գիրքն առաւ : Մինաս եւ ընտանիքը վրան թափեցան, կարծես թէ Սահակին հետ պիտի կարգալով պիտի խօսին :
- Հասցէն ունի՞ս, հայրիկ, հարցուց կարապետ : Մինաս ծոցէն հանեց ճմռթկուած նամակը : Լաֆա-յէթ փողոց թիւ 43, Սահակ նազարեան գրուած էր : Փամ մը վերջ պիտի բացուեցաւ :
- Հիմա խօսէ, լաւ տղան Մինասին : Ոչ, ա՛յս կողմը բերնիդ մօտ դիր, միւսն ալ՝ ախանջիդ :
- Եղբայր վրաս կը խնդաք, այս թելին մէջ ի՞նչ խօսիմ. մարդ գուռնային մէջ կը խօսի՞ :
- Կանչէ Սահակ, Սահակ կանչէ : Մինաս ուժով մը պոռաց :
- Սահակ, սրբիկ : Սահակ սրբիկ : Կարապետ, կնիկի ձայն կու գայ. ո՞վ է այս լիբրը որ ինձ հետ կը խօսի :
- Թերեւս իր քարտուղարուհին է, պատասխանեց պատանին, սուր ինձի հետախօսը :
- Այո, այո, ո՞վ է խօսողը : Սահակի քարտուղարուհին, Սահակը կ'ուզենք, իր հօրեղբայրն է : Հիմա խօսէ, Սահակն է :
- Սահակ, սրբիկ, ես Մինասն եմ : Չարժանալի բան, հետը կը խօսիս՝ պինքը չես տեսներ : Սատանան այսքան արագ աշխարհէ աշխարհ չ'անցնիր : Սահակ, սրբիկ, ես Մինասն եմ, երեսդ համբուրեմ :
- Սիրարդիի, իր ձայնը կու գայ, եկուր դուն ալ խօսէ. վարդուհի դուն ալ, Միհրան դուն ալ, Աւետ դուն ալ : Սահակ, ես Մինասն եմ, մատաղ ըլլամ քեզի. ճիշտ դո՞ւն ես խօսողը : Ես Մարտիրոս հասայ, ժամէ

մը կընա՞ս գալ: Եւ չէ՞ վաղը կը հասնի: Չէ՞ ս կընա՞ր հեռախօսի թէ՛ն կախուիլ եւ շուտ գալ:

Չէ՛ թու՛նցի կարպպեան ու տղաքն սկսան խնդալ: Եւ վանկեցի Աւան փողը տնկած, թեւեւրը կուրծքին խաչած, մտիկ կ'ընէր դուրսը շարժելով: Մինաս ահէն բան ըստ եւ բան չըտաւ:

— Կարպպեան, Սահահը քեզ կ'ուզէ: Դուն սիկի ծախքն խօսէ, ես միւս ծախքն:

— Չէ, չ'ըլլար: Այո՞, այո: Պանդոկին անունը վանկէ, Սարսէլ փողոց, թիւ 7:

— Ծօ՞, այս փողոցին անունը թուրքերը ըր դրեր են որ Սերսէմ կը կոչուի, ըսաւ Մինաս:

— Սերսէմ չէ, Սարսէլ կը կոչուի, սրբազանը կարպպեան:

Երեկոյեան համով ընթրիք մ'ըրին, Կարպպեան ալ միտաին էր:

Սոհանուցին մէջ վանեցի Աւան տրտում ձայնով կ'երգէր:

Այ՛ն, վատաւարախաղ, ստաբ խախտաւոյն:

Իր ձայնը մեղմ եւ անուշ էր. Մինաս շատ յուզուեցաւ, աչքերը լեցուեցան ու դնաց խոհանոցը:

— Աւու տղար, հողիդ սիրեմ, սա ի՞նչ երգ է մարդու սրտէն կու գալ:

— Հա՛, սրտն կու գալ: Երբ մարդ տուն տեղ ճգն ընտանիքը ջարդուած տեսէ, ալ ուսկի՞ց կ'ուզեն որ գալ: Աս երկիրն եկալ, փառք Աստուծոյ քիչ թէ շատ կ'ապրիմ, բայց մանչս ու աղջկս թոան ուրիշ քաղաք, հիմա կը լսեմ թէ օտարներու հետ նշանուած են, ալ ի՞նչ չ'ունիմ. վատաւարախաղ սրտիս մէջ կիտի մեռնի:

— Կարգալ Խոնկու՞ս, հարցուց Մինաս:

— Այո՛, խախտեցն կը կարգամ, ասոնց լեզուն սրտիս դուր չեկաւ:

— Քեզի բան մ'ըսեմ, «Բազմալէզ» կարգալ, կը միջոցառուիս. ես նեղութեան ատեն ձեռքս կ'աննեմ եւ հասի պէս կը կլլեմ ու կը հանգստանամ:

— Ես ալ թեղի չեմ ճանչնար, պատասխանեց Աւու, մեր տեղը Արծիւ վատաւարախաղի կը կարգալինք: Թեղիքն ալ օգուտ չունի եղբար, հիմա ունան նոր սեբունդը պատկերազարդ, նորոթի թեղիքը կ'ուրեմ եթէ բան չ'երթար որ ըսեմ. լիբը պատկերներ կը դիտէ:

— Մի՛ ըսեր, մի՛ բեր. քանի հատ ատոնցմէ պատրտեր եմ: Բայց ես տղաներու վիզերը կ'ուրեմ եթէ մալինի լեզուն մոռնան, կամ օտար անուն: Է՛յ, Մի՛սբան, վարդուհի, Աւետ, պտուց դէպի ներս, եթէ օտարի հետ ամուսնանաք, ձեզ շան պէս կը սատկեցնեմ:

— Միտք ի՞նչ եկաւ, հարցուց կինը:

— Ի՛նչ պիտի իմնալ, անտարի այս մարդուն ցաւը իմ սիրտս ալ մտաւ: Իր գաւազներէն բաժնուած, որը ծերունի մը մնացեր է: Երբ մարդ տուն տեղը ճգն, հոյն ուղած տեղը կը քէ գինքը:

Մինասի եղբորսկին յաջորդ օրը հասաւ եւ գիրքեր գտաւ:

— Հօրեղբար, հօրեղբար, ըսաւ երիտասարդն ու Մինասին վիզն ինկաւ: Համբուրեցին զիրար ու լացին, լացն անուշ էր, տխուր էր, ջարդուած ծնողքի մը սովաւ յիշատակներն ունէր իր մէջը:

— Փոքրիկ էիր գաւազս, ըսաւ Մինաս, երբ քեզ Միսին մէջ ալ չտեսայ, չար թշնամին հօւր ու սուր ձրգեց ձեր տունը. երկինքն կրակ իմայ իր տունը: Հիմա եղբր ես սիրուն եղբուն մը. մատաղ ըլլամ մեր ցեղին, մեր տան, մեր ազգին, հազարի հետ չեմ փոխեր. վիզը

կը կտրեն՝ սիրտը կը ծաղկի, սիրտը կը խոցեն՝ հողին կրակ կ'առնէ: Նախ Սիրտովի, ինչ շնորհալի եւ գեղեցիկ է մեր Սահակը:

Մինաս գրկած էր Սահակը, Սահակ գրկած էր Մինասը, գրկեց թոյլ չէին տար որ կլինը եւ տկաճն ալ համբուրեն երխտաստարը: Վանեցի Աւան, յունուած կը գլխէր. պանծուխտը պանծուխտին ցարը կը հասկնայ: Քանի մը չէ չարհամըլը հանեց.

— Նստեցէք, ըստւ, խմենք մեր ազնին կեանքը: Հայն ուրախութեամբ կը սկսի իր սեղանը եւ հարկընտարողձ տխուր երգերով կը վերջացնէ: Ամենէն վերջ երգեցին Վախ կառնկեցիմը, եւ բոլորն ալ լուռ մնացին պարագայ շէջերուն առջեւ: Սահակ, Մինասն ու ընտանիքը՝ Սխ սիչեցին, կարակտա՝ Զէյթունը, Աւոյ՝ ալ՝ խուր վատուորականը:

— Մեկնինք, հօրեղբայր, ըստւ Սահակ, գլխով սեղանին բարձրացնելով: Պանդոկի հաշիւը ես կը կարողացուցայ: Հաշիւը չկայ, պատասխանեց Աւոյ, ես ձեզի տեղ ու հաց տուի, դուք գին հայրենիք տարէք ու բերէք: Անոյ ըլլալ կերածնիդ ու խմածնիդ, սիչեցէք վատուորականի տխուր ձայնով:

Կարողա՞նք խոսիլ իստուրեցաւ:

— Թեեւս Փաղե տեղունինք, ըստւ, Սահակին հասցն ունիմ: Բարձր ճանտախտարհ, Աստուած հեռերնիդ ըլլալ:

Եւ չըզգա՞նք մեծ քաղաքներէն կ'անցնէր, Մինաս կարմրած կը գլխով հոստ պալատանը կը կը, իր աչքին գոլով իր իր ձայնը իր իր ձայնը, որոնց բերնին թանձր ձայնը ձայնը:

— Սահակ, ա ս'ըքան բարձր ծխան ունին ստոնց ունենըլը, անշուշտ հացի փուռեր են:

— Զէ, հօրեղբայր, գործատուներ են, երկաթ, պողպատ կը հալեցնեն, մեքենաներ կը չինեն:

— Ես ինչ գիտեմ, տղաս, մեր Սիրտին մէջ յայտնայտն չկիտեմ, տղաս, վեր նստի՛ս՝ Ֆէստ գլխիդ կ'ընես:

— Քիչ առցնէն Փաղեղ կը հասնինք, ըստւ Սահակ: — Սկիզբը չի՛նուած արեւած արեւ ըլլալը, ըստւ Վարդուհի, ս'ը գլխիդ արեւած գլխիդ հալեցնէ եւ գլխու կան: Այս հագուածս գատարի գոյն ունի, կ'աւրջնամ տեւանդնէն:

— Կը գնեմ, քոյրիկ, պատասխանեց Սահակ: — Հա, արեւն տուն տեղ եղանք, հիմա քու ըլլալը զարգացտալ տարի մտածեցնք, ըստւ հայր. վախ Փաղե իր խանութներուն առջեւն արեւ չբաժնուր: Ինձի նախցէք, օտար մտաւր չեմ գլխիդ, մարդ իր տան եւ ազգին շնորհքով մարդ է: Փաղեղ լաւ է, Սխ գեւ աւելի լաւ է:

Շողեկաւքը փչելով անցաւ քաղաքին արուարձաններէն, կտրեց թաղեր եւ կանդ տառւ կախարանին մէջ: Ճամբորդներն անպատշաճով խցան:

— Միհրան, Աւետ, աղբանքներուն լաւ նախցէք, պտուց Մինաս. ես այս խանութներէն կը վաճառեմ: Կամաց, պտուց անցորդի մը, ոտքիս վրայ կոխեցիր, Փարսոց, ըստւ միւսը. փարսոցը դուն ես, աչք չուրս:

Մինաս մէկէն միւսին դարնուելով հաղի բազմութենէն դուրս ելաւ: Երբու հանրատին ինքնաշարժ վարձեցին եւ ուղիով Սահակին պաշտօնատանը գաղթեց: Նստեցաւ փառսի կարմրոցին վրայ:

— Օ՞Փ, գլուխս դարձաւ, առ ի՞նչ փառաք է, բոլորս
թուրքեան մէջը խաթեն գետ տեղ կը մնայ:

Մանկամարդ կին մը քիչ մը վարանտա, քիչ մը
օպոտան, մ'օտեցաւ ու համբուրեց Մինասը:

— Ո՞վ է ախ կինը, պրտաց Ստեփն եւ երեսը սըլ-
բեց:

— Իմ տիկինն է, հօրեկոյն, առ Լու քաւ տաղձնէն է:
— Անունդ ի՞նչն է, տաղձնիս:

Կինը լռեց:

— Հայրեկն չե՞ս դատել:

— Հայ չէ, հօրեկոյն, Քրանտուհի է, բայց աղ-
նիւ ու բարի է:

— Ձեզու, Սահակ, չեղաւ:

— Ինչ ընենք, եղբ հոս եկայ, մինակ էի, բնիկը ու-
հի մը պէտք էր, հայ տաղձնեկները մեր իրայ խնդակին,
մտա մը եղ կայ օձիքնեկուն վրայ, ըսին, Արեւելք կը
հօտի: Ախ տաղձնեկն ծնողքերն ինձի հայրուկին ըրին,
տուն տեղ չտեղեցին եւ ես...:

Մինաս լռեց եւ արտում իր գաւառներուն նախցաւ:
Սահակ աչքին լոյսն էր, քաջուկին չունէր աւելի պա-
կաս խօսք մ'ըսելու: Խեղճ մարդ, կամաց կամաց իր ե-
րօզները կը փլչէին, կեանքի իրականութիւնը կոշտ
կերպով իր առջեւը ցրուեցաւ: Ա՛խ, գէթ կարենար իր
գաւառները փրկել եւ ազգին ծոցը պահել:

— Ձեզի համար պանդոկի մը յարկը վարձեցի,
հօրեկոյն, մինչեւ որ կարենանք սեփական տուն մը
ունենալ, ըսաւ Սահակ:

— Դո՞ւն ալ մեր հետ պիտի ըլլաս, այնպէս չէ՞:

— Ո՛չ, ես արդէն տուն ունիմ, փոքր է, բայրակս
չի բաւեր, յետոյ այստեղի հարսերը կը սիրեն առան-

ձին ըլլալ, մեր երկրին նահապետական սովորութիւնը
չունին:

— Ի՞նչ լաւ էր Սիւրը, պատասխանեց Մինաս. մեր
այգիները դրախտի կը նմանէին. հիմա խաղողը արդէն
հասած է, տանձ ու խնձոր՝ դիտողը կ'ուզեն համբու-
րել: Կոկորդը մնայ ուտողին:

— Մինաս, ալ չխորհիճք Սիւրի մասին, ըսաւ Սի-
րարիի:

— Մարդ որքան սիրելիէն հեռանայ՝ այնքան կա-
րօտ ու ցաւ կը զգայ, պատասխանեց Մինաս: Ծոցէն
չանց Սահակ բեռնակրին տուած հողը եւ համբուրեց,
մասունքի պէս սուրբ է բերով: Նահապետակա՞ն, տուն,
հարսե՛ր, թունե՛ր, գաւառնե՛ր՝ միտաին, մէկ սեղան,
մէկ օձակ, ուրախութիւն ունիս՝ հետդ կը ժպտին, ցաւ
ունիս՝ հետդ կը արտմին: Ա՛խ, Սիրարիի, վախճա՛մ.
Թէ՛ օր մը մենք միեակ մնանք:

— Չէ՛, հայրիկ, ըսաւ Միհրան, ես քոյէդ չեմ բաժ-
նուիր:

— Ե՛ս ալ չեմ բաժնուիր, աւելցուց Աւետ:

Իսկ ես, ըսաւ Վարդուհի, ամբողջ փարիզը քեզի
չեա չեմ փոխեր:

Սահակ քիչ մը մտածկոտ մնաց, կարծես իրաւունք
տուաւ հօրեկոյնը: Փարիզի կեանքը մեքենայական էր,
բանաստեղծութիւն չունէր: Հոն հազարներ կան որ ծա-
ռի մը կարօտը կը փաշեն, բիւրաւորներ որ ազգականի
սէր չունին, զիրար չեն ճանչնար. կ'ազրին իրենք ի-
րենց համար, ծնողքին իսկ յաճախ պատատ. մը հացն
ալ կը դրանան:

— Երթանք պանդոկ, ըսաւ Սահակ:

Միջակ փողոցի մը վրայ կը գտնուէր. արեւը ա-
պահութեամբ կը մտնէր: Հիւղաւանի խեղճուկ տան չէր

նամաներ, բայց չունէիք անոր կապոյտ երկինքն ու բարկ արեւը:

Տեղաւորուեցան ինչպէս կարելի էր: Մինաս նախ—
ցաւ պատուհանէն դուրս, գլխաւոր տուն եւ պատ, կող-
քին տուն եւ պատ եւ հիւանդ արեւ մը կէս ստուեր ձը-
ղած էր դիմացի շէնքին վրայ:

— Ա՛ր, հողիդ սիրեմ, Սիւսի արեւ, երկինքէն կախ-
ուած Աստուծոյ կանթեղն էիր, ըսաւ արտում:

Սահակ իր դորժին գնաց եւ երբեմն երբեմն կու-
գար հօրեղբայրը տեսնելու: Մինասին տղաքն արդէն
վարժեցան ֆաղաքին ու փողօցներուն: Սիրարիի եւ
վարդուհի կանացի հագուստներու խանութներէն չէին
բաժնուէր: Միհրան եւ Աւետ գործ փնտռելու ելան,
այդ ժամանակ ճրագով գործաւոր կը փնտռէին եւ ա-
մէնէն սօժան աղբանքը խեղճ հայն էր՝ տան եւ հողի
կարօտ: Անոնք չուտով դառն. մին ինքնաշարժի գոր-
ծատուն մը մտաւ, միւրը Աւետ՝ երկաթեղէնի խանութի
մէջ միտակ կ'անցընէր: Երբեմն փողօց կ'իջնէր, բայց
վախով ետ կը դառնար, մի դուցէ պանդուկին տեղը
կորսնցնէր: Օրէ օր աւելի առաջ գնաց եւ ետ եկաւ:
կարդալ չէր վիտեր որ փողօցին անունը միշէր, լեզու
չէր վիտեր որ մարդու հարցնէր: Ինքն իրեն մնաց,
«Բազմակէպ»ները ալ գոց դիտէր. նորէն չէին հասնիր:
Քանի մը անգամ ծայրէ ծայր նորէն կարդաց: Յաճախ
քնացաւ, ստէպ յօրանջնեց, պատուհանին առջեւ կեցաւ:
Դիմացի բնասնիքը ծուռ ծուռ նայեցաւ եւ ապտտ օ-
տարակաճ ըսաւ: Լաւ որ Մինաս չհասկցաւ, թերեւս իր
հողաթափը նետէր այդ պատուի երեսին:

— Սաւոր նայէ, ըսաւ ինքնիրեն, կարծես թէ աչք
դրեր եմ իր թոռած երեսին:

Օր մը ոտտիկան եկաւ. տունն էին կրնն ու աղջիկն
ալ: Աղջիկն երկու բառ Փրանտերէն գիտէր, կրնը մէկ
բառ, ինքը ոչ մէկ բառ:

— Ի՞նչ կ'ուզէ, վարդուհի, հարցուց հայրը:

— Պատուհան կ'ըսէ, հայրիկ:

— Իր տունը պատուհան չունի՞ր, ըսաւ չէ՞ տեսած:
Ոտտիկանը Մինասին թեւէն բռնեց եւ պատուհանին
մօտ տանելով նշան ըրաւ թէ գուրս նայիլ չէլար. եւ
փեղիղ պոցեց ու գնաց:

— Տէ՛ր Աստուած, այս ի՞նչ աշխարհ է, մարդ իր
պատուհանն ալ դուրս չի կրնար նայիլ:

Երբ Սահակն եկաւ, պատմեց պատուհանին խոզի-
բը, թէ ոտտիկան եկաւ եւ փեղիղ գոցեց:

— Հոս այսպէս է, հօրեղբայր, ըսաւ երիտասարդը,
փարպոյրը քաշէ, մարդ մարդուն տան մէջ չի նայիր:

— Իրարու երեսն ալ չեն նայիր, ահա գրեթէ մէկ
տարի եղաւ, սա գրեմացի դռնէն մէկը կ'ելլէ ու կը մտ-
նէ, օր մը բարեւ, Աստուծոյ բարին չըսաւ, կարծես
թէ ամէն օր շէշ մը ֆայցախ կը խմէ: Եղբայր մենք Սիւսի
մէջ բարեւ կու տայինք, իրարու մասին կը հարցնէինք,
թուղթ կը խաղայինք, օդի մը կը խմէինք, մարդ մար-
դով ուրախ կ'ըլլայ: Աստե՛ք՝ անասուն են պիտի ըսեմ,
կը նային՝ չեն տեսներ, կ'անցնին՝ չեն խօսիր, բարեւի
խօսքէ ալ վախով ետ կ'առնեն: Սահակ, տղաս, ստէպ
եկուր, սանկ խորոված մը, սորմա մը միտսին ուտենք,
քու կնիկիդ տապիած գեանախնձորէն դատ ուրիշ բան
եփեւէ չի գիտեր: Սիրարիին լաւ կերակուրներ կ'էփէ:
— Կու դամ, հօրեղբայր, կու դամ: Ես ալ յաճախ
մեր կերակուրներուն կարօտը կը քաշեմ: Կինս՝ ծագ-
լինը բարի է, բայց մէշտ օտար է, երբ մեր Սիւսի մա-
սին կամ Հայաստանի մասին խօսիմ՝ պաղ պաղ երեսն

կը նայի եւ ստանն վրայ աչքեզքն տաք արցունք մը կ'իջնայ:

— Հայուն սիրտը միայն հայը կը հասկնայ, պատասխանեց Մինաս:

Մինաս զլաց թէ Սահակ իրեն պէտք ունէր հոգեւին զօրանալու համար: Հարուստ է, բայց դիմուք ա-մէն բան չէ: Հայաստանի մէջ ծլած սիկոս մը՝ հայրենիքի արեւը կ'ուռչէ:

Օր մը պոնդրոսի եկաւ միջնահասակ մէկը. հայ էր. իր պեղծին մէկը դէպի աջ սրած, միւսը դէպի ձախ, սուր մօրուք մը կախած, թեւեղը բաց ծծեւոնակ մը կարծես դէմքին վրայ թառած էր:

— Անախտը բերի որ տեսնէք, հաւնիք եւ առնէք:

— Է՛յ, բարեկամ, բարեւ Աստուծոյ բարին, ես կարգուած մարդ եմ, Անահիտն ի՞նչ պիտի ընեմ, պատասխանեց Մինաս:

— Անախտ թեքի որ կարգաք:

— Հա, սասնկ բռն. բայց Անահիտ իմ քրոջս ա-նունն էր, զուք ուսիկ՞ց դիտէիք որ թեքիին ճակատը դրիք:

— Հայաստանի բոլոր ազնիւ օրիորդներ ու կիներ Անահիտ կը կոչուին, պատասխանեց եկուորը:

— Շատ լաւ, ես ալ թեքի կը փնտռէի որ կարգամ, «Ետմովկա»ները վերջացուցի. ես շատ կը սիրեմ այդ թեքիք, մանկութենէս կարգացրի եմ:

— Տարեկան տասը Փրանք է, մեծ բան մը չէ: Շարաթ մը չանցած ուրիշ մէկն եկաւ խուրճ մը լրագիր թեւին տակ:

— Յառաջ բերի որ կարգաք. այս լրագիրն է որ մեր ապէն առաջ կը տանի. ամէն օր կ'ելլէ: Աշխարհիս բու-լոր լուրերը կան, մեր ազգին մասին ալ կը խօսի:

— Սխիւ մասի՞ն ալ կը խօսի, հարցուց Մինաս:

— Է՛հ, երբեմն, երբ որ կիլիկիայէն անցնի:

Մինաս վճարեց տարուան մը բաժանորդագրութիւնը: Հիմա կարգալիք ունէր. դեռ Ապագայ թեքիքը, կախօջը պիտի գային. մէկը միւսէն լուր կ'առնէր: Իրարու դէմ կը կուռչէին, բայց դործի մէջ ձեռք ձեռքի կու տային:

— Մարդ Աստուծոյ, ի՞նչ է ըրածդ, տունն այդ չ'իցած թեքիքերով լեցուցիր, դանդաղանցաւ կիներ: Մենք կ'աշխատինք Փրանքերէն սորվիլ, առաջ երթալ, դունն ետ կ'երթաս:

— Շատ մի՛ խօսիր, եթէ կ'ուզես առաջ երթալ, ա՛ն այս Յառաջ թեքիքը կարգա: Ապագան կ'ուզես դիտ-նալ, միւսը կարգա:

Տան մէջ օրէ օր ապուումի եւ հոգեկան փոփոխու-թիւններ կ'ըլլային: Վարդուհին Ռոզ գարձաւ, Սիրար-փին Սրվազան եղաւ: Սեղծ մարդը սկսաւ անուճնները ը-րիտթիլ: Ամէն մէկ հայրէն բառին քով Փրանքերէն բառ մը կը տնկուէր. ան չէր հասկնար, կը ջլաշնտէր եւ կը պոտար:

— Հայերէն խօսեցէք, լեզուն կը մեռնի: Կիճն ու աղջիկն ամէն օր Փրանքերէն նորոյթի թեքիք կը բերէին, վրան կ'իջնային, մամեքով կը նայէին հա-զուտով նոր ձեւեր փնտռելով: Մինաս ա՛լ քաջութիւն չունէր այդ վրան բաց թեքիքներն արդիւրու, կը զգար թէ ամէն օր մտաւ մը կ'ընկղմէր այդ օտար ծովին մէջ:

Տարի մը վերջ հազիւ սորվեցաւ Սահակին խանու-թի ճամբան. հանրահատեք մը կար վրան խաչոր գիր մը (9), կը նմանէր մարդու մը որ պոզած բան մը կ'ընէր. այդ հանրահատեքը զինքը խանութին տալու կը հանէր: Յաճախ, կ'երթար լրագիր մ'առած, Փէսը դիտուն, կը

Շատ ժամանակ անցաւ մինչեւ ճամբան սորվեցաւ: Ամիրն անգամ մը հասկը Սահակին կ'երթար: զխարին անգին կը նետէր, Ֆէսը ծոցէն կը հանէր եւ գլուխն անցընելով անոյձ անոյձ Սահակին կը նայէր: Երբ հայ յաճախորդ մը դար, մանաւանդ տարեց մարդ մը, անյաճախորդ մը պիտի հրամցնէր, սուրճ մը բերել պիտի պայման քովը պիտի հրամցնէր, սուրճ մը բերել պիտի տար եւ իր հին ու նոր ցուերը պիտի պատմէր: Անգամ մը բարձրահասակ մէկն եկաւ, երկու Մինաս լրարու վրայ զնէկը, հասկը անոր զլուռն պիտի հասնէր:

— Աս մարդ է թէ փղ է, ըսաւ Մինաս ինքնիրեն,

վարէն վեր նայելով:

— Բարեւ պարոն Սրտակ, բարեւ եկաք, ըսաւ Սահակ ոտքի ելլելով: Չեղի՞ հօրեղբայրս ներկայացնեմ,

Մինաս նազարեան:

— Սրս մայրաքաղաքէն, աւելցուց Մինաս:

— Ես ալ կարծեցի թէ թուրք հոճայ է, պատասխանեց Սրտակ: Ինչ գիտեամ, Ֆէս դրած է:

— Մեղայ, քաւ լեցի, պատասխանեց Մինաս: Ինչ ընենք, մեր երկրի սովորութիւնն է, մարդ եթէ բանի մը վարժի, ալ բնութիւն կը դառնայ. մանաւանդ երբ գլխուն հետ կապ ունի:

Հրամանեցէք սուրճ մ'տանենք:

Երբ Սրտակ Մինասին քով բարձրցին վրայ նստեցաւ, նստարանը հսկայ փոր մը տուաւ, ճոռչեց եւ սրբացաւ: Մինաս քովը կ'ըկեցաւ:

— Հայրենակիցն անպայման Հայաստանի սարերէն է, ըսաւ Մինաս:

— Այո՛, Ղարաբաղի սարերէն եմ, Շուշեցի եմ:

— Այո՛, կը հասկցուի որ լեռներու զաւակ էք. անշուշտ 200 քերթ կը կռնէք:

— Ի՛հ, մօտ էք:

նստէր բարձրցին վրայ եւ կը կարդար. դէթ Սահակին երեսը տեսնէր: Իր կինը կը նեղուէր, թթու երես կը ցուցնէր.

— Փաղկն, մի՛ նեղուիր, կ'ըսէր Սահակ, աղուոր ռէզլամ է. երանի թէ հնդկիկ մ'ալ գար, միւս բարձրցին վրայ նստած բախտ բանար, փարեղցին կը սիւրէ այս տարօրինակութիւնները:

— Սահակ, ըսաւ օր մը Մինաս, ես այդ պանդուկէն ձանձրացայ, պատուհան մը չեմ կրնար բանալ, արեւ չեմ կրնար տանել, կապիւրտ մը պիտի թօթուեմ՝ տեղ չկայ, թուղթ մը, աւելցուցի մը վար նետեմ՝ մէջքէն ճերմակ փայտ մը կախած մէկը կու գայ, թուղթ մը կը դրէ եւ դրամ կ'տանէ: Մի՛հրաման ու Աւետ բան մը վաւարկեցան, գուն ալ վրան բան մը դիր եւ արեւու տուն մը դռնենք, քովը ծառ ըլլայ, վրան արեւ գայ, պատուհանները սրտիս պէս բանամ:

— Այո՛, հօրեղբայր, արդէն խորհեր եմ, Շաւիկ կուշուած թաղին մէջ լաւ տուն մը գտած եմ, շուտով կը զնենք եւ հոն կը փոխադրուիս. այդ թաղին մէջ հայեր շատ կան, բարեկամներ կը գտնես:

Հազիւ ամիս մը անցաւ, Մինաս Շաւիկ փոխադրուեցաւ: Ոչխար մը զնեցին, մորթեցին դրան առջեւ, կանչեցին քահանան, օրհնեց, մատաղը խորոված ըրին կերան եւ տան բացումը կատարեցին: Մինաս պատուհանէ պատուհան անցաւ, արեւ կար, արեւ կար. կահաճութիւն կար, կրնային կապիւրտ ալ թօթուել, հոյաթափներն ալ պատուհանին վրայ դնել:

— Տունը լաւ, մտածեց Մինաս, պարտեց ալ ունի, բայց աղաքներու աշխատանքները հեռացան, Սահակ աշխարհիս ծայրը մնաց. հիմա ո՞ր դիրը ճիշտ խանութին դիմաց կը տանի:

վեր ու վար բրաւ, պէտքերն ուրեք եւ բանալին ծախել
խոթելով դուռը բացաւ: Մայր ու աղջիկ էին:

— Անփէն, կ'ըսէր Սերաբիբի:

— Ուի մտած, կը պատասխանէր վարդուհէ, մտա
ծալի, ժողի:

Մինաս չորս կողմը նայեցաւ, տան մէջ օտար չկար.
երեւին դո՛ւրը դնաց, աչքերը դարձան:

— Հայերէն չխօսի՞ք, մեր ազգն ու լեզու պիտի
մեռնէք: Փողոցները կը սլփտաք, քանի մը Փրանսերէն
բառեր կը սորվիք եւ թուրքերը պէս կը կրկնէք: Հայ
թերթի մը երեսը չէք նայիր եւ այդ լիբը պատկերները
կը դիտէք. թո՛ւ, չամ չցածներ, կրտածներ:

— Անփէն (վերջնայէս), հոս փարկ ենք, Մինաս,
պատասխանեց կինը. հաստ դիտուէ մէջ խոթէ որ Սիւս,
Պէյրուսի չկա:

Մինաս հաւաքեց բոլոր Փրանսերէն թերթերը եւ
պատահանէն դուրս նետեց:

— Այս թերթերուն մէջ չկան Սիւս ու Պէյրուսի, բայց
հայերէններուն մէջ կան: Ո՞ւր են հայերէն թերթերն ու
լրագրիները:

— Օճախը վառելու դործածեցինք, պատասխանեց
Սերաբիբի:

— Աստուած իմ, երկինքը վրաս պիտի փլչի, սըր-
բաղդուսթիւն... սրբապղծութիւն:

Եթէ ձեռագին դար երկուքին վերերն ալ պիտի ուլ-
րէր, բայց դերագոյն ճիշտ մը բրաւ, գոպեց ինքզինքը եւ
ինկաւ բազմոցին իրոյ դուռնին փեղուն մէջ:

— Վազ, ըսաւ մայրն աղկան. ի՛նչ է վիշտ (ծերակացած
է), երթանք միւս շաբաթը (սեպտեմբեր):

— Երթանք միւս շաբաթը (սեպտեմբեր), ըսաւ վարդուհէ եւ հ-
տեղեցաւ իր փոքրիկը:

— Բարդու ալ աղակն էք:

— Ես միջահասակ եմ:

— Աստուած աւելի բարձրացնէ:

— Ամէն: Դուք Սահեթի էք ուրեմն:
— Այո՛, Անտն մեծատունի մայրաքաղաքէն, լուս-
նորուն մէջ պառկի, պղտիկ մարդ էր, բաւ միտ շատ քո-
ծաւ խելացի էր: Սահակն ալ Սահեթի է, իր հայրը ոսկի-
րէչ էր, կաթողիկոսաբանի խաչ, խաչմատ, սիկն, քոչո-
րնը կը շինէր. Սահակն ալ քոչո՛ւ ոսկերէն է, հրեշտակ-
ներն երկինքի մէջ այնքան բարակ ոսկի թել չեն կրնար
փռել ինչպէս ինքը: Խելացի է. երեսօտայի Փարիզին
մինչեւ Մարտիկա հեռախօսով հետս խոսեցաւ:

Երբ սուրճը բերին, Մինաս նայեցաւ մարդուն ա-
փին. գաւաթը ձեռքին մէջ աճաքան էր ինչչհէս կառկի
կէս կճեղ մը մեր ձեռքին մէջ:

— Չեղի տասը հատ սուրճ ապուղեմ, ըսաւ Մի-
նաս, մէկ հատն ի՞նչ է որ ձեր փորին համար, կաթիլ
մը ջուր ուրիշանալին մէջ:

Այդ պահուն Փրանսուհի տիկին մը ներս մտաւ. դըր-
խարկ մ'ունէր որ անդիտացիի հովանոցի կը նմանէր.
Մինասին սուրճը բերին մէջ կէս մնաց: Չարադազին
գաւաթը պիտի կլկէր եթէ բերանի բաց չմնար:

— Աս ալ ալ պիտի տեսնէի, ըսաւ Մինաս փոխինին:

— Մի՛ գործանար, տեղափոխին ձեռքի ծածկու հա-
մար է:

Մինաս շատ պիտի փախաճէր զարարողքիին հետ
երկար խօսել, բայց ուշ էր. համբուրեց Սահակը, բա-
րեւեց շուշեցին եւ դուրս ելաւ: Երբ իր տան դրան մո-
տեցաւ, ներսին Փրանսերէն խօսակցութիւն տեց. փչ
մը օձիկ շուկեց, իրափ փուչն ձեռքով թօթոթեց, վիշտ

Մինաս երկար մնաց այդ դերձին մէջ. երբեմն երբեմն ինքնիրեն կը մըմտար:

— Հայերէն թերթ ալրել, ո՞ր սիրտը կը դիմանայ: Մեր տեղն հայերէն գիր տեսնէինք՝ կը համբուրէինք եւ մեր ճակտին կը դնէինք:

Աւետ դորձէն դարձաւ.

— Հայրիկ, հրամայե՛ք ես, դը՛ւրդ կը ցաւի:

— Այո՛, հրամայե՛ք եմ, մեռնելու մօտ:

— Մայրիկ, վարդուհի, պոռաց սենեակէն ներս, ինչո՞ւ հարկիկն չե՛ք նայիր:

— Ատիկա հին հիւանդութիւն է, չի բժշկուիր. հեւտը գերեզման պիտի տանի, պատասխանեց մայրը:

— Կը բժշկուի, կը բժշկուի, պատասխանեց Մինաս: Ես այս տունը Փարիզն ալ հետը՝ կը ծախեմ եւ Պէյբուրթ կը վերադառնամ:

— Հայրիկ, կատա՞կ կ'ընես, ըսաւ Աւետ:

— Այո՛, շատ տխուր կատակ է, ողբերգութիւն է:

— Չեմ հասկնար, ասոր տակը բան մը կայ:

— Տակը կրակ կայ, կրակ կայ տղաս. դնա՛ մօղ ու քրօղ հարցուր:

Աւետ դնաց դէպի մօղը սենեակը ըսելով.

— Վարդուհի, քեզի նոր թերթ մը բերի, տեսնես ի՞նչ գեղեցիկ հագուստներով աղջիկներ կան:

— Լո՛ւ, մատը բերնին դրաւ քոյրը:

— Թող գտնուի ըլլա՞յիք. դիտէք թէ հայրիկը կը վըշտանայ, ըսաւ Աւետ: Գէշ ըրեր էք «Եագմայէպ»ներն ու հայ թերթերն ալրելով: Եթէ յանկարծ լըջօղէն Պէյբուրթ ուղէ վերադառնալ, ի՞նչ պիտի ընենք:

— Ի՛նչ, աղբիւր դիւրին է, տղաս, ո՛չ միկնելու թաւ կարդ եւ ո՛չ ալ թուշունի վանդակ շինելու պէտք կայ, դորձ ուղարձիլ չափ կը դանես. վարդուհին ալ արդէն

մեծ խանութի մը մէջ վաճառուհի պիտի ըլլայ. գեղեցիկ աղջիկ կը փնտռեն եւ հաշնեցան Ռոզիս:

— Դունն ալ դնա՛ գեղեցիկութեան մրցումի մասնակցէ, բան մը կը վատակիս, պոռաց Մինաս անդիէն: Հո՞ւ վանոցի չափ գլխարկ մը դեր, այսօրուան Ֆրանսուհիին պէս. ոսկի կօշիկներ հագուէ եւ եղիւր Փարիզի փարիզուհին:

— Մայրիկ, անօթի եմ, ըսաւ Աւետ, ընթրիքը պատրա՞ստ է:

— Ախ, տղաս, այնքան դրազած էի եւ այս մարդն ալ տունը տակն ու վրայ ըրաւ, բան մը չկըցայ պատրաստել, քիչ մը պանիր հաց եւ թէյ կ'առնենք. բայց Միհրանը դեռ չեկաւ:

Միհրան սովորաբար Աւետէն առաջ տուն կու գար, բայց այսօր ինչո՞ւ ուշացաւ: Բոլորը մտահոգ սպանցին. Փարիզ մեծ քաղաք է, վտանգները շատ են. ճամբան մարդ մարդու կը զարնուի, ինքնաշարժ ինքնաշարժի:

— Եթէ յանկարծ արկած մը պատահած ըլլայ, տալի՛ք, տալի՛ք (ցաւ), ըսաւ մայրը:

— Այդ քու տալի՛քովդ թատրոն մի՛ խաղար, ըսաւ Մինաս: Միհրան զգուշ եւ խոհեմ է. հիմա ուր է՝ կու գայ:

Ժամ մը վերջ Միհրան տուն եկաւ. խռոված վիճակ ունէր, կարծրած էր, նման այն տղուն՝ որ առաջին անգամ գողութիւն կ'ընէ:

— Ի՞նչ ունիս, հարցուց հայրը:

— Հիւսնդ ես, տղաս, հարցուց մայրը:

— Չէ՛ք տեսներ, կարծրեր է, անշուշտ ջերմ ունի, ըսաւ վարդուհի:

— Ախորժակ չունիմ, պառկելու կ'ուզեմ երթալ, պատասխանեց Միհրան:

— Ի՞նչ պատահեցաւ, տղաս, բաւ անձկութեամբ Մինաս:

— Յիտան Քրանք կործնցուցի:

— Մե՛ղք, մէջն ինկաւ Վարդուհի. ճամբոսն կտրուցնուցիր:

— Ո՛չ, դարձն ելանք, սպանխացի, փորթուղուցիք ընկերներս լսին, երթանք պիտարոյ (գինետուն) րան մը տանեմք. խմեցինք քանի մը դաւաթ գինի եւ զոնիրաք: Դեռ լոյս է, բաւ փորթուղուցին, թուղթ մը խաղանք եւ ժամանակ անցընենք: Այդ խաղին օտարները Փոփեր կ'ըսեն, խաղացինք եւ ես 50 Քրանք կործնուցի. երկու օրուան վաստակ էր:

Հայրը երեսը թթուեցուց, մայրը գոհ էր որ տղաքը կամաց կամաց մարդու մէջ կը մտնեն, եւրոպացի կը դառնան:

Եւ Միհրան սիսաւ փռեք խաղալ...

Փոփերի խաղը Միհրանը տունէն պակեցուց: Գրեթէ ամէն գիշեր ուշ կը հասնէր տուն: Երեկոյ մը ուրախ տուն վերադարձաւ, 10 Քրանք յաղթեամ էր:

— Տեսա՞ր, բաւ Ալրաբիի Մինասին, տեսա՞ր, տղադ արդէն տառձ գացեր է. տասը Քրանք յաղթեր է:

— Կնիկ, գուն տունս պիտի կործանես, պատասխանեց Մինաս, 50 կործնուց տասը վաստակեցաւ, վաղը տունս տեղ կը ծախի. խաղը օձի կը նմանի, որ կը խալթէ եւ կը թունուարէ. խեղճ ունեցիր, խաղը դարբացուած չէ:

Մինաս իրաւունք ունէր, Միհրան զրեթէ տունը դրամ չէր բերեր, Հայրը շատ խրատեց, յանդիմանեց. բայց ան արդէն մեծ մարդ էր, ականջ չէր կախեր եւ զրեթէ իրարու հետ չէին խօսեր:

— Գնաս', բաւ օր մը Մինաս, կերած հացդ վաստակէ, տնէն գուրս ելիր, ես խաղամուլ մարդիկ չեմ սիրեր:

— Փարբիդի կէսէն աւելի կը խաղան, պատասխանեց Միհրան, եզան պէս աշխատանքն յետոյ քելէ մը դուրսը՝ ճուրխն պէտք է, ասիպէս չէ՞ մայրիկ:

— Ի հարկ է, պատասխանեց մայրը, պէտք է մարդու մէջ մտնել, հոս Միս չենք, կեանքէն հասկնալ, Հարն ու բարին գանադանել:

— Մարդու մէջ մտնելու համար երթանք բոլորս ալ փռեք խաղանք. հողեմ դուրսը այդ խաղն հետքուղին, բաւ Մինաս:

Տղաքն սիսան իրարու հետ կտարած Քրաններէն խօսիլ, Մինաս երկու բառ միայն սորված էր. պոմմուր, մեպիւոյ, ուրիշ ոչինչ կը հասկնար: Եթէ Քրանսացի մը դար, անշուշտ պիտի Հասկնար անոնց Քրաններէնը, բայց եղբայր եւ քույր կը կարծէին թէ արդէն փարբիցի եղած են:

— Դուրսը ի՞նչ լեզու կ'ուղէք խօսեցէք, պտուց Մինաս, այս պատերուն մէջ միայն հայերէն. կը հասկընա՞ք, միայն հայերէն:

Տղաք սիսան բարձր խնդալ:

— Միհրան, Քրանսացիք ի՞նչպէս կը խնդան, հարցուց Վարդուհի:

— Կապիկի պէս, պատասխանեց Մինաս:

— Ո՛չ, շատ արծիւ կը խնդան, բերաններն քելէ կը բանան, շրթուներէն կ'որբջենն, համբոյր տալու պէս:

— Չայտասիրուի խողովակի պէս կլոր, որ դուրսնայի ձայն հանեն, բաւ Մինաս: Ի՞նչ անխելութիւն քրի հոս եկայ. երանի թէ Սահակ դրամ չըլլար:

— Զրի տան տէր եղար, ալ ի՞նչ կ'ուզես, ըսաւ կիներ:

— Տան տէր եղայ, սրտի տէր չեղայ, պատասխանեց Մինաս. ամէն օր սիրտս կը քանդուի:

— Կը վարժի՞ս, ծերունի, ըսաւ կինը, կը վարժի՞ս. մարդ ամէն տեղ նոյն արեւը չի գտներ: Նայէ դիտարկ դնել սորվեցար, մէկ երկու բառ Քրանտերէն գիտես: Առաջ տարին անգամ մը բարձիք չէիր առներ, չիմա բարձիք ունինք, ճեմէչ ունինք. ալ ի՞նչ կ'ուզես:

— Բերանս բանալ մի՛ տար, հոգիդ սիրես, պատասխանեց Մինաս Անահիտ թերթին վրայ էյնալով:

Մինաս Սահակին խանութը շատ քիչ անգամ կ'երթար, այնտեղ օտարուհի մը կար, որ զինքն աչքով ու քիթով կը հարածէր: Կիրակի մը Սահակ Մինասին քով ճաշի եկաւ Փաղկինին հետ:

— Մինաս, ըսաւ կինը, Փաղկինին առջեւ դիմ Սիրարիի մի՛ կռնէր, այլ Սիւլան, ազլիկդ ալ Ռոյ կանչէ, սա արեւելեան կոշտ անունները մի՛ տար: Մի՛հրանն արդէն Մարիս եղած է, դուրսն այնպէս կը կանչեն զինքը, Աւետն ալ նոտուար կը կոչուի:

— Գո՞ւ միկրտեցիր այդ անունները, պատասխանեց Մինաս: Գլխուս տէրտէ՞ր ալ եղար տղաքս կրկին մը կըրտելու, համար:

Սեղանին վրայ խճողակ (տոլմայ) բերին, փոքր պատուած սմբուկ. Փաղկին մատով հաղիւ դպաւ եւ ամուսինին ականջէն փախաց:

— Հօրեղբայր, Փաղկինը շատ կուշտ է, ըսաւ Սահակ, քիչ մը կարմրած:

— Կը հասկնամ, Սահակ, կը հասկնամ, պատասխանեց Մինաս:

Եղինձ (փերլաւ) բերին քովն ալ մածուն սխտորով:

Փրանտուհին քիթը բռնեց. Սահակ ակորժակով կերաւ, շատոնց է որ կարօտ կը քաշէր:

— Մայրիկ, ի՞նչ ըրիր, Փաղկինը բան չկերաւ, Փրանտական ազնիւ կերակուր չեմէկէ՞ր, ըսաւ վարդուհի:

— Հայրդ այսպէս ուզեց, ի՞նչ ընեմ, պատասխանեց մայրը. Սահակը կը սիրէ եղիւր:

Կիները քաշուեցան վարդուհին սենեակը. Մինաս Սահակին առջեւ բացաւ իր սիրտը: Պատմեց Մի՛հրանին խաղամուրթիւնը:

— Անցեալ օր դիմով տուն դարձաւ, ըսաւ Մինաս: Աս կեանք չէ Սահակ. տանս մէջ սկսան Քրանտերէն խօսիլ, ալ աղտոտ թերթերու մասին չեմ խօսիր. դըժտ՛խք է, դժոխք:

— Կը դիմ քու ցոււդ, հօրեղբայր, դէթ դուն տանդ մէջ հայուիլին եւ հայ լեզու կը պահես. հապա ես ի՞նչ ընեմ, կինս մէկ բառ հայերէն չուզեց սորվիլ: Եթէ բարկանայ, երեսին աղտոտ հայ կը պտտայ: Սեւ ճակատադիրս է, ալ եղածն եղած է: Ես ամօթով մնացի, սա պատուական խճողակը, սա սքանչելի սմբուկը, համով եղինձը, կարծես քիչէն դուրս ելան, ամօթով մնացի. մինչեւ վերջ տուփի կերակուր, տապկած դետնախը՝ ձոր ուտուիլն սիրտս պօգաց: Եկուր հօրեղբայր, ստէպ եկուր խանութս որ սիրտս սրտի խօսինք:

— Բայց կինդ քիթ բերան կ'ընէ:

— Կարեւորութիւն մի՛ տար, ես եմ տէրը:

— Ո՛չ, Սահակ, ան է տէրը: Եթէ մեր երկիրն ըլլա՞ր, անոր մագերէն բռնած ծառէն կը կախէի, բայց իրենց հողին վրան ենք. պէտք է թուգերնիս կլկենք եւ լուենք: Բայց ի՞նչ լուեմ տղոցս համար. ամէն օր դուին կը փոխեն, եկող դացողը կը կապկպեն. իրենց սրտին

մէջ մեր լեզուն մեռած է. ազգութիւն չկայ, հայութիւն չկայ: Կը խորատեմ՝ վրաս կը խնդան. հայ թերթ կու տամ՝ անոցին կը նետեն եւ լղբճուկ բաներ կը կարգան, աւարան անուշարար թո՞ն է եղիք այս աշխարհը:

Երբ Սահակ ու կընը մեկնեցան, Սիբրափիի եւ Վարդուհի Մինասին վրայ յարձակեցան:

— Դատիք տո՞ւ՞ր, բաւ կընը, այդ կուրիտ կերպարաններն երկու տակոյ, Փառլիկն մատակ չզգաւ. ես սօթիով մնայի:

— Թող փորը սրբութիւնը երթայ, պատասխանեց Կինոս. ես Սահակին հաճար երկել տուի. եւ լաւ ըրի:

Վարդուհին ալ գոծի մտաւ, շտալ Սիւս խոնարթի մը մէջ վաճառուհի եղաւ. իր Քրանդեղեմը բաւարանն էր, գնորդները աղջկան երեսին կը նային ոչ թէ լեզուին. Վարդուհի թեթեւ զլիտով՝ շորհայի աղջիկ էր: Առաջին օրէն իսկ խոնարթաւոր. էր իր գործով. աշխարհ կը տեսնէր, կը խօսէր ու կը ժպտէր. ակնզնին քանի որ արձակ էր, երբ թող կը կանչէին:

— Խեղճ գլուխդ ժողովէ, բաւ հալովը. ասոր անցն հետ թեթեւութիւն չընես. մարդու մէջ մարդու պէս ըլլաւ: Աղջիկը վարդի կը նմանի, եթէ ձեռք ձեռք անցընեն՝ նետուելիք ինչ դասնայ:

— Հասցա ի՞նչ ընեմ, չխօսի՞մ, մարդու երես չնայի՞մ. խոնարթ մ'է ուր աւելի ժպիտ կը ծախեն քան թէ ասորնաք:

— Աս ալ ուրիշ փորձանք: Այլ չես երթար, գնա՛ չայ տան մը մէջ պատուար կեղծի խոնարթ աղանդութիւն ըրէ, աւելի լաւ է:

— Ե՞ս, աղախի՞ն, Փարիզ եկայ աղախի՞ն ըլլալու. ինծի պէս աղանդական աղջիկ մը ուրիշի՞ն պիտի ծա-

նայէ, տո՞ն պիտի աւել, պնա՞կ պիտի լուայ: Հայրիկ, երթալով Սիւսն խոր Ասիա կ'անցնիս:

Աղջիկը մտիկ չըբաւ եւ շարունակեց վաճառուհի ըլլալ: Ամէն օր մ'օրը հետ քիթ քիթ տուած յաճախորդ երկատարողներու, աղջիկներու վրայ կը խօսէր: Թե՛ երկատարողներու, աղջիկներու մէջ ուրիշ ի՞նչ կընար ունենալ: Իր ննջատենեակին պատերը օրէ օր վրան բաց պատկերներով կը լեցուէին: Հայրը վրեթէ այդ սենեակը չէր մտնէր. բայց անգամ մը մայր եւ աղջիկ իր անունը տալով աշխարհի ճիշտ խնդարին որ ճերմունին ներս թուաւ. պող կեցաւ, նայեցաւ պատերուն եւ գուրս ելաւ: Խոհանոցէն անուրի կտորներ տաւ եւ սխաւ. պատկերներուն վրայ քան, սեւցնել, աղտոտել: Աղջիկը մէկ թեւէն, մայրը միւս թեւէն քաշեցին, բայց ան դժեց ու դժեց:

— Խենթեցա՞ր, բաւ կընը:

— Ո՛չ. սատանային երեսը մրտոցի: Իմ տունն հայ քրիստոնեայի տունն է. Փարիզի դեւերը հոս գործ չունին:

Վարդուհի սխաւ լալ, մայրն ինքզինքը կ'ուտէր:

— Պատկե՞ր կ'ուզես սենեակիդ մէջ, Ս. Վարդանի նկարը դիր, Ալեշան դիր, Խրիսեան Հայրիկը, Անդրասիկը, Սահակ Կաթողիկոսին նկարը դիր, որ այդչդ ու կրօնքէդ քարոզեն, ո՛չ թէ այդ լիբը պատկերները:

— Դուն գեղարուեստէ չես հասկնար, խոր ասիացի ես, խաւարեալ ես, պոռաց կընը:

Մինաս այնքան ջգայնուած էր որ վրան ջերմ եկաւ. գնաց անկողին մտաւ: Երեկոյան տուն եկաւ Աւետ. Հայրն անկողին մէջ գտաւ:

— Հայրիկ ի՞նչ ունիս, ո՞ր կողմդ կը ցաւի, հարցուց անձկութեամբ:

— Հայկական կողմնա կը ցաւի, պատասխանեց չալը:

— Մայրիկ, վարդուհի, չէ՞ք տեսներ, հայրիկը հիւանդ է, հայկական կողմնա կը ցաւի, դարձան չտանի՞ք, դեղ չտա՞ք:

— Ատոր դեղ չկայ, եթէ դուրսիդ փոխէ՛, ցաւն ալ կ'անցնի, պատասխանեց Սիրարփի:

Աւետ մտաւ վարդուհին սենեակը, հօն էին մայրն ու քոյրը:

— Աս ի՞նչ է, հարցուց:

— Հայկական ցաւ է, պատասխանեց քոյրը:

— Դուն ալ կը չարագանցես, վարդուհի, ըսաւ եղ-րայրը. հայրիկը չի սրբեր այդ նկարները, դուն ալ մի՛ բերեր տուն, կամ տեղ մը ծածուկ պահէ: Փարիզի միւս կողմը չանցնի՞ք:

Երեկոյեան շատ ուշ տանն տան դուռը դարձուե-ցաւ. Միհրանն էր, կէս գինով ներս մտաւ, բերանն օրի կը հօտէր, զզեատը քիչ մը պատուած էր, մէկ աչքը սեւ-ցած եւ բերնին մէջ տզեղ բաւեր կային:

— Հասկցուցի այդ սրիկային, ըսաւ ինքնիրեն, խա-ղին մէջ խարդախութիւն ըրաւ, դրամս կ'ուզէր չորթեւ. Կող, աւագակ փորթուգայի:

— Աս ի՞նչ է, տղաս, ըսաւ մայրը. վրադ դուրիդ պատուած, աչքը ուտած: Հայրդ տեսնէ ի՞նչ պիտի ըսէ:

— Պիտի ըսէ թէ թէ զարդացում է, յաւաճադիմութիւն է, փարիզեան է, պատասխանեց Մինաս անկողնի մէջէն:

— Հայրդ չտեսնէ, շուտ դնա՛ փոխուէ՛, երեսդ ը-ւա՛: Անօթի պիտի ըլլաս, պատու մը բան կեր: Աս տունն ալ խենթանոց դարձաւ:

— Եւ կապելիք խենթեր կան, ըսաւ Մինաս անկող-նի մէջէն:

— Հայրս ինձի չի խառնուիր, տղայ չեմ. ես եմ իմ տէրս, պատասխանեց Միհրան: Արդէն որոշած եմ ու-րիշ սենեակ մը վարձել եւ առանձին բնակիլ: Ամէն ե-րեկոյ այդ մարդուն տրտուր չեմ ուզեր լսել:

Ի՞նչ ընէր խելճ Մինասը, վերը թքէէր՝ պիտեղը կային, վարը թքէէր՝ մօրուքը կար. ձգել որ Միհրան տունէն դուրս ցեխէ ցեխ թաւայի՛ սիրտը չէր ուզեր. քօյրը պահել այդ գինով խարամովը՝ տան հիմերը պի-տի քանդէր: Եւ ան անկողնին մէջ սկսաւ հոնքո՛ւր, հոնքո՛ւր լալ:

Մեծ քաղաքները վտանգներ ունին, վա՛յ անոր որ հողիով, մարմնով գինուած չէ: Արեւելքէն եկած ըն-տանիք մը, պապենական սրբութիւններով պաշտպան-ուած, հիմա մարդկութեան ծովին մէջ խնկած էր. ո՛չ մէկը լուրջալ գիտէր. ամէն օր քիչ մ'աւելի կ'ընկզմէին, խկ ինք ոյժ չունէր դանձաք վեր բռնելու: Կ'ուզէր եր-կու թեւեր տալ իր զաւակներուն՝ հայ կրօնքն ու լե-զուն, բայց փարիզ զիշատիչ թուչունի պէս ամէն օր փե-տուր մը վար կը թափէր: Յիշեց Պէյրուսի աղքատիկ տաղաւարը. Միհրան բարի էր եւ թակարդ կը շինէր, ինք ամուսն կը ծախէր. քիչ թէ շատ լաւ կ'ապրէին. աղ-քատ էին բայց հայրենի համեստ հոյը կար տան մէջ: Հիմա ամէն բան այլափոխուած է. սէրը տունէն փո-ղցնէրն ինկած էր. աչքերը հաճոյք կը փնտոտէին. հայ լեզուն կը մեռնէր չըթունքէ չըթունք, եւ սիրտ բեր որ դիմանայ:

Սիրարփի շատ սխալ կը գործէր իր զաւակներու օտարացումին թեւ տալով: Ան երբեք գաղափար չու-նէր ապագայի մասին, օրը օրին կ'ապրէր եւ շուտ կը համարէր նորութիւններով: Իր կեանքը խորք չէ ունե-ցած, եւ Մինասին հակազդեցութիւնները յետամնաց մը-

նորութիւններու պիղծակներով, այս հսկայ խառնարանը կարճեալ թէ՛ Սխիւ չորս, չհնդ փողոցներն են:

Աւետ երկիրդ օրը Միհրանին աշխատանքը դնաց. ան հոն չէր:

— Ո՞ւր է եղբայրս, հարցուց գործատիրոջ:

— Այդ դիմեմո՞ւ եւ խաղամու Մ որը՞ սը կը հարցնես:

